Այստեղ հարավային կողմնադրության լանջերին առավելապես տարածված են մուգ դարչնագույն հողերը: Այս հողերն ունեն փոքր, հազվադեպ միջին հզորություն, և իրենց կառուցվածքով կարելի է դասել գորշ հողերի տիպին:

1.6 Զրագրությունը

Անտառտնտեսության տարածքով հոսող ամենամեծ գետը Հրազդանն է, որը սկիզբ է առնում Սևանա լճից: Երկարությունը 141 կմ է, ավազանը՝ 2560 կմ², խոշոր վտակը՝ Մարմարիկ գետն է, վտակներից է նաև Դալար գետը: Հրազդան գետի ջուրն օգտագործվում է ոռոգման նպատակով, որի հետևանքով գետի բնական ծախսը մշտապես փոփոխվում է՝ կապված Սևանա լճից ջուր բաց թողնելու հետ: Հրազդան գետի վրա կառուցված է էլեկտրակայանների կասկադ՝ Սևանի, Աթարբեկյանի, Գյումուշի, Արզնիի, Քանաքեռի, Երևանի ՀԷԿ-երը:

Մարմարիկ գետը սկիզբ է առնում Փամբակի լեռնաշղթայից, հոսում՝ հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք և Զրառատ գյուղի մոտ միանում Հրազդան գետին: Ունի խառը սնում, հորդանում է գարնանը: Երկարությունը՝ 42կմ, ավազանը՝ 427 կմ²:

Տարածքի մշտական հոսքով գետերից կարելի է նշել Ծաղկաձորը, Արագետը, Զրվեժը:

Աղյուսակ 4. Հրազդան և Մարմարիկ գետերի բնութագիրը

| № | Գետի անվանումը | Ծախսը մ ³ /վ | Տարեկան հոսքը մլն.մ ³ | Հոսքի մոդուլը լ/վ կմ ² | Հոսքի գործակիցը | Հոսքի շերտի բարձրությունը մմ | Տրանսպորտ պիտանելիությունը |
|---|----------------|-------------------------|----------------------------------|-----------------------------------|-----------------|------------------------------|----------------------------|
| 1 | Հրազդան | 22.6 | 714 | 9.78 | 0.47 | 308 | ոչ պիտանի |
| 2 | Մարմարիկ | 5.2 | 164 | 13.4 | 0.57 | 422 | ոչ պիտանի |

Մարմարիկ գետի վերին հոսանքում կառուցվել է Մարմարիկի ջրամբարը: Խոշոր ջրամբարներ են Հրազդանի ջրամբարը և Երևանյան լիճ ջրամբարը:

Տարածքում խոշոր լճեր և ճահճուտներ չկան: Արգելավայրի տարածքը հարուստ է հանքային ջրերով (Հանքավան, Արզնի, Բջնի):

1.7. Կլիման

Անտառտնտեսության տարածքն ընդգրկում է Հայաստանի Հանրապետությունում գոյություն ունեցող 11 ագրոկլիմայական զոնաներից 4-ը՝ չոր-խիստ ցամաքային, չոր ցամաքային, չափավոր ցուրտ անբավարար խոնավությամբ, չափավոր խոնավ:

Կլիման, կախված ուղղաձիգ գոտիականությունից, բազմազան է՝ չոր, չափավոր ցամաքայինից մինչև բարեխառն լեռնային և ցուրտ լեռնային կլիմայական գոտի:

Անտառտնտեսության տարածքի ընդամենը 10%-ն է գտնվում չափավոր չոր և չափավոր ցամաքային կլիմայական գոտիներում, որտեղ բնորոշ են տաք, չոր ամառները և կարճատև ցուրտ ձմեռները: Այս շրջաններում անտառների գոյատևումը հնարավոր է դառնում մեծամասամբ արհեստական ոռոգման շնորհիվ:

Չոր, խիստ ցամաքային կլիման ընդգրկում է Արարատյան գոգավորության մինչև 1000մ բարձրությունները: Ձմեռը ցուրտ է, գերակշռում են սառնամանիքային եղանակները, հունվարին օդի միջին ջերմաստիճանը -4°C է, նվազագույնը՝ -33°C : Հաստատուն ձնածածկույթ առաջանում է ոչ ամեն տարի: Գարունը կարճատև է, մեղմ, ամառը՝ տևական (4-5 ամիս), շոգ, չոր՝ արևոտ եղանակների գերակշռությամբ: Հուլիս-օգոստոսին օդի միջին ջերմաստիճանը 26°C է, առավելագույնը՝ 42°C : Աշունը մեղմ է, տևական, տաք՝ անհողմ եղանակների գերակշռությամբ: Անսառնամանիք ժամանակաշրջանը 230 օր է, 0°C -ից բարձր ջերմաստիճանների գումարը՝ 4600°C , տարեկան տեղումները՝ մինչև 300մմ:

Չոր ցամաքային կլիման ձևավորվում է Արարատյան գոգավորության 1400-1500մ բարձրություններում: Ձմեռը չափավոր ցուրտ է՝ անկայուն ձնածածկույթով: Հունվարին օդի միջին ջերմաստիճանը -4 -ից -5°C է, նվազագույնը՝ -34°C : Գարունը մեղմ է, համեմատաբար՝ խոնավ: Ամառը շոգ է, արևոտ՝ չոր եղանակների գերակշռությամբ, սկսվում է մայիսի սկզբին: Հուլիս-օգոստոսին օդի միջին ջերմաստիճանը 23°C է, առավելագույնը՝ 41°C : Աշունը մեղմ է, արևոտ՝ անհողմ եղանակների գերակշռությամբ: Անսառնամանիք ժամանակաշրջանը 200-220 օր է, 0°C -ից բարձր ջերմաստիճանների գումարը՝ 4300°C , տարեկան տեղումները՝ 350-400 մմ:

Չափավոր-ցամաքային անտառածման շրջանն ընդգրկում է մինչև 1500-1800մ բարձրությունները: Ձմեռը երկարատև է, ձյունառատ, միջին ջերմաստիճանը $-7,4^{\circ}\text{C}$ է: Գարունը բավականին ցուրտ է, վերջին ցրտահարությունները նկատվում են մայիսի սկզբին: Գարնան 3 ամիսների միջին ջերմաստիճանը $5,0^{\circ}\text{C}$ է: Ամառը չափավոր տաք է, երկարատև, բացարձակ առավելագույն ջերմաստիճանը՝ 34°C : Աշունը տաք է, երկարատև: Աշնան առաջին ցրտահարությունները դիտվում են հոկտեմբերի սկզբին:

Չափավոր խոնավ լեռնատափաստանային անտառածման շրջանն ընդգրկում է 1800-2000մ ընկած տարածքները: Տարեկան տեղումների քանակը 600մմ է: Այս շրջանում ձմեռը չափավոր ցուրտ է, միջին ջերմաստիճանը՝ -6°C : Ոչ սառնամանիքային օրերի թիվը 144 է, ձյունառատ օրերի թիվը՝ 131: Կայուն ձնածածկույթ ձևավորվում է դեկտեմբերի սկզբին: Գարունը երկարատև է, չափավոր ցուրտ, ձմեռային եղանակի հաճախակի վերադարձով (մարտը փաստացի համարվում է ձմեռային ամիս): Գարնան 3 ամիսների միջին ջերմաստիճանը $3,3^{\circ}\text{C}$ -ը չի գերազանցում: Ամառը չափավոր շոգ է, կարճատև: Ամռան բացարձակ առավելագույն ջերմաստիճանը չի գերազանցում 32°C -ը:

Մարմարիկ գետի ավազանը հանդիսանում է առանձին անտառածման շրջան և զբաղեցնում է Փամբակի և Ծաղկունյաց լեռնաշղթաների միջև գտնվող տարածքը՝ Մարմարիկ գետի հովիտը:

Կլիման այստեղ բավականին խիստ է և համեմատաբար խոնավ՝ տարվա բոլոր եղանակներին: Տարեկան տեղումների քանակը կազմում է 800մմ: Բացարձակ նվազագույն ջերմաստիճանը իջնում է մինչև -31°C: Օդի տարեկան միջին ջերմաստիճանը 5°C է: Ամռանը տիրապետող են հյուսիսային, տարվա մյուս եղանակներին՝ արևմտյան քամիները: Քամիների միջին արագությունը 3-4մ/վ է: Օդի միջին հարաբերական խոնավությունը 65% է:

Հրազդանի անտառտնտեսության կլիմայական բնութագրի վերաբերյալ առավել ստույգ պատկերացում կազմելու համար ուսումնասիրվել են տարածքին հարակից տարբեր օդերևութաբանական կայանների բազմամյա տվյալները և կլիմայական քարտեզները: Ստորև ներկայացվում է տեղեկատվություն «Երևան անտառապահական»՝ որպես անտառտնտեսության հարավային մասում գտնվող, և «Հրազդան»՝ որպես անտառտնտեսության հյուսիսային մասում գտնվող օդերևութաբանական կայաններից ստացած առավել կարևոր տվյալների վերաբերյալ:

Աղյուսակ 5. Կլիմայական բնութագրերն ըստ Երևան անտառապահական օդերևութաբանական կայանի տվյալների

| Օդի դիտված առավելագույն ջերմաստիճանը (°C) | | | | | | | | | | | | | |
|--|-------|-------|------|-------|------|------|------|------|------|------|------|-------|---------|
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | առավել. |
| 2020 | 11,0 | 14,0 | 20,0 | 24,0 | 32,0 | 35,0 | 40,0 | 35,0 | 36,0 | 27,0 | 25,0 | 9,0 | 40,0 |
| 2021 | 10,0 | 16,0 | 18,0 | 27,0 | 35,0 | 40,0 | 40,0 | 39,0 | 37,0 | 26,0 | 22,0 | 15,0 | 40,0 |
| Օդի դիտված նվազագույն ջերմաստիճանը (°C) | | | | | | | | | | | | | |
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | նվազ. |
| 2020 | -10,0 | -14,0 | 1,0 | 0,0 | 5,0 | 12,0 | 16,0 | 13,0 | 11,0 | 7,0 | -4,0 | -10,0 | -14,0 |
| 2021 | -15,0 | -5,0 | -5,0 | 4,0 | 5,0 | 13,0 | 16,0 | 18,0 | 8,0 | -1,0 | -1,0 | -11,0 | -15,0 |
| Օդի միջին ամսական և տարեկան ջերմաստիճան (°C) | | | | | | | | | | | | | |
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | տարի |
| 2020 | -0,9 | 0,6 | 9,5 | 9,9 | 17,4 | 23,0 | 25,8 | 23,3 | 23,1 | 15,6 | 7,1 | 0,7 | 12,9 |
| 2021 | -4,1 | 3,5 | 5,2 | 15,6 | 19,7 | 25,8 | 26,3 | 27,0 | 21,4 | 12,6 | 7,3 | 1,0 | 13,4 |
| Ամսական և տարեկան տեղումների քանակը (մմ) | | | | | | | | | | | | | |
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | տարի |
| 2020 | 11,6 | 29,2 | 43,6 | 101,3 | 84,3 | 6,9 | 27,1 | 19,7 | 5,1 | 3,5 | 19,8 | 46,2 | 398,3 |
| 2021 | 22,3 | 15,9 | 50,1 | 25,6 | 49,0 | 0,0 | 49,0 | 1,1 | 13,8 | 13,1 | 22,5 | 8,5 | 270,9 |

Աղյուսակ 6. Կլիմայական բնութագրերն ըստ Հրազդան օդերևութաբանական կայանի տվյալների

| Օդի դիտված առավելագույն ջերմաստիճանը (°C) | | | | | | | | | | | | | |
|---|-------|-------|-------|------|------|------|------|------|------|------|-------|-------|---------|
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | առավել. |
| 2020 | 5,5 | 9,0 | 14,5 | 18,0 | 29,0 | 28,0 | 33,0 | 29,0 | 30,0 | 23,0 | 20,0 | 9,0 | 33,0 |
| 2021 | 9,0 | 10,0 | 9,5 | 24,0 | 29,5 | 32,0 | 33,0 | 33,0 | 32,0 | 21,0 | 15,0 | 9,5 | 33,0 |
| Օդի դիտված նվազագույն ջերմաստիճանը (°C) | | | | | | | | | | | | | |
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | նվազ. |
| 2020 | -21,0 | -22,5 | -6,0 | -7,5 | -1,5 | 4,5 | 8,5 | 3,0 | 5,5 | -3,0 | -11,5 | -18,0 | -22,5 |
| 2021 | -25,0 | -14,5 | -14,0 | -2,5 | 0,0 | 5,0 | 10,0 | 10,0 | 0,0 | -8,0 | -7,5 | -20,5 | -25,0 |

| Օդի միջին ամսական և տարեկան ջերմաստիճան (°C) | | | | | | | | | | | | | |
|--|------|------|-------|-------|-------|------|------|------|------|------|------|------|-------|
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | տարի |
| 2020 | -6,3 | -4,5 | 3,5 | 4,4 | 11,7 | 15,8 | 18,3 | 15,8 | 15,6 | 9,0 | 1,6 | -3,4 | 6,8 |
| 2021 | -6,1 | -2,1 | -0,6 | 9,6 | 12,9 | 18,2 | 18,9 | 19,6 | 14,4 | 6,4 | 2,6 | -4,2 | 7,5 |
| Ամսական և տարեկան տեղումների քանակը (մմ) | | | | | | | | | | | | | |
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | տարի |
| 2020 | 15,7 | 71,9 | 35,4 | 151,1 | 114,8 | 58,0 | 65,0 | 49,7 | 9,8 | 25,3 | 30,8 | 30,4 | 657,9 |
| 2021 | 56,1 | 51,9 | 135,3 | 27,9 | 94,8 | 5,5 | 60,6 | 28,8 | 32,1 | 67,1 | 37,6 | 40,4 | 638,1 |

1.8 Բուսական և կենդանական աշխարհը

Շնորհիվ բնակլիմայական ուրույն պայմանների, անտառտնտեսության տարածքն աչքի է ընկնում բուսական համայնապատկերի արտակարգ հարստությամբ: Այստեղ հանդիպում են անոթավոր բույսերին 63 ընտանիքի և 122 ցեղին պատկանող 508 տեսակներ: Բույսերից 3 տեսակ ընդգրկված է Հայաստանի բույսերի Կարմիր գրքում:

Անտառտնտեսության տարածքում լայն տարածում ունեն ուտելի և համեմունքային (32 տեսակ), մեղրատու (44), դեղատու (56), կերային (64) նշանակության տեսակները:

Անտառտնտեսության տարածքում հիմնականում հանդիպում են կաղնի, կաղնի-բոխուտային և խառը ծառուտները: Գերակշռող ծառատեսակներն են արևելյան կաղնին (*Quercus macranthera*), կովկասյան բոխին (*Carpinus Caucasica*), սրապտուղ հացին (*Fraxinus Excelsior*), դաշտային թխկին (*Acar Camrestra*), մանրատերև լորին (*Tilia Cordata*), անտառային կաղամախին (*Populus Tremula*), Լիտվինովի կեչին (*Betula Litwinowil*): Հանդիպում են նաև կովկասյան տանձենին (*Pyrus Caucasica*), տերևաշատ թեղին (*Ulmus Foliacea*), սրատերև թխկի (*Acar Platanoides*) և այլ ծառատեսակներ:

Ենթանտառը թույլ արտահայտված տեսք ունի: Թփատեսակներից հանդիպում են իլենի (*Euonymus L.*), հաղարջենի (*Ribes L.*), չմենի (*Cotoneaster Medic.*), գերիմաստի (*Viburnum Lantana L.*), ծորենի (*Berberis L.*), սապիրակ (*Spiraea L.*), ցախակեռաս (*Lonicera L.*) և այլն:

Գիհու ծառուտները հանդիպում են աղքատ, քարքարոտ հողերի վրա:

Անտառտնտեսության տարածքն աչքի է ընկնում խոտաբույսերի բազմազանությամբ: Տարածված են փետրախոտերը, շյուղախոտերը, հացազգիները:

Թեև Հրազդանի անտառտնտեսության տարածքում գերակշռում են անտառային էկոհամակարգերը, սակայն բազմաթիվ բաց տարածքների առկայությունը ստեղծում է այստեղ ապրելավայրերի զգալի բազմատարրություն, որը ապահովում է անողնաշար կենդանիների բարձր բազմազանությունը: Այսպես, տարածքից հայտնի է գնայուկ բզեզների (*Carabidae*) ավելի քան 60 տեսակ, երկարաբեղիկների (*Cerambycidae*)՝ 76 տեսակ, թերթիկաբեղավորների (*Scarabaeidae*) մոտ 50 տեսակ, ցերեկային թիթեռների (*Lepidoptera-Rhopalocera*) ավելի քան 60 տեսակ:

Բազմաթիվ են նաև Հայաստանի Կարմիր գրքում գրանցված հազվագյուտ տեսակները, որոնցից այստեղ գտնվել է 19 տեսակ:

Արգելավայրի ձկնաշխարհը ներկայացված է Մարմարիկ և Դալար գետերի ավազանում բնակվող հետևյալ ձկնատեսակներով՝ կարմրախայտով (*Salmo trutta fario*), արևելյան տառեխիկով (*Alburnoides eichwaldii*), Քուռի բեղլուով (*Barbus lacerta cyri*), կողակով (*Capoeta sp.*), արծաթափայլ կարասով (*Carassius auratus gibelio*): Կարող են հանդիպել նաև Քուռի սպիտակաձուկը (*Alburnus filippii*), անգորական լերկաձուկը (*Oxydemacheilus angorae*), ինչպես նաև ֆորելային տնտեսություններից ներթափանցող ծիածանախայտը (*Parasalmo mykiss*):

Արգելավայրում հանդիպում են 4 տեսակի երկկենցաղներ՝ կանաչ դոդոշը (*Bufo viridis*), սովորական ծառագորտը (*Hyla arborea chelkownikowi*), լճագորտը (*Pelophilax ridibundus*) և փոքրասիական գորտը (*Rana macrocnemis*):

Բնակավայրերի միջև ընկած հատվածներում ավտոմայրուղու եզրերին, ճանապարհամերձ ժայռերի և շինությունների պատերի վրա հանդիպում են *Darevskia* ցեղի ժայռային մողեսներից հայկական մողեսը, Դալլի մողեսը և ռոստոմբեկովի մողեսը (*Darevskia armeniaca*, *D. dahl*(EN): i, *D. rostombekovi* (EN)):

Թռչուններից Հրազդանի անտառտնտեսության տարածքում հանդիպում է շուրջ 190 տեսակ, որոնցից 130-ը այստեղ բնադրում են: Թռչունների 36 տեսակը գրանցված են Հայաստանի կենդանիների Կարմիր գրքում, որոնցից 11-ը ընդգրկված են նաև Բնության Պահպանության Միջազգային Միության Կարմիր ցուցակում:

Կաթնասունների զգալի մասը բնակվում են լայնատերև անտառներում և հատկապես անտառների բացատներում ու անտառների և մարգագետինների միջև ընկած տարածքներում: Տարածքից ներկայումս հայտնի են մոտ 55 տեսակի կաթնասուններ, որոնցից 9-ը գրանցված են Հայաստանի կենդանիների Կարմիր գրքում:

Կենսաբազմազանության հիմնական վտանգներ: Հիմնական վտանգներ շարունակում են մնալ ապօրինի ծառահատումները, արածեցումը՝ հատկապես համայնքամերձ անտառներում անասունների անարգել մուտքը, բույսերի չհամակարգված հավաքը և արոտավայրերի ոչ ճիշտ կառավարումը:

Անտառային էկոհամակարգերի և կենսաբազմազանության վրա ազդեցություն կարող է ունենալ կլիմայի փոփոխությունը՝ ջերմաստիճանի բարձրացման և խոնավության նվազման միտումները:

Հիմնական վտանգներից է նաև անտառային հրդեհները, որոնք ազդում են թե՛ ուղղակի՝ հատկապես ձվադրման շրջանում, թե՛ անուղղակի՝ բնադրավայրերի ոչնչացման հետևանքով:

Բուսական և կենդանական աշխարհի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկությունը **Բաժին 5-ում**:

Բաժին 2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴԻԿԱՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

2.1. Անտառի կատեգորիաներ

Համաձայն Հրազդանի անտառտնտեսության 1990թ. կառավարման պլանի, անտառտնտեսության անտառներն ունենալով սանիտարահիգիենիկ, ռեկրեացիոն, հողապաշտպան և ջրապահպան բացառիկ կարևոր նշանակություն, տարանջատվել են՝ կանաչ գոտու անտառապարկային անտառներ (16061հա) և հանգստյան գոտիների սանիտարական պահպանության անտառներ (8304հա):

Հրազդանի անտառտնտեսության կառավարման պլանի պատրաստման աշխատանքները իրականացվել են համաձայն սույն ծրագրի տեխնիկական առաջադրանքի՝ հիմք ընդունելով ՀՀ Անտառային օրենսգիրքը (2005) և Անտառային տնտեսությունների կառավարման պլանների պատրաստման հրահանգը, համաձայն որոնց Հայաստանի Հանրապետությունում անտառներն ըստ նպատակային նշանակության դասակարգվում են հետևյալ կատեգորիաների՝

Պաշտպանական նշանակության անտառներ, որոնք են.

- ջրային օբյեկտների ջրապահպան գոտիների անտառները,
- բարձր թեքության (30°-ից ավել) վրա գտնվող անտառները,
- անտառների վերին և ստորին սահմանների 200մ լայնությամբ շերտը,
- բուսաբանական, կենդանաբանական այգիների, դենդրոպարկերի շրջակա անտառները՝ 100 մետր շառավղով,
- կիսաանապատային, տափաստանային, անտառտափաստանային գոտիներում աճող անտառները:

Հատուկ նշանակության անտառներ, որոնք են.

- Բնության հատուկ պահպանվող տարածքներում ընդգրկված անտառները,
- Քաղաքային և քաղաքամերձ անտառները,
- Ռեկրեացիոն և առողջարարական անտառները,
- Սահմանային, ռազմական նշանակության անտառները,
- Պատմական և գիտական արժեք ներկայացնող անտառները,
- Սանիտարական գոտիները պահպանող անտառները:

Արտադրական նշանակության անտառներ, որոնք են

- բնափայտի շարունակական արտադրությունն ապահովող անտառները, որոնք չեն դասվում հատուկ և պաշտպանական նշանակության անտառների շարքին:

2.2. Անտառների գնահատման մեթոդը

Անտառների ընդհանուր գույքագրումն իրականացվել է համաձայն Հայաստանի անտառներում անտառշինության և անտառկառավարման պլանների մշակման հրահանգի, ընտրելով աչքաչափային-չափողական մեթոդը, որը հիմնված է բնականում անտառի աչքաչափային, ընտրողական չափողական և հաշվարկային գնահատման մեթոդների համատեղման վրա, իսկ միջոցառումներ նախատեսվող հատվածներում կիրառվել է հաշվարկային մեթոդը՝ հիմնական շառավղով շրջանաձև հրապարակների տեղադրմամբ:

Անտառի գնահատման բոլոր ցուցանիշները գրանցվել են գնահատման քարտում, որը հանդիսացել է հիմնական դաշտային փաստաթուղթը, ընդ որում այն լրացվել է գնահատման յուրաքանչյուր անտառային հատվածի համար:

Լանջերի բաժանումն ըստ թեքության աստիճանի կատարվել է համաձայն լեռնային պայմաններում հատումների կատարման գործող կանոնների:

Լանջերն ըստ թեքության բաժանվում են հարթ՝ մինչև 10° թեթև զառիվայր, $11-20^\circ$ զառիվայր, $21-30^\circ$, կտրուկ զառիվայր, 30° -ից բարձր խիստ կտրուկ զառիվայր:

Շարահարկերի բաժանումը կատարվել է հետևյալ պայմաններում.

1. յուրաքանչյուր շարահարկի լրիվություն պետք է լինի ոչ պակաս $0,3$,
2. շարահարկների միջին բարձրության տարբերությունը պետք է կազմի ոչ պակաս 20% ,
3. շարահարկի միջին բարձրությունը կազմում է վերին շարահարկի բարձրության ոչ պակաս $1/4$ -ը:

Պարզ ծառուտներում տեսակային կազմը կամ բարդ ծառուտներում շարահարկը որոշվում է տոկոսային հարաբերությամբ անտառկազմող տեսակի պաշարից (անտառի էլեմենտ) և գրանցվում է ֆորմուլայով, որտեղ բերվում են յուրաքանչյուր ծառատեսակի կրճատ նշանակումը և յուրաքանչյուրի մասնակցության բաժինը ծառուտի կազմում՝ արտահայտված գործակցի տեսքով (ամբողջ թվով), որում յուրաքանչյուր միավորը համապատասխանում է 10% մասնակցության չափի ընդհանուր պաշարում:

Ծառատեսակը, որի պաշարը կազմում է մինչև $2-5\%$ ծառուտի ընդհանուր պաշարից (շարահարկ), գրվում է ֆորմուլայի կազմում «+» նշանով:

Միջին տարիքը որոշվել է անտառկազմող յուրաքանչյուր տեսակի համար և գրանցվել գնահատման քարտերում:

Բոնիտետային դասը որոշվել է միջին տարիքով և միջին բարձրությամբ անտառի հիմնական էլեմենտի համար (շարահարկ):

Լրիվությունը որոշվել է առանձին ծառուտի ամեն շարահարկի համար՝ ծառերի տրամագծերի ընդլայնական կտրվածքների ընդհանուր մակերեսների գումարով, կամ շրջանաձև հրապարակներում ծառերի հաշվառման ճանապարհով կամ էլ ժապավենային հաշվառումով:

Բնափայտի 1հա -ի պաշարը որոշվել է անտառի գնահատման ժամանակ ծառուտների առանձին շարահարկերի համար տարածաշրջանի համար ընտրված ծավալային աղյուսակներով:

Անտառի բնական վերածի նկարագրության համար նշվել են. տեսակային կազմը՝ կենսունակ նմուշների ընդհանուր քանակի համեմատությամբ, տարիքը (միջին), միջին բարձրությունը, նմուշների քանակը՝ հազար հատ 1հա -ի հաշվով: Ենթանտառի նկարագրության ժամանակ նշվել են թփերի հիմնական տեսակները և նրանց խտության աստիճանը: Խտության աստիճանը որոշելու համար օգտագործում են հետևյալ չափանիշները՝ խիտ (տարածքի 50% -ից ավել ծածկված), միջին խտության ($10-49\%$ ծածկված) և նոսր (10% -ից պակաս):

Ճանապարհային հասանելիությունը նշվել է յուրաքանչյուր հատվածի համար: Մատչելի համարվում է հատվածը, եթե նրանով անցնում է ճանապարհը կամ հատվածի սահմանից մինչև ճանապարհը պակաս է 200մ-ից: Գոյություն ունեցող բոլոր ճանապարհները պատկերվել են անտառային քարտեզներում:

Հատվածները հաջորդաբար համարակալվել են արաբական թվանշաններով՝ քառակուսու հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելք:

2.3. Անտառտնտեսության հողերի դասակարգում

Հողատեսքերի գույքագրման և գնահատման ժամանակ հիմք է ընդունվել անտառչինության և անտառկառավարման պլանների պատրաստման հրահանգով սահմանված հետևյալ դասակարգումը.

1. Անտառային հողեր - անտառապատ, կենդանական և բուսական աշխարհի պահպանման, բնության պահպանության, ինչպես նաև անտառով չծածկված, բայց անտառային տնտեսության կարիքների համար տրամադրված կամ նախատեսված հողեր: Անտառային հողերին պատկանում են.

- անտառածածկ հողերը,
- ոչ անտառածածկ հողերը,
- չմիակցված սաղարթով անտառմշակույթները,
- անտառային տնկարանները և պլանտացիաները:

2. Անտառածածկ տարածքներին վերագրվում են.

- 0,4 և բարձր լրիվությամբ երիտասարդ տարիքային խմբի ծառուտները,
- մնացած տարիքային խմբերի 0,3 և բարձր լրիվության ծառուտները,
- թփերով պատված հողատեսքերը, որոնցում առանց հատուկ անտառմեխորատիվ աշխատանքների հնարավոր չէ հիմնել անտառ:

3. Ոչ անտառածածկ անտառային հողերին պատկանում են.

- հատված տարածքները,
- անտառվերականգնման համատարած հատման հատատեղերը,
- բացատներ - որտեղ բացակայում կամ առկա են առանձին ծառեր,
- նոսրուտներ - 0,1-0,2 լրիվության ծառուտները (բացի երիտասարդ խումբը),
- հրդեհված - անտառի հատված մինչև աճի դադարեցման աստիճան վնասված,
- մահացած ծառուտներ - անտառամասեր ֆիտո և էնտո ներգործությունից, արտադրական արտանետումներից, ռեկրեացիոն բեռնվածության և այլ գործոնների ազդեցությունից արմատի վրա չորացած, մահացած ծառուտներ, ինչպես նաև համատարած քամատապալ և ձնետապալ անտառամասերը:

Գնահատման ժամանակ առանձնացվում են ոչ անտառային հողերի հետևյալ կատեգորիաները.

- գյուղատնտեսական հողահանդակներ և հատուկ նպատակային նշանակության հողեր, վարելահող, խոտհարքներ, արոտավայրեր, այգիներ, պտղատու տնկարաններ, անտառային ճանապարհներ, անտառուղիներ և հակահրդեհային

- ճեղքեր, էլեկրահաղորդակցության, հեռախոսակապի գծեր, բնակատեղեր, ավազահանքեր, մելորատիվ առուներ և այլն,
- հողեր, որոնք առանց հատուկ մելորատիվ միջոցառումների պիտանի չեն անտառաճեցման համար,
- ժայռեր, քարացրոններ, ճահճուտներ, ոչ անտառաձածկ թեք լանջեր և այլն:

Աղյուսակ 7.9. Գնահատման հատվածների նվազագույն մակերեսը

| № | Հոդատեսքեր | Մակերեսը, հա |
|---|---|--------------|
| 1 | Ստուգման ժամանակաշրջանի անտառմշակույթներ | 0,1 |
| 2 | Բնական ծառուտներ | 0,3 |
| 3 | Ոչ անտառաձածկ տարածքներ | 0,3 |
| 4 | Անտառսերմնային բազաներ | 0,1 |
| 5 | Բնության և մշակութային ժառանգության արժեքավոր օբյեկտներ | 0,1 |
| 6 | Վարելահողեր, այգիներ, ավազուտներ | 0,1 |
| 7 | Խոտհարք, արոտավայր | 0,3 |

2.4. Գույքագրման տվյալների ծրագրային ապահովում

Անտառտնտեսության դաշտային գույքագրման արդյունքները ենթարկվել են Forest Book համակարգչային ծրագրային մշակման, որում տարածաշրջանային անտառաճման պայմաններին համապատասխանեցնելու նպատակով՝ կատարելագործված և ավելացված են նոր մակետներ, ինչպիսիք են՝ ֆլորայի բնութագիրը, մարդածին ձևախախտումը, հողի բնութագիրը, ճանապարհներով ապահովվածությունը և այլն, որից և փոփոխվել է տվյալների բազայի կառուցվածքը, և որ շատ կարևոր է, մշակվել է կապ երկրատեղեկատվական համակարգի (GIS) հետ:

Քարտեզագրական նյութերը համակարգչով մշակվել են՝ օգտագործելով ArcGIS ծրագրային ապահովումը, որը հնարավորություն է ընձեռնում դաշտային գույքագրման նյութերի վրա ստեղծելու բազմանպատակային ԵՏՀ տվյալների բազա, որից և պատրաստվել են թեմատիկ քարտեզներ: Ստեղծված թվայնացված հատվածային քարտեզագրական բազան լրացվում է տեղեկատվությամբ՝ թեմատիկ քարտեզների համար հատվածների բնութագրերի հետ ինչպես EXCEL-ի աղյուսակների կցման ճանապարհով, այպես էլ Forest Book ծրագրային ապահովման բազայից անմիջապես ArcGIS տվյալների բազա ինֆորմացիայի փոխանցմամբ: Ընդ որում, թեմատիկ քարտեզներ հնարավոր է կազմել ցանկացած ցուցանիշի համար, որը առկա է անտառային հատվածային բնութագրերի բազայում: Հատվածների մակերեսները ներմուծվել են գնահատման քարտերի մեջ քարտեզագրական նյութերի թվայնացումից և ArcGIS բազայից համակարգչով հատվածների մակերեսների (կլորացված մինչև տասնորդական) որոշումից հետո:

Տվյալների քարտեզագրական բազան ունի հատվածային բնութագիր, որը հնարավորություն է ընձեռնել պատրաստել թեմատիկ քարտեզներ:

2.5 Քարտեզագրական աշխատանքներ

Հրազդանի անտառտնտեսության անտառների քարտեզագրման համար հիմք են հանդիսացել.

- Հրազդանի անտառտնտեսության նախորդ անտառշինության քարտեզագրական նյութերը,
- 1:10000 մասշտաբի տեղագրական քարտեզները,
- ծրագրի տարածքի արբանյակային պատկերները,
- համայնքների հատակագծերն ու կադաստրային վերջին քարտեզները:

Վերը նշված նյութերը տեղափոխվել են երկրատեղեկատվական համակարգ: Կատարվել է քարտեզների և պլանշետների թվայնացում և դրանց գրանցում աշխարհագրական կոորդինատային ցանցում:

Համայնքների հատակագծերից, կադաստրային քարտեզներից և 1990թ անտառշինական պլան-քարտեզներից վերցվել են անտառային տարածքների ուրվագծերը: Տեղագրական քարտեզները վերցվել են գետային և ճանապարհային ցանցերը, բնակավայրերը, բարձրության իզոգծերը (հորիզոնականներ) և այլ տվյալներ, որոնց միջոցով ճշտվել է անտառային տարածքների որոշ սահմաններ, օրինակ՝ քառակուսիների միջև սահմանները, որոնք անցնում են գետերով կամ ջրաբաժաններով:

Արբանյակային հանույթների օգնությամբ կատարվել է անտառային տարածքի նախնական բաժանում՝ ըստ հատվածների: Ճշտվել են նաև ճանապարհային և գետային ցանցի որոշ տվյալներ, ինչպես նաև անտառային տարածքի արտաքին և ներքին սահմանները:

Համայնքների վարչական տարածքներում անտառային հողերի գույքագրման և գնահատման արդյունքներով բացահայտվել են համայնքների կադաստրային քարտեզներում անտառային հողատեսքերի անճշտությունները, որոնք կազմակերպության կողմից քարտեզագրվել և համաձայնեցվել են համապատասխան համայնքների հետ:

2.6 Արբանյակային պատկերներ

Աշխատանքների իրականացման համար ձեռք են բերվել արբանյակային նկարներ: Օգտագործվել են 0,5մ լուծաչափի պանխրոմատիկ և 2մ լուծաչափի բազմասպեկտրային Jilian-1 (JL1KF01A) արբանյակային պատկերներ (ամպամածությունը 10% -ից ցածր, նկարահանման նադիրային անկյունը 30°-ից ցածր, նախնական մշակվածության 1A մակարդակում) ինչպես նաև ArcGIS Basemap WorldImagery առցանց բաց աղբյուրի արբանյակային նկարները (Աղյուսակ 8):

Աղյուսակ 8. Արբանյակային պատկերների տեսակը և պատկերներով ապահովված մակերեսը

| Անտառապետության անվանումը | Արբանյակային պատկերի տեսակը և որակը | Մակերեսը, հա |
|---------------------------|---|---------------|
| Մեղրածորի | Jilian-1 (JL1KF01A) 0,5մ պանխրոմատիկ Jilian-1 (JL1KF01A) 2մ բազմասպեկտրային Բաց աղբյուր, ArcGis Basemap DigitalGlobe 1մ | 19846 |
| Ծաղկածորի | Jilian-1 (JL1KF01A) 0,5մ պանխրոմատիկ Jilian-1 (JL1KF01A) 2մ բազմասպեկտրային Բաց աղբյուր, ArcGis Basemap DigitalGlobe 1մ | 8951 |
| Արզականի | Jilian-1 (JL1KF01A) 0,5մ պանխրոմատիկ Jilian-1 (JL1KF01A) 2մ բազմասպեկտրային Բաց աղբյուր, ArcGis Basemap DigitalGlobe 1մ | 13543 |
| Բուժականի | Jilian-1 (JL1KF01A) 0,5մ պանխրոմատիկ Jilian-1 (JL1KF01A) 2մ բազմասպեկտրային Բաց աղբյուր, ArcGis Basemap DigitalGlobe 1մ | 9387 |
| Արզնիի | Բաց աղբյուր, ArcGis Basemap DigitalGlobe 1մ | Ամբողջությամբ |
| Երևանի | Բաց աղբյուր, ArcGis Basemap DigitalGlobe 1մ | Ամբողջությամբ |
| Էրեբունու | Բաց աղբյուր, ArcGis Basemap DigitalGlobe 1մ | Ամբողջությամբ |

2.7 Քառակուսիների տեղաբաշխման սխեմա

Անտառտնտեսության տարածքի բաժանումը քառակուսիների կատարվել է հաշվի առնելով տեղանքի աշխարհագրական տարրերը՝ գետեր, ճանապարհներ և այլ գործոններ: Անտառտնտեսության տարածքը բաժանվել է 135 քառակուսիների, ամենափոքր քառակուսու մակերեսը 25հա է (Ծաղկածորի անտառապետություն, քառակուսի 22), իսկ ամենամեծը Մեղրածորի անտառապետությունում՝ 747 հա (քառակուսի 11), միջին մակերեսը 182,4հա: Անտառի գնահատման հատվածների ընդհանուր քանակությունը 5177 է, հատվածների միջին մակերեսը՝ 4,76հա: Նախորդ կառավարման պլանի համեմատ՝ քառակուսիների քանակը նվազել է 26-ով, սակայն հատվածների ընդհանուր թիվն ավելացել է 957-ով, հատվածի միջին մակերեսը 0,17-ով (Աղյուսակ 9, քարտեզ 3)

Աղյուսակ 9. Անտառտնտեսության կազմակերպման հիմնական տարրերը

| Անտառապետության անվանումը | Մակերեսը, հա | Քառակուսիների քանակը, հատ | Հատվածների քանակը, հատ | Հատվածի միջին մակերեսը | |
|---------------------------|--------------|---------------------------|------------------------|------------------------|------|
| Մեղրածոր | 7187 | 19 | 991 | 7,25 | |
| Ծաղկածոր | 4003 | 23 | 1065 | 3,76 | |
| Արզական | 8187 | 61 | 1624 | 5,04 | |
| Բուժական | 1968 | 16 | 380 | 5,18 | |
| Արզնի | 2427 | 9 | 700 | 3,47 | |
| Երևան | 385 | 5 | 246 | 1,57 | |
| Էրեբունի | 468 | 2 | 171 | 2,74 | |
| Ընդամենը | 2022 | 24625 | 135 | 5177 | 4,76 |
| | 1990 | 19365 | 161 | 4220 | 4,59 |

2.8 Կոլեկտիվ ուսուցում

Համաձայն Հայաստանի անտառներում անտառաշինության և անտառկառավարման պլանների պատրաստման հրահանգի, դաշտային գույքագրումից առաջ

կազմակերպվել են անտառի գույքագրման և քարտեզագրման գործնական կոլեկտիվ ուսուցումներ:

Կոլեկտիվ ուսուցումներն իրականացվել են նախօրոք ընտրված ծառուտներում: Ուսուցման նպատակը գույքագրող հիմնական և տեխնիկական անձնակազմին անտառի կոնկրետ գույքագրման տարածքի պայմաններում պահանջվող ճշտությամբ գնահատում իրականացնելուն նախապատրաստելն է, ինչպես նաև յուրաքանչյուր կատարողի մասնագիտական մակարդակի և անտառի գնահատմանը նրա մասնակցության որոշումը և ճիշտ անտառտնտեսական միջոցառումներ նախագծելու հմտություն ուսուցանելը:

Կոլեկտիվ ուսուցումներին մասնակցել են ծրագրի հիմնական և տեխնիկական անձնակազմը, նույն թվում անտառտնտեսության համապատասխան մասնագետները, ինչպես նաև շրջակա համայնքից ներկայացուցիչներ:

Կոլեկտիվ ուսուցումը ներառել է.

- ա) անտառգույքագրման չափումների կատարման հրահանգավորում, շրջանաձև ռելասկոպիկ և հաշվարկային հրապարակներով վարժանքներ, չափագրումների տվյալների օգտագործում՝ ինքնաստուգման համար,
- բ) մասնագետների ծանոթացում համապատասխան իրավական ակտերին,
- գ) ծանոթացում անտառաճման պայմանների և անտառային տիպերի հետ, նրանց փոխկապակցվածությանը ծառուտների տեսակային կազմի, բոնիտետային դասերի և ծառուտների գնահատման այլ ցուցանիշների հետ,
- դ) ծանոթացում ծառուտների, առանձին ծառերի վնասատուներով և հիվանդություններով վարակվածության նշանների հետ,
- ե) ծանոթացում ծառուտների և այլ հողային կատեգորիաների արբանյակային նկարների վերձանմանը, գնահատման հատվածների սահմանների ճշտման և հատվածի ընդհանուր գնահատման բնութագրի գործնական ցուցադրում,
- զ) տեղեկացում դաշտային տեխնիկական փաստաթղթերի ձևակերպման և դրանց լրացման պահանջների մասին:

Ուսուցանվել է նաև մշտական փորձահրապարակների տեղադրման և հաշվարկման մեթոդիկան, և տեղադրվել են մշտական փորձահրապարակներ:

2.9 Անտառկառավարման պլանավորման մասնակցային մոտեցում

Անտառկառավարման պլանավորման մասնակցային մոտեցման հիմնական նպատակը շահագրգիռ խմբերին հնարավորության ընձեռնումն է աջակցելու անտառկառավարման պլանավորման պրոցեսին: Անտառային պաշարների պլանավորման մեջ բազմակողմանի մասնակցային մոտեցումն անտառագիտության ռեֆորմի կարևոր նախապայմաններից է:

Տեղաբնակները կարող են օժանդակել տվյալների հավաքագրմանը, պաշարների վիճակի վերաբերյալ պատմական տվյալների և տեղային կարիքների ու պաշարների օգտագործման ավանդույթների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրմանը:

Մասնակցային մոտեցումն անկասկած կբարձրացնի տեղաբնակների հետաքրքրությունն անտառների պահպանության և պաշարների արդյունավետ օգտագործման գործընթացներում: Մասնակցային պլանավորման մոտեցումը և դրա կիրառումը պետք է հաշվի առնի ազգային սովորույթներն ու ավանդույթները: Ռեսուրսների մասնակցային պլանավորման և կառավարման մեջ ընդհանուր պրոբլեմները որոշվում են համագործակցության միջոցով: Մասնակցային կառավարում նախ և առաջ նշանակում է համագործակցություն կազմակերպության ներսում և պլանավորողների, հասարակության ու հետաքրքրվող կողմերի միջև: Մասնակցային պլանավորման պրոցեսի արդյունավետությունը երաշխավորված է համապատասխան ուսուցման դեպքում:

Ծրագրի շրջանակներում հանդիպումներ են իրականացվել անտառտնտեսության աշխատակիցների և խոշորացված համայնքի բնակիչների հետ, քննարկվել են կառավարման պլանի հիմնական դրույթները, անտառային քարտեզները համադրվել են համանքների կադաստրային քարտեզների հետ, վերհանվել և ճշտվել են առկա անհամապատասխանությունները:



Նկար 1. Կոլեկտիվ ուսուցում

Բաժին 3. ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՈՂԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

3.1 Անտառտնտեսության ընդհանուր հողատեսքերը

Անտառտնտեսության ընդհանուր մակերեսը 24625 հեկտար է, որից անտառային հողերը՝ 22575,5հա, նույն թվում անտառածածկ մակերեսը 16662,9հա (անտառտնտեսության ընդհանուր տարածքի 91,7%-ը, անտառային հողերի 73,8%-ը), Ոչ անտառային հողերի մակերեսը կազմում է 2049,5հա, կամ ընդհանուր տարածքի 8,3%-ը, նույն թվում խոտհարքները 40,9հա, արոտավայրերը՝ 985,2հա (Աղյուսակ 10):

Աղյուսակ 10. Հրազդանի անտառտնտեսության ընդհանուր հողատեսքերի բաշխվածությունը

| № | Հողատեսքը | 2022 | |
|--------|-------------------------------------|---------|-------|
| | | Հա | % |
| 1. | Ընդհանուր | 24625,0 | 100 |
| 2. | Անտառային հողեր, ընդամենը | 22575,5 | 91,68 |
| 2.1. | Անտառածածկ, ընդամենը | 16662,9 | 67,67 |
| 2.1.1. | Այդ թվում անտառմշակույթներ | 1625,3 | |
| 2.2. | Չմիակցված սաղարթով անտառմշակույթներ | 19,4 | 0,08 |
| 2.3. | Անտառային տնկարան | 18,5 | 0,08 |
| 2.4. | Ոչ անտառածածկ, ընդամենն, այդ թվում | 5874,7 | 23,85 |
| 2.4.1 | Նոսրուտներ | 2310,4 | |
| 2.4.2 | Բացատներ և պարապուտ տարածքներ | 3276,4 | |
| 2.4.3 | Հրդեհված, մահացած տնկարք | 287,9 | |
| 3. | Ոչ անտառային հողեր | 2049,5 | 8,32 |
| 3.1 | Վարելահող | 19,2 | |
| 3.2 | Խոտհարք | 40,9 | |
| 3.3 | Արոտավայր | 985,2 | |
| 3.4 | Այգի | 120,3 | |
| 3.5 | Ջրային օբյեկտներ | 4,2 | |
| 3.6 | Ճանապարհներ | 16,6 | |
| 3.7 | Այլ հողեր | 863,1 | |

3.2. Անտառտնտեսության ընդհանուր տարածքի բաժանումն ըստ հիմնական նպատակային նշանակության և հողատեսքերի

Պաշտպանական նշանակության հողատեսքերի ընդհանուր մակերեսը զբաղեցնում է ամբողջ տարածքի 16,1%-ը (3986,5 հա), որից անտառածածկը՝ 1432,6հա է, նույն թվում անտառմշակույթները՝ 791,4հա: Հրդեհված, հատված և չվերականգնված անտառային տարածքները զբաղեցնում են՝ 206,9հա, անտառային բացատները և բաց (պարապուտ) տարածքները՝ 1552,7հա, նոսրուտները՝ 371,3հա: Ոչ անտառային հողերը զբաղեցնում են 423,0հա (ընդհանուր ոչ անտառային հողերի 20,6%-ը):

Հատուկ նշանակության հողատեսքերը բացարձակ գերակշռում են և զբաղեցնում են 19181,0հա (77,9%), որից անտառածածկ մակերեսը՝ 13772,8հա, նույն թվում անտառմշակույթները՝ 808,3հա, չմիակցված սաղարթով անտառմշակույթները՝ 19,4հա: Հրդեհված, հատված և չվերականգնված անտառային տարածքները

զբաղեցնում են 81,0հա, անտառային բացատները և բաց տարածքները՝ 1723,7հա, նոսրուտները՝ 1939,1հա: Ոչ անտառային հողերը զբաղեցնում են 1626,5հա (79,4%-ը):

Արտադրական նշանակության ընդհանուր հողատեսքերը զբաղեցնում են ընդամենը 1457,5հա (6,0%), ամբողջությամբ անտառածածկ:

Անտառտնտեսության ընդհանուր հողատեսքերում անտառածածկ մակերեսը 16662,9հա է, որից 1625,3 հեկտարն է միակցված սաղարթով անտառմշակույթ (9,8%), հրդեհված, համատարած հատված և չվերականգնված մակերեսը՝ 287,9հա, անտառային բացատները և պարապուտները՝ 3276,4հա, նոսրուտները՝ 2310,4հա:

Ոչ անտառային հողերի մակերեսը կազմում է 2049,5հա:

Անտառտնտեսության և անտառապետությունների անտառային հողերի մակերեսների բաշխվածությունն ըստ հիմնական նպատակային նշանակության կատեգորիաների և հողատեսքերի տրված է աղյուսակ 11-ում, պատկերված՝ քարտեզ 4-ում, իսկ անտառի կատեգորիաներն ըստ անտառապետությունների նշված է աղյուսակ 12-ում:

Աղյուսակ 11. Հրազդանի անտառտնտեսության անտառային հողատեսքերի բաշխվածությունն ըստ հիմնական նպատակային նշանակության

| № | Հողատեսք | Կատեգորիա | Մակերեսը, հա |
|-----|---|---------------------|--------------|
| 1 | Ընդհանուր մակերեսը | Արտադրական | 1457,5 |
| | | Պաշտպանական | 3563,5 |
| | | Հատուկ նշանակության | 17554,5 |
| | | Ընդամենը | 22575,5 |
| 2 | Անտառածածկ մակերեսը | Արտադրական | 1457,5 |
| | | Պաշտպանական | 1432,6 |
| | | Հատուկ նշանակության | 13772,8 |
| | | Ընդամենը | 16662,9 |
| 2.1 | Այդ թվում անտառմշակույթներ | Արտադրական | 25,6 |
| | | Պաշտպանական | 791,4 |
| | | Հատուկ նշանակության | 808,3 |
| | | Ընդամենը | 1625,3 |
| 3 | Չմիակցված անտառմշակույթներ | Հատուկ նշանակության | 19,4 |
| 4 | Անտառային տնկարան և ջերմոց | Հատուկ նշանակության | 18,5 |
| 5 | Ոչ անտառածածկ | Պաշտպանական | 2130,9 |
| | | Հատուկ նշանակության | 3743,8 |
| | | Ընդամենը | 5874,7 |
| 5.1 | Հրդեհված, մահացած, հատված և չվերականգնված | Պաշտպանական | 206,9 |
| | | Հատուկ նշանակության | 81,0 |
| | | Ընդամենը | 287,9 |
| 5.2 | Բացատներ և պարապուտ տարածքներ | Պաշտպանական | 1552,7 |
| | | Հատուկ նշանակության | 1723,7 |
| | | Ընդամենը | 3276,4 |
| 5.3 | Նոսրուտներ | Պաշտպանական | 371,3 |
| | | Հատուկ նշանակության | 1939,1 |
| | | Ընդամենը | 2310,4 |

Աղյուսակ 12. Հրազդանի անտառտնտեսության անտառային հողատեսքերի բաշխվածությունը ըստ հիմնական նպատակային նշանակության և անտառպետությունների

| № | Անտառպետություն | Նպատակային նշանակությունը / մակերեսը, հա | | | | | | Ընդամենը | |
|---|-----------------|--|---------------------|--------------------|---------------------|--------------------|---------------------|--------------------|---------------------|
| | | Արտադրական | | Պաշտպանական | | Հատուկ | | Ընդհանուր մակերեսը | Անտառածածկ մակերեսը |
| | | Ընդհանուր մակերեսը | Անտառածածկ մակերեսը | Ընդհանուր մակերեսը | Անտառածածկ մակերեսը | Ընդհանուր մակերեսը | Անտառածածկ մակերեսը | | |
| 1 | Մեղրածոր | | | | | 6796,7 | 5508,0 | 6796,7 | 5508,0 |
| 2 | Ծաղկածոր | 396,6 | 396,6 | 484,0 | 296,6 | 2988,4 | 2477,6 | 3869,0 | 3170,8 |
| 3 | Արզական | | | 138,0 | 132,8 | 7261,4 | 5673,1 | 7399,4 | 5805,9 |
| 4 | Բուժական | 1060,9 | 1060,9 | 904,2 | 427,5 | | | 1965,1 | 1488,4 |
| 5 | Արզնի | | | 2037,3 | 575,7 | | | 2037,3 | 575,7 |
| 6 | Երևան | | | | | 206,0 | 75,6 | 206,0 | 75,6 |
| 7 | Էրեւունի | | | | | 302,0 | 38,5 | 302,0 | 38,5 |
| | Ընդամենը | 1457,5 | 1457,5 | 3563,5 | 1432,6 | 17554,5 | 13772,8 | 22575,5 | 16662,9 |

3.3. Անտառածածկ մակերեսի և պաշարի բաշխվածությունը ըստ անտառկազմող ծառաթփատեսակների

Անտառտնտեսությունում հիմնական անտառկազմող տեսակներն են խոշորատէջ կաղնին, որի գերակշռությամբ ծառուտները զբաղեցնում են 12587,8հա՝ 910261խտմ³ ընդհանուր պաշարով, կամ անտառածածկ մակերեսի 75,5%-ը և ընդհանուր պաշարի 74,7%-ը, ընդ որում 1990թ. համեմատությամբ մակերեսը ավելացել է 3072,8 հեկտարով, իսկ ընդհանուր պաշարը՝ 96061խտմ³-ով, բոխու գերակշռությամբ ծառուտները զբաղեցնում են 986,1հա, ընդհանուր պաշարը 68649խտմ³ (անտառածածկի 5,9%-ը և պաշարի 5,7%-ը), 1990թ. համեմատությամբ զբաղեցրած մակերեսը ավելացել է 644,1 հեկտարով, ընդհանուր պաշարը 31749խտմ³-ով, սոճուտները՝ 720,6հա, 83142խտմ³ (անտառածածկ տարածքի 4,3%-ը և պաշարի 6,8%-ը), 1990թ. համեմատությամբ ընդհանուր մակերեսը նվազել է 413,4 հեկտարով, ընդհանուր պաշարը ավելացել է 28357խտմ³-ով և մնացած տեսակները միասին կազմում են անտառածածկի 14,3%-ը և ընդհանուր պաշարի 12,8%-ը (Աղյուսակ 13, քարտեզ 5):

Աղյուսակ 13. Անտառածածկ մակերեսի և պաշարի բաշխվածությունն ըստ անտառկազմող ծառատեսակների

| № | Գերակշռող ծառատեսակը | 1990 | | 2022 | |
|---|----------------------|--------------|--------------------------|--------------|-------------------------|
| | | մակերեսը, հա | պաշարը, խտմ ³ | մակերեսը, հա | պաշար, խտմ ³ |
| 1 | Սոճի | 1134 | 54785 | 720,6 | 83142 |
| 2 | Կաղնի | 44 | 1800 | 3535,2 | 373924 |
| 3 | Կաղնի ցածրաբուն | 9471 | 812400 | 9052,6 | 536337 |
| 4 | Բոխի | 342 | 36900 | 114,1 | 12919 |
| 5 | Բոխի ցածրաբուն | | | 872,0 | 55730 |

| № | Գերակշռող ծառատեսակը | 1990 | | 2022 | |
|-----------------|----------------------|--------------|--------------------------|--------------|-------------------------|
| | | մակերեսը, հա | պաշարը, խտմ ³ | մակերեսը, հա | պաշար, խտմ ³ |
| 6 | Հացենի | 136 | 5600 | 124,8 | 4087 |
| 7 | Թխկի | 8 | 300 | 25,9 | 1438 |
| 8 | Թեղի | 141 | 15400 | 111,8 | 5493 |
| 9 | Ակացիա սպիտակ | 30 | 600 | 30,2 | 1806 |
| 10 | Կեչի | 599 | 47400 | 651,3 | 46709 |
| 11 | Կաղամախի | 24 | 900 | 68,0 | 9957 |
| 12 | Լորենի | 637 | 106700 | 323,8 | 60706 |
| 13 | Բարդի | 4 | 100 | 91,0 | 12231 |
| 14 | Ուտենի ծառ | 1 | 100 | 36,0 | 1778 |
| 15 | Ծիրանենի | | | 2,7 | 29 |
| 16 | Գլեղիչիա | | | 0,1 | 4 |
| 17 | Տանձենի | 4 | 100 | 15,6 | 651 |
| 18 | Փռչնի | | | 4,4 | 71 |
| 19 | Նշենի | | | 431,3 | 2713 |
| 20 | Հունական ընկուզենի | | | 1,0 | 73 |
| 21 | Արոսենի | | | 36,3 | 806 |
| 22 | Խնձորենի | 23 | 200 | 51,2 | 740 |
| 23 | Բալենի | | | 9,4 | 299 |
| 24 | Սալորենի | | | 0,1 | 4 |
| 25 | Տույա | | | 0,4 | 6 |
| 26 | Սզնի | | | 3,5 | 34 |
| 27 | Փշատենի | | | 0,5 | 24 |
| 28 | Գիհի | 60 | 600 | 288,9 | 6189 |
| 29 | Ակացիա դեղին | 5 | 100 | 4,7 | 73 |
| 30 | Դրախտածառ | | | 52,7 | 691 |
| 31 | Հուդայածառ | | | 0,4 | 8 |
| 32 | Այլանթ | | | 2,1 | 139 |
| 33 | Սոսի | | | 0,3 | 12 |
| 34 | Ասպիրակ | 34 | 800 | | |
| Ընդամենը | | 12697 | 1058900 | 16662,9 | 1218823 |

Անտառտնտեսությունում անտառները տեղաբաշխված են ծովի մակերևույթից 900-2500մ բարձրությունների վրա, ընդ որում մինչև 1200մ բարձրության վրա գտնվում է ընդամենը 141,5հա մակերես, 6757խտմ³ ընդհանուր պաշարով (ընդհանուր անտառածածկ տարածքի 0,8% և պաշարի 0,6%), 1201-1600մ բարձրությունների վրա՝ 260,5հա, 2828խտմ³ ընդհանուր պաշարով (1,6% և 0,2%), 1601-1800մ՝ 1140,1հա, 60901խտմ³ ընդհանուր պաշարով (6,9% և 5,0%), 1801-2000մ՝ 4540,7հա, 353823խտմ³, համապատասխանաբար 27,3% և 29,1%, 2001-2200մ՝ 7667,0հա, 566122խտմ³, (46,0% և 46,4%), և 2200մ-ից բարձր՝ անտառածածկի 17,4%-ը, ընդհանուր պաշարի 18,7%-ը (Աղյուսակ 14, քարտեզ 6):

Աղյուսակ 14. Անտառածածկ մակերեսի և ընդհանուր պաշարի բաշխվածությունն ըստ ծովի մակերևույթից բարձրության

| Անտառակետություն | Անտառածածկը, հա Պաշարը, մ ³ | Ծովի մակերևույթից բարձրությունը, մետր | | | | | | |
|-------------------|---|---------------------------------------|--------------|--------------|---------------|---------------|---------------|-------------------|
| | | 801-1200 | 1201-1400 | 1401-1600 | 1601-1800 | 1801-2000 | 2001-2200 | 2201 մետրից բարձր |
| Մեղրաձոր | 5508 | 1,0 | | | 6,4 | 1202,2 | 3277,7 | 1020,7 |
| | 447539 | 42 | | | 940 | 122710 | 240006 | 83841 |
| Ծաղկաձոր | 3170,8 | 19,2 | | | 181,7 | 1234,5 | 1471,1 | 264,3 |
| | 222338 | 2380 | | | 13628 | 90197 | 99744 | 16390 |
| Արզական | 5805,9 | | | 6,2 | 655,1 | 1650,9 | 2224 | 1269,7 |
| | 456136 | | | 519 | 40584 | 119472 | 188328 | 107233 |
| Բուժական | 1488,4 | | | | 15,5 | 420,3 | 694,2 | 358,4 |
| | 80431 | | | | 570 | 20889 | 38044 | 20928 |
| Արզնի | 575,7 | 7,2 | 129,1 | 125,2 | 281,4 | 32,8 | | |
| | 8367 | 323 | 1047 | 1262 | 5179 | 555 | | |
| Երևան | 75,6 | 75,6 | | | | | | |
| | 3491 | 3491 | | | | | | |
| Էրեբունի | 38,5 | 38,5 | | | | | | |
| | 521 | 521 | | | | | | |
| Անտառտնտեսություն | 16662,9 | 141,5 | 129,1 | 131,4 | 1140,1 | 4540,7 | 7667 | 2913,1 |
| | 1218823 | 6757 | 1047 | 1781 | 60901 | 353823 | 566122 | 228392 |

Հյուսիսային կողմնադրությունների լանջերին տեղաբաշխված են անտառածածկ մակերեսի 61,2%-ը (10205,7հա), հարավային կողմնադրությունների լանջերին՝ 38,8%-ը (6457,2հա) (Աղյուսակ 15, քարտեզ 7):

Աղյուսակ 15. Անտառածածկ մակերեսի և ընդհանուր պաշարի բաշխվածությունն ըստ կողմնադրության

| Կողմնադրություն | Անտառածածկ մակերեսը, հա | Ընդհանուր պաշարը խտմ ³ | 1 հեկտարի միջին պաշարը |
|------------------|-------------------------|-----------------------------------|------------------------|
| Հյուսիսային | 1509,6 | 130404 | 86,4 |
| Հյուսիս-արևելյան | 4053,0 | 329024 | 81,2 |
| Հյուսիս-արևմտյան | 2886,3 | 254101 | 88,0 |
| Հարավային | 981,6 | 51486 | 52,5 |
| Հարավ-արևմտյան | 1921,4 | 111465 | 58,0 |
| Հարավ-արևելյան | 2533,6 | 145893 | 57,6 |
| Արևելյան | 1756,8 | 126922 | 72,2 |
| Արևմտյան | 1020,6 | 69528 | 68,1 |
| Ամբողջը | 16662,9 | 1218823 | 73,1 |

Անտառածածկ մակերեսի 5,8%-ը (974,9հա) և ընդհանուր պաշարի 3,9%-ը (47854խտմ³) տեղաբաշխված է մինչև 10° թեքությունների վրա, 11-20° թեքությունների վրա՝ համապատասխանաբար 14,3% (2364,1հա) և 11,1% (133528խտմ³) 21-30°

թեքությունների վրա՝ 30,8% (5146,5հա) և 30,8% (375921խտմ³), 31°-ից բարձր՝ 49,1% (8177,4հա) և 54,2% (661520խտմ³) (Աղյուսակ 16, քարտեզ 8):

Աղյուսակ 16. Անտառածածկ մակերեսի և ընդհանուր պաշարի բաշխվածությունն ըստ լանջերի թեքությունների

| Լանջի թեքության աստիճանը | Անտառածածկ մակերեսը, հա | Պաշարը, խտմ ³ |
|--------------------------|-------------------------|--------------------------|
| մինչև 5° | 435,2 | 24263 |
| 6-10° | 539,7 | 23591 |
| 11-15° | 918,0 | 42413 |
| 16-20° | 1446,1 | 91115 |
| 21-25° | 2295,7 | 158513 |
| 26-30° | 2850,8 | 217408 |
| 31-35° | 7568,3 | 612559 |
| 36-40° | 598,2 | 48590 |
| 41°-ից բարձր | 10,9 | 371 |
| Ընդամենը | 16662,9 | 1218823 |

3.4. Անտառածածկ մակերեսի բաշխվածությունն ըստ տարիքային խմբերի

Անտառտնտեսությունում անտառածածկ մակերեսի և պաշարի հետևյալ բաշխվածությունն է ըստ տարիքային խմբերի: Երիտասարդ տարիքային խմբի ծառուտները (I և II հասակային դասեր) զբաղեցնում են 453,9հա, 19033խտմ³ պաշարով (անտառածածկի ընդամենը 2,7% և պաշարի 1,6%-ը), միջին տարիքի ծառուտները, որոնք բացարձակ գերակշռում են, զբաղեցնում են 13950,4հա, 1078037խտմ³ պաշարով (համապատասխանաբար 83,7% և 88,4%):

Հասունացող ծառուտները զբաղեցնում են 890,7հա (5,3%), 63117խտմ³ (5,2%), իսկ հասուն և գերհասուն ծառուտները միասին՝ 1367,9հա (8,3%) և 58636խտմ³ (4,8%): (Աղյուսակ 17, քարտեզ 9):

Աղյուսակ 17. Անտառածածկ տարածքի և պաշարի բաշխվածությունն ըստ տարիքային խմբերի

| № | Գերակշռող ծառատեսակը | Մակերեսը, հա | | | | | | | Պաշարը, խտմ ³ | | | | | | | Միջին տարիքը |
|----|----------------------|-------------------------|--------------------------------|------|--------------|------------|------------------------------------|--------------------------------|--------------------------|-----------|--------|--------------|------------|--------------------|---------------------|--------------|
| | | Անտառածածկ մակերեսը, հա | այդ թվում ըստ տարիքային խմբերի | | | | Ընդհանուր պաշարը, խտմ ³ | այդ թվում ըստ տարիքային խմբերի | | | | | | | | |
| | | | երիտասարդ | | միջին տարիքի | հասունացող | | հասուն և գերհասուն | | երիտասարդ | | միջին տարիքի | հասունացող | հասուն և գերհասուն | | |
| | | | 1 | 2 | | | | ընդամենը | այդ թվում գերհասուն | 1 | 2 | | | ընդամենը | այդ թվում գերհասուն | |
| 1 | Սոճի | 720,6 | 4,7 | 93,7 | 622,2 | | | 83142 | 96 | 7516 | 75531 | | | 53 | | |
| 2 | Կաղնի | 3535,2 | | 60,8 | 3474,4 | | | 373924 | | 1952 | 370472 | | | 78 | | |
| 3 | Կաղնի ցածրաբուն | 9052,6 | | | 7401,7 | 846 | 804,9 | 536337 | | | 427984 | 59514 | 48839 | 12347 | 57 | |
| 4 | Բոխի | 114,1 | | 35,2 | 78,9 | | | 12919 | | 2693 | 10226 | | | 59 | | |
| 5 | Բոխի ցածրաբուն | 872 | | | 872 | | | 55730 | | | 55730 | | | 37 | | |
| 6 | Հացենի | 124,8 | 3,2 | 97,3 | 24,3 | | | 4087 | 5 | 2544 | 1538 | | | 35 | | |
| 7 | Թխկի | 25,9 | 5,7 | 2,8 | 17,4 | | | 1438 | 29 | 60 | 1349 | | | 70 | | |
| 8 | Թեղի | 111,8 | 4 | 45,6 | 62,2 | | | 5493 | 63 | 1617 | 3812 | | | 50 | | |
| 9 | Ակացիա սպիտակ | 30,2 | 0,7 | 18,9 | 10,6 | | | 1806 | 11 | 877 | 918 | | | 40 | | |
| 10 | Կեչի | 651,3 | | 0,4 | 630,9 | 20 | | 46709 | | 6 | 44628 | 2075 | | 59 | | |
| 11 | Կաղամախի | 68 | | | 47,3 | 2,8 | 17,9 | 9957 | | | 6954 | 243 | 2760 | 51 | | |
| 12 | Լորենի | 323,8 | | | 323,8 | | | 60706 | | | 60706 | | | 74 | | |
| 13 | Բարդի | 91 | | 0,3 | 58,2 | 11,4 | 21,1 | 12231 | | 10 | 8776 | 1080 | 2365 | 54 | | |
| 14 | Ուռենի ծառ | 36 | | | 27,2 | 1,6 | 7,2 | 1778 | | | 1224 | 90 | 464 | 40 | | |
| 15 | Ծիրանենի | 2,7 | | 1,6 | 1,1 | | | 29 | | 13 | 16 | | | 43 | | |
| 16 | Գլեղիչիա | 0,1 | | 0,1 | | | | 4 | | 4 | | | | 25 | | |
| 17 | Տանձենի | 15,6 | | 13,5 | 2,1 | | | 651 | | 504 | 147 | | | 37 | | |
| 18 | Փռչնի | 4,4 | | 3,4 | 1 | | | 71 | | 53 | 18 | | | 40 | | |
| 19 | Նշենի | 431,3 | | | 2 | 1,2 | 428,1 | 166,2 | 2713 | | 11 | 5 | 2697 | 1431 | 42 | |
| 20 | Հունական ընկուզենի | 1 | 0,1 | | 0,9 | | | 73 | 1 | | 72 | | | 97 | | |
| 21 | Արոսենի | 36,3 | | | | | 36,3 | 3,9 | 806 | | | | 806 | 78 | 37 | |
| 22 | Խնձորենի | 51,2 | 4,9 | 41,7 | 4,6 | | | 740 | 16 | 615 | 109 | | | 36 | | |
| 23 | Բալենի | 9,4 | | 9,4 | | | | 299 | | 299 | | | | 31 | | |
| 24 | Սալորենի | 0,1 | | | 0,1 | | | 4 | | | 4 | | | 35 | | |

| № | Գերակշռող ծառատեսակը | Մակերեսը, հա | | | | | | | Պաշարը, խտմ ³ | | | | | | | Միջին տարիքը |
|---------------------|----------------------|-------------------------|--------------------------------|--------------|----------------|--------------|--------------------|------------------------------------|--------------------------------|------------|--------------|----------------|--------------------|--------------|---------------------|--------------|
| | | Անտառածածկ մակերեսը, հա | այդ թվում ըստ տարիքային խմբերի | | | | | Ընդհանուր պաշարը, խտմ ³ | այդ թվում ըստ տարիքային խմբերի | | | | | | | |
| | | | երիտասարդ | | միջին տարիքի | հասունացող | հասուն և գերհասուն | | երիտասարդ | | միջին տարիքի | հասունացող | հասուն և գերհասուն | | | |
| | | | 1 | 2 | | | ընդամենը | | այդ թվում գերհասուն | 1 | | | 2 | ընդամենը | այդ թվում գերհասուն | |
| 25 | Տույա | 0,4 | | 0,4 | | | | | 6 | | 6 | | | | | 30 |
| 26 | Ազնի | 3,5 | | | 1,2 | 2,3 | | | 34 | | | 9 | 25 | | | 25 |
| 27 | Փշատենի | 0,5 | | | | | 0,5 | 0,3 | 24 | | | | | 24 | 23 | 54 |
| 28 | Գիհի | 288,9 | | 5,2 | 283,7 | | | | 6189 | | 36 | 6153 | | | | 66 |
| 29 | Ակացիա դեղին | 4,7 | | | | 1,7 | 3 | | 73 | | | | 26 | 47 | | 31 |
| 30 | Դրախտածառ | 52,7 | | | 0,5 | 3,7 | 48,5 | | 691 | | | 6 | 59 | 626 | | 33 |
| 31 | Հուդայածառ | 0,4 | | | | | 0,4 | | 8 | | | | | 8 | | 30 |
| 32 | Այլանթ | 2,1 | | 0,1 | 2 | | | | 139 | | 2 | 137 | | | | 31 |
| 33 | Սոսի | 0,3 | | 0,2 | 0,1 | | | | 12 | | 5 | 7 | | | | 48 |
| Անտառոտնտեսություն | | 16662,9 | 23,3 | 430,6 | 13950,4 | 890,7 | 1367,9 | 347,5 | 1218823 | 221 | 18812 | 1078037 | 63117 | 58636 | 13879 | 58 |
| Անտառապետություններ | | | | | | | | | | | | | | | | |
| 1 | Մեղրածոր | 5508 | 4,5 | 78,8 | 5343,3 | 53,6 | 27,8 | | 447539 | 89 | 6270 | 432680 | 5522 | 2978 | | 57 |
| 2 | Ծաղկածոր | 3170,8 | 0,2 | 117,9 | 2989,5 | 21,7 | 41,5 | | 222338 | 2 | 4703 | 213901 | 1343 | 2389 | | 56 |
| 3 | Արզական | 5805,9 | 3,9 | 124,3 | 5134,8 | 521,1 | 21,8 | 3,9 | 456136 | 16 | 5806 | 410295 | 39100 | 919 | 78 | 72 |
| 4 | Բուժական | 1488,4 | 1,6 | 3,2 | 409,2 | 285,1 | 789,3 | 177,1 | 80431 | 6 | 188 | 15270 | 16937 | 48030 | 12347 | 69 |
| 5 | Արզնի | 575,7 | 6,1 | 51,2 | 45,3 | 3,2 | 469,9 | 166,2 | 8367 | 33 | 715 | 3821 | 131 | 3667 | 1431 | 48 |
| 6 | Երևան | 75,6 | 3,5 | 36,9 | 23,4 | 6 | 5,8 | 0,3 | 3491 | 63 | 956 | 1897 | 84 | 491 | 23 | 56 |
| 7 | Էրեւնուհի | 38,5 | 3,5 | 18,3 | 4,9 | | 11,8 | | 521 | 12 | 174 | 173 | | 162 | | 41 |

3.5. Անտառածածկ մակերեսի բաշխվածությունն ըստ լանջի թեքության և տարիքային խմբերի

Անտառածածկ տարածքի ընդամենը 5,9%-ը (974,9հա) և պաշարի 3,9%-ը (47854խտմ³) գտնվում են հարթ՝ մինչև 10° թեքությունների վրա, 11-20° թեքությունների վրա՝ 2364,1հա մակերես (14,2%) և 133528խտմ³ պաշար (11,0%), 31°-ից բարձր թեքություններում տեղաբաշխված են 8177,4հա անտառներ՝ 661520խտմ³ ընդհանուր պաշարով (համապատասխանաբար 49,1% և 54,3%), իսկ 21-30° թեքությունների վրա՝ 5146,5հա մակերես (30,8%) և 375921խտմ³ պաշար (30,9%):

Անտառտնտեսության երիտասարդ և միջին տարիքային խմբերի ծառուտների մակերեսների 40%-ը (6679,0հա) գտնվում են մինչև 30° թեքությունների վրա, որոնցում հիմնականում համապատասխան հատվածներում նախատեսվել են խնամքի հատումները (Աղյուսակ 18):

Աղյուսակ 18. Անտառածածկ ընդհանուր մակերեսի և պաշարի բաշխվածությունն ըստ լանջի թեքության աստիճանի և տարիքային խմբերի

| Լանջի թեքության աստիճանը, ° | անտառածածկ մակերեսը, հա | պաշարը, խտմ ³ | Տարիքային խումբ | | | | | | | | | |
|-----------------------------|-------------------------|--------------------------|-------------------------|--------------------------|-------------------------|-------------------------|-------------------------|--------------------------|-------------------------|--------------------------|-------------------------|--------------------------|
| | | | երիտասարդ | | միջին տարիքային | | հասունացող | | հասուն | | զերհասուն | |
| | | | անտառածածկ մակերեսը, հա | պաշարը, խտմ ³ | անտառածածկ մակերեսը, հա | պաշարը խտմ ³ | անտառածածկ մակերեսը, հա | պաշարը, խտմ ³ | անտառածածկ մակերեսը, հա | պաշարը, խտմ ³ | անտառածածկ մակերեսը, հա | պաշարը, խտմ ³ |
| մինչև 5 | 435,2 | 24263 | 142 | 3482 | 168,6 | 16838 | 19,9 | 1364 | 87,7 | 2454 | 17 | 125 |
| 6-10 | 539,7 | 23591 | 36,6 | 1125 | 234,4 | 16287 | 25,6 | 1634 | 183,5 | 3827 | 59,6 | 719 |
| 11-15 | 918 | 42413 | 48,7 | 1396 | 393,3 | 19827 | 74,6 | 4251 | 296,7 | 13517 | 104,7 | 3421 |
| 16-20 | 1446,1 | 91115 | 73,6 | 3749 | 946 | 64863 | 102 | 6510 | 204 | 9393 | 120,5 | 6600 |
| 21-25 | 2295,7 | 158513 | 39,6 | 2547 | 1961,5 | 137807 | 138 | 8934 | 115,2 | 6590 | 41,4 | 2635 |
| 26-30 | 2850,8 | 217408 | 41,6 | 2086 | 2593,1 | 197929 | 137,8 | 11035 | 74 | 5980 | 4,3 | 379 |
| 31-35 | 7568,3 | 612559 | 64,5 | 3765 | 7093,1 | 579566 | 354,8 | 26544 | 55,9 | 2684 | | |
| 36-40 | 598,2 | 48590 | 7,3 | 883 | 549,5 | 44549 | 38 | 2845 | 3,4 | 312 | | |
| 41-ից բարձր | 10,9 | 371 | | | 10,9 | 371 | | | | | | |
| Անտառտնտեսություն | 16662,9 | 1218823 | 453,9 | 19033 | 13950,4 | 1078037 | 890,7 | 63117 | 1020,4 | 44757 | 347,5 | 13879 |
| Մեղրածոր | 5508 | 447539 | 83,3 | 6359 | 5343,3 | 432680 | 53,6 | 5522 | 27,8 | 2978 | | |
| Ծաղկածոր | 3170,8 | 222338 | 118,1 | 4705 | 2989,5 | 213901 | 21,7 | 1343 | 41,5 | 2389 | | |
| Արգական | 5805,9 | 456136 | 128,2 | 5822 | 5134,8 | 410295 | 521,1 | 39100 | 17,9 | 841 | 3,9 | 78 |
| Բուժական | 1488,4 | 80431 | 4,8 | 194 | 409,2 | 15270 | 285,1 | 16937 | 612,2 | 35683 | 177,1 | 12347 |
| Արզնի | 575,7 | 8367 | 57,3 | 748 | 45,3 | 3821 | 3,2 | 131 | 303,7 | 2236 | 166,2 | 1431 |
| Երևան | 75,6 | 3491 | 40,4 | 1019 | 23,4 | 1897 | 6 | 84 | 5,5 | 468 | 0,3 | 23 |
Հետազոտված համայնքներում սոցիալական ծառայությունների և ենթակառուցվածքների զարգացումն անհրաժեշտ է, նախ և առաջ, համայնքների կայուն զարգացման նպատակով: Ավելի կոնկրետ մոտեցման դեպքում ենթակառուցվածքների զարգացումը ուսումնասիրվող տարածքներում զբոսաշրջության զարգացման կարևորագույն նախապայման է: Ներկայիս իրավիճակում նման

զարգացման նախադրյալները լավը չեն. համայնքային և միջհամայնքային ճանապարհների մի մասն ասֆալտապատված չէ, հեռահաղորդակցության հասանելիությունը սահմանափակ է, մշակութային և ազգային զբոսաշրջության ենթակառուցվածքներն անհապաղ վերականգնման կարիք են զգում, կանոնավոր միջոցառումներ գրեթե չկան և այլն:

4.6. Այլ ենթակառուցվածքներ

Հետազոտված բոլոր բնակավայրերն ամբողջությամբ էլեկտրաֆիկացված են: Էլեկտրաէներգիայի մատակարարումները կայուն են, խափանումները սակավաթիվ են և անհապաղ վերացվում են: Անջատումների ընդհանուր տևողությունը տարվա մեջ չի գերազանցում մի քանի տասնյակ ժամը: Հետազոտված բոլոր բնակավայրերը այս կամ այն չափով ապահովված են խմելու ջրի կանոնավոր մատակարարմամբ. որոշ տեղերում առկա են ջրամատակարարման խնդիրներ: Ջրի որակն ընդհանուր առմամբ բավարար է: Անտառտնտեսությանը հարակից բնակավայրերից գազաֆիկացված չեն միայն 3-ը: Հետազոտված բնակավայրերի մեծ մասում առկա է կանոնավոր, թեև ոչ բավարար հաճախ իրականացվող աղբահեռացում: Միաժամանակ, ծայրահեղ մտահոգիչ է աղբավայրերի առկայության և որպես աղբավայր օգտագործվող տարածքների վիճակը:

4.7. Աշխատուժ, զբաղվածություն և եկամուտներ

Ընդհանուր առմամբ 18 տարեկանից բարձր աշխատունակ տարիքի բնակչության մասնաբաժինը կազմում է ընդհանուր առկա բնակչության մոտ 68%-ը: Աշխատունակ տարիքի բնակչության մոտ 74%-ը աշխատունակ է, որոնց 88%-ը՝ զբաղված է (ներառյալ ինքնազբաղվածները), որից 45%-ը՝ պետական հիմնարկներում՝ դպրոցներում, մանկապարտեզներում, համայնքապետարաններում և այլն: Մասնավոր հիմնարկներում զբաղվածները հիմնականում աշխատում են գյուղմթերքի վերամշակման, ձկնաբուծական, թռչնաբուծական ու անասնաբուծական, հանքարդյունաբերության ոլորտի ձեռնարկություններում, ինչպես նաև առևտրի և սպասարկման ոլորտի տարբեր կառույցներում: Աշխատունակ բնակչության մոտ 12%-ը զբաղված չէ տնտեսական որևէ գործունեությամբ բարձր տարիքի կամ առողջական պատճառներով: Այնուամենայնիվ, աշխատունակ տարիքի բնակչության գրեթե 64%-ը կամ աշխատում են, կամ էլ ներգրավված են ինքնաապահովման գյուղատնտեսական գործունեության մեջ: Սա կարևոր է, քանի որ այն վկայում է, որ հետազոտված բնակավայրերում զգալի աշխատանքային (մարդկային) ռեսուրսներ կան, որոնք կարող են ներգրավվել անտառտնտեսական տարբեր գործողություններում:

4.8. Գյուղատնտեսություն

Անտառտնտեսության հարակից համայքներում գյուղատնտեսության վիճակը բավարար չէ՝ ոռոգվող հողատարածքների սակավություն, ֆիզիկապես և բարոյապես մաշված գյուղատնտեսական մեքենասարքավորումներ, հողագործության մեջ ներդրումներ անելու համար սկզբնական կապիտալի բացակայություն, գյուղմթերքի պահպանման ենթակառուցվածքների անբավարարություն և այլն: Բնակավայրերի մեծամասնությունում բանջար-բոստանային կուլտուրաների արտադրությունը

հիմնականում ուղղված է տնտեսությունների սեփական կարիքների բավարարմանը և հիմնականում աճեցվում են ոռոգվող տնամերձ հողամասերում:

Համայնքներն ունեն անասնապահության զարգացման պոտենցիալ, որն առաջին հերթին պայմանավորված է արոտավայրերի առկայությամբ: Սակայն ոլորտում առկա են որոշակի խնդիրներ, որոնք ընդհանուր են ՀՀ գրեթե բոլոր գյուղական համայնքների համար: Դրանց շարքում կարելի է նշել կենդանական ծագման արտադրանքի ոչ կայուն շուկան, հեռագնա արոտավայրերի ճանապարհների վատ վիճակը, դրանց մեծ մասի ոչ ջրարբիացված լինելը, բնակավայրերի մոտակա արոտավայրերի գերարածեցումը, պարբերաբար կրկնվող համաճարակները և այլն: Համայնքներում գյուղատնտեսության ոլորտում առկա խնդիրների մեծ մասը պայմանավորված է գյուղատնտեսական ենթակառուցվածքների բացակայության կամ դրանց վատ վիճակի հետ: Ենթակառուցվածքների մեծ մասը մնացել են դեռևս խորհրդային ժամանակներից: Դրանք ֆիզիկապես և բարոյապես մաշված են և չեն կարող նպաստավոր լինել արդյունավետ գյուղատնտեսության վարման տեսանկյունից: Գյուղատնտեսական մեքենասարքավորումները բնակավայրերում հիմնականում նորացման, արդիականացման կարիք ունեն:

4.9. Անտառամերձ բնակավայրերի բնափայտի կարիքների գնահատում

Անտառտնտեսությանը հարակից 43 բնակավայրերը տեղաբաշխված են անտառտնտեսության անտառների 5կմ-ոց գոտում, ընդհանուր հաշվով քաղաքային ընդհանուր 7 բնակավայրերում բնակչության թիվը մոտ 173667 է, 50 գյուղական բնակավայրերում՝ 113462: Բնակավայրերից միայն 3-ը գազաֆիկացված չեն: Զեռուցման փայտի նվազագույն պահանջարկը ընդհանուր հաշվով կազմում է մոտ 180000մ³: Նախատեսվող խնամքի հատումներից հնարավոր է բավարարել տարեկան 1700խտմ³, անտառներում ցցաչոր, քամատապալ ու ձնակոտոր ծառերի ընդհանուր պաշարը գնահատվել է մոտ 500խտմ³, իսկ անտառում վերջին տարիներին առաջացած և չարտահանված թափուկը գնահատվել է մոտ 20000մ³, ընդ որում հիմնականում մանր բնափայտի տեսքով:

Բաժին 5. ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանը գտնվում է Կովկասի էկոտարածաշրջանում: Այն բարձր լեռնային երկիր է, որտեղ առանձնացվում են 7 լանդշաֆտային տիպեր՝ անապատային, կիսաանապատային, չոր լեռնատափաստանային, լեռնաանտառային, ենթալպյան ու ալպյան մարգագետնային և նիվալ:

Հայաստանի տարածքում աճում են շուրջ 3800 տեսակ անոթավոր բույսեր, 428 հողային և ջրային ջրիմուռներ, 399 մամուռներ, շուրջ 4500 սնկեր, 464 քարաքոսեր, բնակվում են 549 ողնաշարավոր և շուրջ 17200 տեսակ անողնաշար կենդանիներ: Հայաստանի բույսերի Կարմիր գրքում ընդգրկված են 452 տեսակ, որը կազմում է ամբողջ Ֆլորայի 11,89%-ը:

Հայաստանի կենդանիների Կարմիր գրքում ընդգրկված են 308 տեսակ՝ 155 անողնաշար և 153 ողնաշարավոր:

Բարձրակարգ բույսերի խտությամբ Հայաստանն աշխարհում գրավում է առաջնակարգ տեղերից մեկը՝ յուրաքանչյուր 1000կմ² տարածքում աճում է մոտ 107 տեսակ: Բույսերի մոտ 2000 տեսակ օժտված է սննդային, կերային, դեղատու, ներկատու, եթերայուղատու, մեղրատու, խեժատու հատկանիշներով, մի շարք կենդանիներ՝ մորթատու, մսատու և այլ հատկանիշներով:

Հանդիսանալով մարդու կենսագործունեության համար անհրաժեշտ էկոլոգիական միջավայր՝ Հայաստանի կենսաբազմազանությունն ունի բնապահպանական կարևոր նշանակություն: Այդ տեսակետից Հայաստանի հարուստ կենսաբազմազանությունը, ունենալով էկոհամակարգերի կայունությունն ապահովող բարձր հատկանիշներ, միաժամանակ հանդիսանում է երկրի տնտեսական զարգացման կարևոր նախապայմաններից մեկը:

5.1. Ֆլորա

Հրազդանի անտառտնտեսության տարածքում հանդիպում են անոթավոր բույսերի 63 ընտանիքի և 122 ցեղին պատկանող 508 տեսակ:

Հրազդանի անտառտնտեսության տարածքում աճող բույսերից 3 տեսակ ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում (Աղյուսակ 29, քարտեզ 14):

Աղյուսակ 29. Հրազդանի անտառտնտեսության տարածքում աճող ՀՀ Բույսերի Կարմիր գրքում գրանցված բուսատեսակները

| Տեսակի լատիներեն անվանումը | Տեսակի հայերեն անվանումը | Կատեգորիան ըստ ՀՀ Կարմիր գրքի |
|---------------------------------|----------------------------|-------------------------------|
| <i>Nectaroscordum tripedale</i> | Նեկտարոսկորդում եռաոտնաչափ | EN |
| <i>Najas minor</i> | Ջրահարս փոքր | VU |
| <i>Ophioglossum vulgatum</i> | Օֆիոգլոսում | CR |

Հրազդանի անտառտնտեսության տարածքը հարուստ է բազմաթիվ օգտակար բուսատեսակներով, որոնցից շատերը լայնորեն և վաղուց կիրառվում են մարդու կողմից: Ըստ նախնական տվյալների, տարածքում լայն տարածում ունեն ուտելի և համեմունքային (32 տեսակ), մեղրատու (44), դեղատու (56), կերային (64) նշանակության տեսակները (Աղյուսակ 30):

Աղյուսակ 30. Հրազդանի անտառտնտեսության տարածքում հաճախ հանդիպող ուտելի և համեմունքային, մեղրատու, դեղատու և կերային բուսատեսակները

| Ուտելի և համեմունքային | Մեղրատու | Դեղատու | Կերային |
|--|--|--|--|
| Շուշանաբանջար սոխուկավոր - <i>Chaerophyllum bulbosum</i> | Աստղաբույս ամենամեծ - <i>Astrantia maxima</i> | Ծնեփակ դեղատու - <i>Asparagus officinalis</i> | Դաշտավլուկ կաղնուտային - <i>Poa nemoralis</i> |
| Սիբեյս սովորական - <i>Falcaria vulgaris</i> | Աստղածաղիկ իտալական - <i>Aster amellus</i> | Ծնեփակ օղակավոր - <i>Asparagus verticillatus</i> | Սիզախոտ սիզախոտանման - <i>Phleum phleoides</i> |
| Ծնեփակ դեղատու - <i>Asparagus officinalis</i> | Ճարճատուկ սովորական - <i>Cichorium intybus</i> | Ծորենի սովորական - <i>Berberis vulgaris</i> | Սիզախոտ մարգագետնային - <i>Phleum pratense</i> |
| Դաղձ երկարատերև - <i>Mentha longifolia</i> | Իժախոտ սովորական - <i>Echium vulgare</i> | Ճարճատուկ սովորական - <i>Cichorium intybus</i> | Շյուղախոտ մարգագետնային - <i>Festuca pratensis</i> |
| Ուրց Կոչիի - <i>Thymus kotschyanus</i> | Գերիմաստի - <i>Viburnum lantana</i> | Իժախոտ ռուսական - <i>Echium maculatum</i> | Սեզ սողացող - <i>Elytrigia repens</i> |
| Արոսի - <i>Sorbus aucuparia</i> | Փշատենի նեղատերև - <i>Elaeagnus angustifolia</i> | Սիբեյս սովորական - <i>Falcaria vulgaris</i> | Ոգնախոտ հավաքված - <i>Dactylis glomerata</i> |
| Սալոր - <i>Prunus divaricata</i> | Առվույտ ցանովի - <i>Medicago sativa</i> | Անթառամ ծալքավոր - <i>Helichrysum plicatum</i> | Վարսակ դատարկ - <i>Avena fatua</i> |
| Ելագ անտառային - <i>Fragaria vesca</i> | Երեքնուկ մարգագետնային - <i>Trifolium pratense</i> | Փիփերթ անտառային - <i>Malva sylvestris</i> | Շյուղախոտ վալիսյան - <i>Festuca valesiaca</i> |
| Եղինճ երկտուն - <i>Urtica dioica</i> | Երեքնուկ սողացող - <i>Trifolium repens</i> | Դաղձ երկարատերև - <i>Mentha longifolia</i> | Առվույտ ցանովի - <i>Medicago sativa</i> |
| Փիփերթ անտառային - <i>Malva sylvestris</i> | Կոկոռչենի թեքված - <i>Grossularia reclinata</i> | Սինդրիկ արևելյան - <i>Polygonatum orientale</i> | Կորնգան անդրկովկասյան - <i>Onobrychis transcaucasica</i> |
| Փիփերթ արհամարհված - <i>Malva neglecta</i> | Գնարբուկ խոշոչաբաժակ - <i>Primula macrocalyx</i> | Սալոր - <i>Prunus divaricata</i> | Երեքնուկ վարելահողային - <i>Trifolium arvense</i> |
| Կոկոռչենի թեքված - <i>Grossularia reclinata</i> | Սալոր - <i>Prunus divaricata</i> | Եղինճ երկտուն - <i>Urtica dioica</i> | Երեքնուկ մարգագետնային - <i>Trifolium pratense</i> |
| Ազնվամորի - <i>Rubus idaeus</i> | Ազնվամորի - <i>Rubus idaeus</i> | Արոսի - <i>Sorbus aucuparia</i> | Երեքնուկ մազմզոտագլուխ - <i>Trifolium trichocephalum</i> |
| Սինդրիկ արևելյան - <i>Polygonatum orientale</i> | Ասպիրակ աղեղնեզր - <i>Spiraea crenata</i> | Ուրց Կոչիի - <i>Thymus kotschyanus</i> | Վիկ խայտաբղետ - <i>Vicia variegata</i> |
| Գետնաբաղեղ բաղեղանման - <i>Glechoma hederacea</i> | Ասպիրակ արևքույրիկատերև - <i>Spiraea hypericifolia</i> | Սոճի Կոխի - <i>Pinus kochiana</i> | Վիկ նարնջագույն - <i>Vicia crucea</i> |

Դեռևս անբավարար են ուսումնասիրված օգտակար տեսակների պաշարները, որոնց մասին առայժմ գրառումները կարելի է սահմանափակել «առատ» կամ «հաճախ հանդիպող» գնահատականներով:

Հիմնական վտանգներ: Հիմնական վտանգներ շարունակում են մնալ ապօրինի հատումները, արածեցումը՝ հատկապես համայնքամերձ անտառներում անասունների անարգել մուտքը, բույսերի չհամակարգված հավաքը և արոտավայրերի ոչ ճիշտ կառավարումը:

Անտառային էկոհամակարգերի և կենսաբազմազանության վրա ազդեցություն կարող է ունենալ կլիմայի փոփոխությունը՝ ջերմաստիճանի բարձրացման և խոնավության նվազման միտումները:

Բուսական էկոհամակարգերի համար սպառնալիք կարող է հանդիսանալ նաև ինվազիվ և էքսպանսիվ բուսատեսակների տարածումը, օրինակ՝ *Ailanthus altissima*, *Robinia pseudacacia*, *Silybum marianum*, *Astragalus galegiformis*, *Ambrosia artemisiifolia* և այլն:

5.2. Ֆաունա

5.2.1. Անողնաշար կենդանիներ

Հրազդանի անտառտնտեսության տարածքում Հայաստանի Կարմիր գրքում գրանցված անողնաշարավոր տեսակներից գտնվել է 19 տեսակ (Քարտեզ 15):

Կարմիր գրքի բզեզները միայն երկուսն են՝ Հայաստանի էնդեմիկ տեսակներ, որոնք հանդիպում են անտառի վերին եզրի մոտ՝ Թամբակուրծք թարախահանը (*Mylabris sedilithorax*) (EN, Հայաստանի էնդեմիկ) և Երևանյան սևամարմինը (*Cylindronotus erivanus*) (EN, Հայաստանի էնդեմիկ), որը Հայաստանում պահպանվում է միայն այստեղ:

Տարածքում գտնվել են ցերեկային թիթեռների 6 տեսակ, այդ թվում մենմոզինան կամ սև ապոլոնը (*Parnassius mnemosyne*) (VU), ապոլոնը (*Parnassius apollo*) (VU), ալեքսանոր առագաստաթիթեռը (*Papilio alexanor orientalis*) (VU), ավրորինա դեղնաթիթեռը (*Colias aurorina*) (VU), ալկոն (*Maculinea alcon monticola*) (VU) և արիոն (*Maculinea arion zara*) (VU) կապտաթիթեռները:

Լույսի վրա արգելավայրում գալիս են պրոզերպինա իլիկաթիթեռը (*Proserpinus proserpina*) (VU) և այլ ԲՀՊՏ-ներում չպահպանվող Ալեքսանդրի երկրաչափիթեռը (*Eupithecia alexandriana*) (EN, Հայաստանի էնդեմիկ):

Տարածքը հարուստ է նաև Կարմիր գրքում գրանցված թաղանթաթևերով (Hymenoptera): Դրանք են՝ վայրի մեղվազգիներ (Apoidea) ամրակազմ մեղուն (*Anthophora robusta*) (VU), մանուշակագույն մեղու-ատաղձագործը (*Xylocopa violacea*) (VU), իշամեղուններ մարգագետնային (*Bombus pratorum*) (VU), գետնային (*Bombus terrestris*) (VU), Պորչինսկու (*Bombus portshinskii*) (VU), Կովկասի տարածաշրջանի էնդեմիկ և դաղեստանյան (*Bombus daghestanicus*) (VU), Կովկասի տարածաշրջանի էնդեմիկ և մրջյունների 3 տեսակ. կիսասատամ (*Crematogaster subdentata*) (EN), ինչպես

նաև Հայաստանում միայն այստեղ պահպանվող Ռավազինիի (*Myrmica ruginodis*) (EN) և Ջուլիայի (*Diplorhynchus juliae*) (CR, Հայաստանի էնդեմիկ) մրջյուններ, վերջինս նկարագրված է «Արզական-Մեղրածորի» արգելավայրի տարածքից և աշխարհում հայտնի է միայն այստեղից:

Հիմնական վրանգները: Հիմնական վտանգ կարող է հանդիսանալ ապօրինի անտառհատումը, որը հանգեցնում է տարածքների մասնատմանը և դեգրադացմանը:

Պահպանություն: Սանիտարական/խնամքի հատումներ իրականացնելիս տարածքներում անհրաժեշտ է պահպանել անողնաշար կենդանիների ապրելավայր հանդիսացող առանձին ցցաչոր փշակավոր ծառեր:

Վնասատուների հնարավոր բնկումների դեպքում ցանկալի է խուսափել ավիացիոն պայքարի ձևերից և կիրառել կենսաբանական պայքարի ձևերը: Ավիացիոն պայքարի անխուսափելիության պարագայում անհրաժեշտ է հնարավորինս տեղայնացնել պայքարը և չընդլայնել գործողությունները բնկումից դուրս տարածքներում:

5.2.2. Ողնաշարավոր կենդանիներ

Ձկներ

Հրազդան գետում և Մարմարիկ վտակում հանդիպում են ձկների 27 տեսակ Անտառտնտեսության տարածքի ջրային օբյեկտներում ձկնաշխարհը ներկայացված է հետևյալ ձկնատեսակներով՝ կարմրախայտով (*Salmo trutta fario*), արևելյան տառեխիկով (*Alburnoides eichwaldii*), Քուռի բեղլուով (*Barbus lacerta cyri*), կողակով (*Capoeta sp.*), արծաթափայլ կարասով (*Carassius auratus gibelio*): Կարող են հանդիպել նաև Քուռի սպիտակաձուկը (*Alburnus filippii*), անգորական լերկաձուկը (*Oxyemacheilus angorae*), կովկասյան թեփուղը (*Squalius orientalis*), ճանարը (*Luciobarbus capito*), արևելյան տառեխիկը (*S Alburnoides eichwaldii*), ինչպես նաև ֆորելային տնտեսություններից ներթափանցող ծիածանախայտը (*Parasalmo mykiss*):

Հրազդան գետի ձկնաշխարհում առանձնացվում է ձկնատեսակների երեք խումբ որոնք՝

1. Բնակվել ու շարունակում են բնակվել Հրազդան գետում,
2. Անհետացել են կամ ներկայում չեն հանդիպում Հրազդան գետում,
3. Հրազդան գետում հայտնաբերվել են վերջին տասնամյակների ընթացքում:

Առաջին խմբին են պատկանում կարմրախայտը, Սևանի կողակը, Կուրի կողակը, կովկասյան թեփուղը, Կուրի ենթաբերանը, Կուրի բեղաձուկը, արևելյան տառեխիկը, Կուրի սպիտակաձուկը, սովորական լոքոն: Երկրորդ խմբին են պատկանում կասպիական սաղմոնը, ոսկեգույն ծականը, կովկասյան լերկաձուկը,: Երրորդ խմբին են պատկանում արծաթաձկնիկը, մանրաթեփուկը, անդրկովկասյան սպիտակաձուկը, սովորական քառթակը:

5.2.3. Երկկենցաղներ և սողուններ

Նկարագրություն: Անտառտնտեսության արգելավայրային տարածքներում հիմնականում հանդիպում են 4 տեսակի երկկենցաղներ՝ կանաչ դողողը (*Bufo viridis*), սովորական ծառագորտը (*Hyla arboreas chelkownikowi*), լճագորտը (*Pelophilax ridibundus*) և փոքրասիական գորտը (*Rana macrocnemis*):

Բնակավայրերի միջև ընկած հատվածներում ավտոմայրուղու եզրերին, ճանապարհամերձ ժայռերի և շինությունների պատերի վրա հանդիպում են *Darevskia* ցեղի ժայռային մողեսներից հայկական մողեսը, Դալլի մողեսը և ռոստոմբեկովի մողեսը (*Darevskia armeniaca*, *D. dahl*(EN): i, *D. rostombekovi* (EN)): Այս կուսածին տեսակներից առավել խոցելին, կապված կենսաբանական առանձնահատկությունների հետ (ծվերի քիչ քանակությունը և էկոլոգիական նեղ հարմարողականությունը) հանդիսանում է Ռոստոմբեկովի ժայռային մողեսը, որը գրանցված է ՀՀ կենդանիների Կարմիր գրքում: Դալլի ժայռային մողեսը նույնպես գրանցված է ՀՀ կենդանիների Կարմիր գրքում, սակայն թվաքանակը ավելի մեծ է: Մարմարիկ գետի առափնյա ժայռերի վրա տարածված են ժայռային մողեսների երկու տեսակներ՝ Դալլի (*D. dahl*(EN):) և հայկական (*armeniaca*,) մողեսները: Անտառի եզրերին, բաց տարածություններում հազվադեպ հանդիպում է մարգագետնային մողեսը (*D. praticola*) (VU), որը գրանցված է ՀՀ կենդանիների Կարմիր գրքում:

Լեռնատափաստանային և անտառային գոտու բացատներում ոչ մեծ քանակությամբ հանդիպում են ճարպիկ մողեսը (*Lacerta agilis*), և շերտավոր մողեսը (*L. strigata*): Անտառի եզրին և բացատներում հանդիպում է ջարդվող իլիկամողեսը (*Anguis fragilis*): Գետերի առափնյա քարքարոտ տեղամասերում և ճանապարհի վրա, հանդիպում են նաև ձիթեպտղագույն սահնօծը (*Platyceps najadum*) և բազմագույն սահնօծերը (*Hemorrhoids ravergeri*): Անտառային բացատների քարքարոտ տեղամասերում հազվադեպ կարելի է հանդիպել նաև ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված անդրկովկասյան սահնօծին (*Zamenis hohenackeri*) (VU): Տարբեր ջրածահճային էկոհամակարգերում գրանցվել է ջրային լորտուն (*Natrix tessellata*):

Այս կուսածին տեսակներից առավել խոցելին, կապված կենսաբանական առանձնահատկությունների հետ (ծվերի քիչ քանակությունը և էկոլոգիական նեղ հարմարվողականությունը) հանդիսանում է Ռոստոմբեկովի ժայռային մողեսը, որը գրանցված է ՀՀ կենդանիների Կարմիր գրքում: Դալլի ժայռային մողեսը նույնպես գրանցված է ՀՀ կենդանիների Կարմիր գրքում, սակայն թվաքանակը ավելի մեծ է: Աղստև գետի առափնյա ժայռերի վրա տարածված է նաև ժայռային մողեսներից հայկական մողեսը *Darevskia armeniaca*:

Մողեսների առանձին տեսակների հարաբերական քանակությունը և փոփոխությունը (թվաքանակի աճը), որսանմուշներում վկայում է հազվագյուտ տեսակների պոպուլյացիաների վրա ֆոնային տեսակների բացասական ազդեցության, մարդածին ճնշման նվազեցման (ապօրինի որս), էկոհամակարգի կայունության, որպես

կերի աղբյուր միջատների, համապատասխան բիոտոպների և կլիմայական գործոնների նպաստավոր պայմանների առկայության մասին:

Նշված օբյեկտների մոնիտորինգը հնարավորություն կտա գնահատել հազվագյուտ տեսակների վրա ֆոնային տեսակների և մարդածին ճնշման աստիճանը: Այսպես օրինակ, Ռոստոմբեկովի ժայռային մողեսի (*Darevskia rostombekovi*) թվաքնակի աճը վկայում է պոպուլյացիայի վրա Հայկական ժայռային մողեսի (*Darevskia armeniaca*) ճնշման նվազեցման, որպես կերի աղբյուր միջատների, համապատասխան բիոտոպների և կլիմայական գործոնների նպաստավոր պայմանների առկայության մասին, իսկ Ռոստոմբեկովի ժայռային մողեսի թվաքնակի կրճատումը վկայում է պոպուլյացիայի վրա Հայկական ժայռային մողեսի թվաքնակի աճի (բացասական ազդեցության) և վերը նշված պայմանների ոչ նպաստավոր լինելու մասին, որտեղ գոյատևում են ավելի լայն հարմարվողականություն ունեցող/պլաստիկ տեսակները: Այսինքն ֆոնային տեսակների պոպուլյացիաների բացասական ազդեցության մասին:

Հրազդանի անտառտնտեսությունը, և հատկապես «Արզական-Մեղրածորի» արգելավայրը, հարուստ է սողունների տեսակներով: Արգելավայրում հանդիպող 28 տեսակներից 8-ը գրանցված են ՀՀ Կարմիր գրքում: Հազվագյուտ և անհետացող տեսակներից կարելի է նշել Չերնովի մերկաչքին (*Ablepharus chernovi*), առաջավորասիական մաքուրային (*Trachylepis septemtaeniata*), երկարավոտ սցինկին (*Eumeces schneideri*), անդրկովկասյան սահնօձին (*Zamenis hohenackeri*), կովկասյան կատվածին (*Telescopus fallax*), երևանյան լեռնատափաստանային իժին (*Pelias eriwanensis*) և հայկական իժին (*Montivipera raddei*):

Մոնիթորինգի ենթակա կարող են հանդիսանալ լեռնատափաստանային և հայկական իժերը:

Հիմնական վտանգներ: Սողունների բազմազանության վրա ազդող հիմնական վտանգներն են.

- Մարդու գործունեության արդյունքում (հատումներ) կենսամիջավայրերի փոփոխություն և բնական ապրելավայրերի (բիոտոպների) ոչնչացում:
- Կենսամիջավայրի աղտոտում օրգանական և անօրգանական թափոններով:
- Անօրինական որսը՝ սիրող կոլեկցիոներների կողմից:

Պահպանություն: Անհրաժեշտ է իրականացնել հանրային իրազեկման քարոզարշավներ, մշակել և հրատարակել բնապահպանական բրոշյուրներ և տարածել համայնքներում, ներկայացնել այդ տեսակների կարևորությունը և նշանակությունը էկոտորիզմի հետ կապված գործողությունների ընթացքում և այլն:

5.2.4. Թռչուններ

Հրազդանի անտառտնտեսության տարածքում հանդիպում է թռչունների շուրջ 190 տեսակ, որոնցից 130-ը այստեղ բնադրում են: Դրանցից առավել հետաքրքիրներից են այստեղ բնադրվող Հայաստանի Կարմիր գրքում գրանցված սապսանը (*Falco peregrinus*) (VU), մարգահավը (*Crex crex*) (VU), փոքր ենթաարծիվը

(*Aquila pomarina*) (VU), ինչպես նաև այստեղ հանդիպող Բնության Պահպանության Միջազգային Միության Կարմիր ցուցակում գրանցված կովկասյան մարեհավը (*Tetrao mlokosiewiczi*) (VU) և կիսասպիտակավիզ ճանճորսը (*Ficedula semitorquata*) (DD): Արգելավայրը հանդիսանում է Կովկասյան մարեհավի (*Tetrao mlokosiewiczi*) (VU) հիմնական ապրելավայրը:

Թռչունների 36 տեսակը գրանցված են Հայաստանի կենդանիների Կարմիր գրքում, որոնցից 11-ը ընդգրկված են նաև Բնության Պահպանության Միջազգային Միության Կարմիր ցուցակում: Գրանցված է Կովկասյան մեկ էնդեմիկ տեսակ՝ կովկասյան մարեհավը (*Tetrao mlokosiewiczi*) և Հայկական բարձրավանդակի էնդեմիկ մեկ տեսակ՝ հայկական որորը (*Larus armenicus*): Տարածքում բնադրող թռչունների մեծամասնությունը ներկայացված է անտառային տեսակներով: Այստեղ լայն տարածված են հոբալը (*Columba oenas*), անտառային աղավնին (*Columba palumbus*), փայտփորների վեց տեսակ՝ վիզգուկը (*Jynx torquilla*), կանաչ (*Picus viridis*), սև (*Dryocopus martius*), խայտաբղետ (*Dendrocopos major*), միջին (*D. medius*) և փոքր (*D. minor*) փայտփորները, եղնջաթոնակը (*Troglodytes troglodytes*), անտառային նրբագեղիկը (*Prunella modularis*), արշալուսիկը (*Erithacus rubecula*), սովորական կարմրատուտը (*Phoenicurus phoenicurus*), սոսնձակեռնեխը (*Turdus viscivorus*), սև (*T. merula*) և երգող (*T. philomelos*) կեռնեխները, սևագլուխ (*Sylvia atricapilla*) և այգու (*S. borin*) շահրիկները, դեղնափոր (*Phylloscopus trochiloides*) և ծնկլտան (*Ph. collybita*) գեղգեղիկները, փոքր (*Ficedula parva*) և կիսասպիտակավիզ (*F. semitorquata*) ճանճորսները, երկարագի (*Aegithalos caudatus*), սև (*Parus ater*), երկնագույն (*P. caeruleus*) և մեծ (*P. major*) երաշտահավերը, սովորական սիտեղը (*Sitta europaea*), ծվծվիկը (*Certhia familiaris*) և անտառային կաչաղակը (*Garrulus glandarius*): Սերինոսներից լայն տարածված են ամուրիկը (*Fringilla coelebs*), կանաչ սերինոսը (*Carduelis chloris*), սովորական խաճկոտիկը (*Pyrrhula pyrrhula*) և հատրեկիչը (*Coccothraustes coccothraustes*): Երեկոյան և գիշերային ժամերին անտառներում կարելի է հանդիպել անտառաբվին (*Strix aluco*) և ականջավոր բվին (*Asio otus*): Ցերեկային գիշատիչ թռչուններից այստեղ բնադրում են օձակեր արծիվը (*Circaetus gallicus*), կրետակերը (*Pernis apivorus*), ցախաքլորաորսը (*Accipiter gentilis*), լորաճուռակը (*A. nisus*), մեծ ճուռակը (*Buteo buteo*), փոքր ենթաարծիվը (*Aquila pomarina*) և գաճաճ արծիվը (*Hieraetus pennatus*): Անտառամերձ բացատներում և մացառուտներում հանդիպում են այծկիթը (*Caprimulgus europaeus*), անտառակոցարը (*Scolopax rusticola*), սովորական տատրակը (*Streptopelia turtur*), անտառային արտույտը (*Lullula arborea*), անտառային ձիաթոնակը (*Anthus trivialis*), սևագլուխ չքչքանը (*Saxicola torquatus*), ճուռականման (*Sylvia nisoria*), մորու (*S. curruca*) և մոխրագույն (*S. communis*) շահրիկները, կովկասյան գեղգեղիկը (*Phylloscopus sindianus*), ժուլանը (*Lanius collurio*), նսպնուկը (*Carpodacus erythrinus*), կանեփնուկը (*Carduelis cannabina*) և սևագլուխ դրախտապանը (*Emberiza melanocephala*): Գետերի հովիտների բաց ջրային տարածքներում և արհեստական լճակների ափերին

հանդիպում են կարմրատոտ (*Tringa tetanus*), սևուկ (*T. ochropus*) և սպիտակավիզ (*Actitis hypoleucos*) կոցարները, երկնագույն ավկիոնը (*Alcedo atthis*), լեռնային խաղտոնիկը (*Motacilla cinerea*) և ջրաճնճուկը (*Cinclus cinclus*): Գետերի ափամերձ թփուտներում և ճահճուտներում բնադրում են հարավային սոխակը (*Luscinia megarhynchos*), լայնապոչ եղեգնաթռչնակը (*Cettia cetti*): Խոնավ մարգագետինները գրավում են դեղին խաղտոնիկին (*Motacilla flava*), շերտագլուխ (*Acrocephalus schoenobaenus*) և ճահճային (*A. palustris*) եղեգնաթռչնակներին և սովորական ճոկկահավին (*Locustella naevia*), ինչպես նաև այստեղ կեր հայթհայթող մեղվակերին (*Merops apiaster*) և առափնյա ծիծեռնակին (*Riparia riparia*): Առափնյա անտառին բնորոշ տեսակներից են արտույտաբազեն (*Falco subbuteo*), մոխրագույն ճանճորսը (*Muscicapa striata*), ճոճահավը (*Remiz pendulinus*), պիրոլը (*Oriolus oriolus*) և սևաճակատ շամփրուկը (*Lanius minor*): Տարածքում գտնվող այգիները և մշակված հանդակները գրավում են հոպոպին (*Upupa epops*), սև մանգաղաթևին (*Apus apus*), գյուղական ծիծեռնակին (*Hirundo rustica*), սպիտակ խաղտոնիկին (*Motacilla alba*), սովորական սարյակին (*Sturnus vulgaris*), սովորական ճային (*Corvus monedula*), մոխրագույն ագռավին (*Corvus corone*), դաշտային (*Passer montanus*) և տնային (*P. domesticus*) ճնճուկներին, կարմրակատարին (*Carduelis carduelis*) և կորեկնուկին (*Emberiza calandra*): Ամենուրեք հանդիպում են քարքարոտ ելքեր, ժայռեր, իսկ ջրբաժանների կատարների երկայնքով՝ նաև ժայռաբեկորների թափվածքների դաշտեր: Ցածրադիր գոտու ժայռերում հանդիպում են գիշանգղը (*Neophron percnopterus*), բվեճը (*Bubo bubo*), ներկարարը (*Coracias garrulus*), թխակապույտ աղավնին (*Columba livia*), ժայռային (*Ptyonoprogne rupestris*) և քաղաքային (*Delichon urbicum*) ծիծեռնակները, սևախայտ քարաթռչնակը (*Oenanthe hispanica*), կապույտ քարակեռնեխը (*Monticola solitarius*), ժայռային փոքր սիտեղը (*Sitta neumayer*), ժայռային ճնճուկը (*Petronia petronia*), այգու (*Emberiza hortulana*) և լեռնային (*E. cia*) դրախտապանները: Բարձր լեռնային գոտու ժայռերին և մերձակա լեռնային տափաստաններին և մարգագետիններին բնորոշ են կովկասյան մարեհավը (*Tetrao mlokosiewiczi*), վայրի հնդկահավը կամ ուլարը (*Tetraogallus caspius*), սովորական կկուն (*Cuculus canorus*), սպիտակափոր մանգաղաթևը (*Apus melba*), եղջրավոր արտույտը (*Eremophila alpestris*), խայտաբղետ (*Prunella ocularis*) և ալպիական (*P. collaris*) նրբագեղիկները, կապտափող սոխակը (*Luscinia svecica*), սևուկ կարմրատուտը (*Phoenicurus ochruros*), սովորական քարաթռչնակը (*Oenanthe oenanthe*), խայտաբղետ քարակեռնեխը (*Monticola saxatilis*), սպիտակախաճի կեռնեխը (*Turdus torquatus*), կարմրաթև մագլցողը (*Tichodroma muraria*), սևագռավը (*Corvus corax*), կարմրակտուց ճայը (*Pyrrhocorax pyrrhocorax*), ձյանճնճուկը (*Montifringilla nivalis*), կարմրաճակատ սերինոսը (*Serinus pusillus*) և լեռնային վշասարեկը (*Carduelis flavirostris*): Անմատչելի ժայռերը հատկապես գրավիչ են այստեղ բնադրող մի շարք ցերեկային գիշատիչ թռչունների՝ գառնանգղի (*Gypaetus barbatus*), սպիտակագլուխ անգղի (*Gyps fulvus*), տափաստանային ճուռակի (*Buteo rufinus*), քարարծվի (*Aquila chrysaetos*), սովորական հողմավար բազեի (*Falco tinnunculus*) և սապսանի (*F.*

peregrinus) համար: Լեռնային մարգագետինների այլ տարածված տեսակներից են մոխրագույն կաքավը (*Perdix perdix*), մարգահավը (*Crex crex*), դաշտային արտույտը (*Alauda arvensis*), լեռնային ձիաթռչնակը (*Anthus spinoletta*) և մարգագետնային չքչքանը: Գարնանային և աշնանային չուի ժամանակ տարածքում կարելի է հանդիպել բազմաթիվ այլ տեսակների: Չվող գիշատիչ թռչուններից են՝ սև ցինը (*Milvus migrans*), սև անգղը (*Aegypius monachus*), ճահճային (*Circus aeruginosus*), տափաստանային (*C. macrourus*) և մարգագետնային (*C. pygargus*) մկնաճուռակները, եվրոպական ճնճղաճուռակը (*Accipiter brevipes*), մեծ ենթասարծիկը (*Aquila clanga*), տափաստանային արծիկը (*A. nipalensis*), բլրային արծիկը (*A. heliaca*), ջրարծիկը (*Pandion haliaetus*), տափաստանային հողմավար (*Falco naumanni*) և կարմրատու (*F. vespertinus*) բազեները, բալոբանը (*F. cherrug*): Չվող ճնճղուկազգիներից են կարմրախաճի ձիաթռչնակը (*Anthus cervinus*), կարմրակատար շամփրուկը (*Lanius senator*), վարդագույն սարյակը (*Sturnus roseus*), գարնանային գեղգեղիկը (*Phylloscopus trochilus*) և մի շարք այլ միջատակեր տեսակներ: Զրային թռչուններից չուի ժամանակ այստեղ հանդիպում են փոքր ջրցույլ (*Ixobrychus minutus*), սպիտակ փոքր (*Egretta garzetta*), մոխրագույն (*Ardea cinerea*) և շիկակարմիր (*A. purpurea*) տառեղները, սև (*Ciconia nigra*) և սպիտակ (*C. ciconia*) արագիլները, փոքր քարադրը (*Charadrius dubius*), սովորական կիվիկը (*Vanellus vanellus*), մորակոցարը (*Gallinago gallinago*), ծխագույն կոցարը (*Tringa nebularia*), սովորական (*Larus ridibundus*) և հայկական (*L. armenicus*) որորները, սպիտակաայտ (*Chlidonias hybrida*) և սպիտակաթև (*Ch. leucopterus*) ջրածիճառները, դեղնագլուխ խաղտոնիկը (*Motacilla citreola*): Ձմռան ամիսներին ցածրադիր գոտում հանդիպում են հյուսիսից այցելող ձմեռող տեսակներ, ինչպիսիք են՝ փոքր սուզակը (*Tachybaptus ruficollis*), դաշտային մկնաճուռակը (*Circus cyaneus*), թավշատ ճուռակը (*Buteo lagopus*), աղավնաբազեն (*Falco columbarius*), սինակեռնեխը (*Turdus pilaris*), դեղնագլուխ արքայիկը (*Regulus regulus*), մոխրագույն շամփրուկը (*Lanius excubitor*), սովորական սերինոսը (*Fringilla montifringilla*), ազնվասարեկը (*Carduelis spinus*), սովորական (*Emberiza citrinella*) և եղեգնուտի (*E. schoeniclus*) դրախտապանները: Հրազդան գետի կիրճում հանդիպում են հետևյալ տեսակները. փոքր ձկնկուլ-*Microcarbo pygmaeus* - հազվադեպ կիրճի ստորին հատվածում թափանցում է Երևանի ջրամբարի տարածքից, եվրոպական ճնճղաճուռակ-*Accipiter brevipes* պարբերաբար բնադրում է, աղավնաբազեն-*Falco columbarius*. հանդիպում է ձմռան ժամանակահատվածում, հայկական որոր-*Larus armenicus*. հանդիպում է ամբողջ տարին կիրճի ողջ երկարությամբ, սովորական տատրակ-*Streptopelia turtur*. բացակայում է Հայաստանի Կարմիր գրքից, բայց ներառված է IUCN-ի ցանկում՝ որպես Խոցելի տեսակ: Վերջին տարիներին կիրճի տարածքում այն շատ հազվադեպ է հանդիպում, բվեճ-*Bubo bubo*- կիրճի տարածքում գիշերվա ժամերին պարբերաբար լսվում են այս տեսակի ձայները, կիսասպիտակավիզ ճանճոր-*Ficedula semitorquata*. հանդիպում է միայն գարնանային միգրացիայի

շրջանում, կարմրաթև սիտեղ-*Tichodroma muraria*. - հազվադեպ հանդիպում է ձմռան ժամանակաշրջանում:

Թռչնատեսակներից մոնիթորինգի ենթակա կարող է հանդիսանալ կովկասյան մարեհավը:

5.2.5. Կաթնասուններ

Նկարագրություն: Կաթնասունների զգալի մասը բնակվում են լայնատերև անտառներում և հատկապես անտառների բացատներում ու անտառների և մարգագետինների միջև ընկած տարածքներում: Տարածքից ներկայումս հայտնի են մոտ 55 տեսակի կաթնասուններ, որոնցից 9-ը գրանցված են Հայաստանի կենդանիների Կարմիր գրքում: Հիմնական բնակիչներն են սովորական դաշտամուկը (*Microtus arvalis*), թփութային դաշտամուկը (*Microtus majori*), անտառային քնամուկը (*Dryomys nitedula*), պոլչուկը (*Glis glis*), դեղնակուրծք մուկը (*Apodemus ponticus*), փոքր անտառային մուկը (*Apodemus uralensis*), մակեդոնական մուկը (*Mus macedonicus*), պարսկական կամ կովկասյան սկյուռը (*Sciurus anomalus*), անտառակատուն (*Felis silvestris silvestris*), լուսանը (*Lynx lynx*) և գորշ արջը (*Ursus arctos*): Սովորական են այծյամը (*Capreolus capreolus*) և վայրի խոզը (*Sus scrofa*): Անտառաբնակ չղջիկներն են լայնականջ ծալքաշուրթ չղջիկը (*Tadarida teniotis*), փոքր իրիկնաչղջիկը (*Nyctalus leisleri*), շիկակարմիր իրիկնաչղջիկը (*Nyctalus noctula*), եվրոպական լայնականջ չղջիկը (*Barbastella barbastellus*), անտառային կամ Նատուզիուսի փոքրաչղջիկը (*Pipistrellus nathusii*), գորշ ականջեղ չղջիկը (*Plecotus auritus*): Քարքարոտ վայրերում կարող են գրանցվել սրականջ գիշերաչղջիկը (*Myotis blythii*) և եռագույն գիշերաչղջիկը (*Myotis emarginatus*): Ասիական լայնականջ չղջիկը-*Barbastella leucomelas* և սովորական երկարաթև չղջիկը *Miniopterus schreibersi* դիտվում են թռչչի ժամանակ մթնշաղին և գիշերը:

Մարգագետիններում և բացատներում լայնորեն տարածված են եվրոպական նապաստակը (*Lepus europaeus*), ձնային դաշտամուկը (*Chionomys nivalis*), անդրկովկասյան կուրամկնիկը (*Ellobius lutescens*), դաղստանի դաշտամուկը (*Microtus daghestanicus*), սպիտակափոր սպիտակատամը (*Crocidura leucodon* = *C. persica*), փոքր սպիտակատամը (*Crocidura suaveolens*), աղվեսը (*Vulpes vulpes*), գորշուկը (*Meles canescens*), քարակզաքիսը (*Martes foina*) և աքիսը (*Mustela nivalis*):

Ջրամերձ տարածքներում գրանցվում են ջրային դաշտամուկը (*Arvicola amphibius* = *A. terrestris*), Շելկովնիկովի կուտորան (*Neomys teres* = *N. schelkovnikovi*), բեղավոր գիշերաչղջիկը (*Myotis mystacinus*) և, հազվադեպ, ջրասամույրը (*Lutra lutra*):

Անթրոպոգեն տարածքներում սովորական են մոխրագույն համստերը (*Cricetulus migratorius*), տնային մուկը (*Mus musculus*), մոխրագույն առնետը (*Rattus norvegicus*), սև առնետը (*Rattus rattus*): Շինություններում ապաստարան են գտնում մեծ պայտաքիթ չղջիկը (*Rhinolophus ferrumequinum*), փոքր պայտաքիթ չղջիկը (*Rhinolophus hipposideros*), ասիական լայնականջ չղջիկը (*Barbastella leucomelas*), ուշաթռչք մաշկեղ չղջիկը (*Eptesicus serotinus*), սովորական երկարաթև չղջիկը (*Miniopterus schreibersi*),

թզուկ փոքրաչոջիկը (*Pipistrellus pipistrellus*), գաճաճ փոքրաչոջիկը (*Pipistrellus pygmaeus*), մաշկեղակերպ փոքրաչոջիկը (*Pipistrellus* (= *Hypsugo*) *savii*) և երկգույն մաշկեղ չոջիկը (*Vespertilio murinus*):

Ամենուրեք տարածված են սպիտակափոր ոզնին (*Erinaceus concolor*), Ռադդեի գորշատամը (*Sorex raddei*), Սատունինի գորշատամը (*Sorex satunini* = *S. caucasica stavropolica*), Վոլնուխինի գորշատամը (*Sorex volnuchini*), փոքր խլուրդը (*Talpa levantis*) և գայլը (*Canis lupus*), աղվեսը (*Vulpes vulpes*), գորշուկը (*Meles meles*):

ԲՊՄՄ Կարմիր ցուցակում գրանցված են եվրոպական լայնականջ չոջիկը, սովորական երկարաթև չոջիկը և ջրասամույրը (NT): ՀՀ Կարմիր գրքում նշված են ազնվացեղ եղջերուն (*CR*), Շելկովնիկովի կուտորան, ջրասամույրը (*EN*), ասիական լայնականջ չոջիկը, սովորական երկարաթև չոջիկը, գորշ ականջեղ չոջիկը, անտառակատուն, գորշ արջը (*VU*) և լայնականջ ծալքաշուրտ չոջիկը (*DD*): Էնդեմներն են անդրկովկասյան կուրամկնիկը (Անդրկովկասի էնդեմ), թփուտային դաշտամուկը, դեղնակուրծք մուկը, Շելկովնիկովի կուտորան, Ռադդեի, Սատունինի և Վոլնուխինի գորշատամները (Կովկասի էնդեմներ):

5.3. «Արզական-Մեղրաձոր» պետական արգելավայր

«Արզական-Մեղրաձորի» պետական արգելավայրը հիմնադրվել է ՀՍՍՀ մինիստրների սովետի 1971թ. ապրիլի 9-ի N212 կարգադրության համաձայն ներկայիս Հրազդանի տարածաշրջանում՝ Դարալիկ և Մարմարիկ գետերի ավազանում, 1600-2100մ բարձրությունների վրա: Արգելավայրի ստեղծման նպատակը անտառային հազվագյուտ կենդանիների (գորշ արջ, վայրի խոզ, կովկասյան մարեհավ, կասպիական ուլար, երևանյան լեռատափաստանային իժ, հայկական իժ, սովորական իժալեզու և այլն) պահպանությունն է:

Արգելավայրի տարածքները տեղաբաշխված են Փամբակի լեռնաշղթայից հարավ, Գեղամա լեռնաշղթայից դեպի հյուսիս-արևմուտք, Մարմարիկ գետի ավազանում, Ծաղկունյաց լեռնաշղթայի լեռնաբազուկների վրա: Արգելավայրի տարածքին բնորոշ են բարձրադիր լեռները, ռելիեֆի հրաբխային ու էրոզիոն ձևերը, սարավանդներն ու գետահովիտները: Հյուսիսային մասում ձգվում են Փամբակի լեռնաշղթայի՝ Մարմարիկ գետի վտակներով խիստ մասնատված լանջերը, իսկ արևելքում՝ Գեղամա լեռնաշղթայի հյուսիս-արևմտյան լեռնաճյուղերն են: Հարավային մասում Կոտայքի սարավանդն է, իսկ արևմուտքում տարածվում է խիստ կտրտված լանջերով Ծաղկունյաց լեռնաշղթան, որից սկսվում և դեպի արևելք է ձգվում Թեղենիսի լեռնաբազուկը: Ռելիեֆի բնորոշ տարրերից են Հրազդանի և Մարմարիկի հովիտները: Ցածրադիր մասում ռելիեֆը մեղմ ալիքավոր է, ծածկված հրաբուխներից արտավիժած լավաներով: Տարածքի ամենաբարձր գագաթը Թեժ լեռն է՝ 3101մ: Կան բազմաթիվ հրաբխային կոներ:

Կախված ռելիեֆի պայմաններից՝ խիստ փոփոխական է հողային բնութագիրը: Արգելավայրի առանձին տեղամասերն իրենց հողաերկրաբանական պայմաններով

խիստ տարբերվում են: Ցածրադիր մասերում գերիշխում են կարբոնատային գորշ, լեռնաշագանակագույն հողերը, որոնց զարգացման համար բնորոշ են շոգ, սակավ խոնավապահովված կլիմայական պայմանները և աչքի են ընկնում սակավ հումուսայնությամբ: Այս հողերի համար հատկանշական է միջին կլանման ծավալը, թույլ հիմնային ռեակցիան, կարբոնատների և քարերի զգալի պարունակությունը: Արգելավայրի Արզականի տեղամասում գերակշռող են մուգ դարչնագույն, գորշ հողերը, որոնք առավելապես տարածված են հարավային կողմնադրության լանջերին: Այս հողերն աչքի են ընկնում հորիզոնի թույլ, առանձին դեպքերում չափավոր զատորոշմամբ, վերին հորիզոնի չափավոր հումուսացվածությամբ (4-6%) միջին կլանողականությամբ, չեզոք կամ թույլ հիմնային ռեակցիայով, զարգանում են չափավոր տաք, փոփոխական խոնավություն ունեցող կլիմայական և ծառաթփատեսակներով հարուստ կաղնու անտառային ծածկոցի պայմաններում:

Արգելավայրի տարածքներում գերակշռողը մուգ անտառային հողերն են, որոնք մեծամասամբ տարածված են հյուսիսային կողմնադրության լեռնալանջերին: Այս հողերն ունեն միջին և ավելի մեծ կլանունակություն, ծանր մեխանիկական կազմ, չեզոք կամ չեզոքին մոտ ակտիվ ռեակցիա: Աչքի են ընկնում փոքր ծավալային կշռով, բարձր ծակոտկենությամբ ու խոնավունակությամբ:

Հարավային կողմնադրության լանջերին առավելապես տարածված են մուգ դարչնագույն հողերը: Այս հողերն ունեն փոքր, հազվադեպ միջին հզորություն, և իրենց կառուցվածքով կարելի է դասել գորշ հողերի տիպին:

«Զիկատար» բնապահպանական կենտրոն» նախկինում ՊՈԱ կազմակերպության կողմից 2014թ. «Արզական-Մեղրաձորի» պետական արգելավայրի կառավարման պլանի պատրաստման նպատակով իրականացվել են արգելավայրի սահմանների ճշտման համապատասխան այլ ուսումնասիրություններ:

Համաձայն այդ ուսումնասիրությունների արգելավայրի ընդհանուր մակերեսը կազմել է 14488 հեկտար: 2022թ գույքագրման և գնահատման արդյունքներով, հաշվի առնելով տեխնիկական ու անտառշինական խորհրդակցություններում, ինչպես նաև անտառտնտեսության համապատասխան մասնագետների կողմից արված առաջարկությունները, արգելավայրի կառավարման արդյունավետության բարձրացման տեսանկյունից ելնելով, կատարվել են որոշակի փոփոխություններ (Աղյուսակ 31, քարտեզ 16,17):

Աղյուսակ 31. Արգելավայրի հողատեսքերի փոփոխությունը

| № | Հողատեսքը | 2015 | | 2022 | | Տարբերությունը |
|--------|-------------------------------------|---------|-------|---------|-------|----------------|
| | | Հա | % | Հա | % | |
| 1. | Ընդհանուր | 14488 | 100 | 17407 | 100 | 2933,0 |
| 2. | Անտառային հողեր, ընդամենը | 12747,3 | 87,98 | 16138,0 | 92,71 | 3390,7 |
| 2.1. | Անտառածածկ, ընդամենը | 10274 | 70,91 | 13019,2 | 74,79 | 2745,2 |
| 2.1.1. | Այդ թվում անտառմշակույթներ | 280 | 1,93 | 540,4 | 3,10 | 260,4 |
| 2.2. | Չմիակցված սաղարթով անտառմշակույթներ | 2,9 | 0,02 | | | -2,9 |

| | | | | | | |
|-------|------------------------------------|--------|-------|--------|-------|--------|
| 2.3. | Ոչ անտառածածկ, ընդամենն, այդ թվում | 2470,4 | 17,05 | 3118,8 | 17,92 | 648,4 |
| 2.3.1 | Նոսրուտներ | 1840,4 | 12,7 | 1891,8 | 10,87 | 51,4 |
| 2.3.2 | Բացատներ և պարապուտ տարածքներ | 630 | 4,35 | 1224,3 | 7,03 | 594,3 |
| 2.3.3 | Մահացած տնկարկ | | | 2,7 | 0,02 | 2,7 |
| 3. | Ոչ անտառային հողեր | 1740,7 | 12,02 | 1269,1 | 7,29 | -471,6 |
| 3.1 | Պտղատու այգի | 4,2 | 0,03 | | | -4,2 |
| 3.2 | Արոտավայր | 1350 | 9,32 | 953,5 | 5,48 | -396,5 |
| 3.3 | Խոտհարք | 105,4 | 0,73 | 39,7 | 0,23 | -65,7 |
| 3.4 | Այլ հողեր | 281,1 | 1,94 | 275,9 | 1,58 | -5,2 |

Իրականացված փոփոխությունների արդյունքում անտառածածկ մակերեսը ավելացել է 3390,7 հեկտարով, նույն թվում անտառմշակույթները՝ 260,4հա, ոչ անտառածածկ մակերեսը՝ 648,4հա, նույն թվում, բացատները և պարապուտ տարածքները՝ 594,3հա, նոսրուտները՝ 51,4հա:

Ոչ անտառային հողերի, հիմնականում արոտավայրերի մակերեսների նվազումը հիմնականում բացատրվում է անտառածածկի բուն ներսում, նախկինում արոտավայրի տակ նշված, ներկայումս վերականգնման ենթակա, ճանապարհներից կտրված տարածքները որպես բացատ կամ պարապուտ հաշվառելու հանգամանքով: Դրա նպատակն է անասունների մուտքը բացառելով նպաստել բնական վերականգնմանը:

Արգելավայրում գերակշռում են ցածրաբուն կաղնու ծառուտները 6871,2հա մակերեսով (52,7%) և 417724մ³ պաշարով (40,6%): Բարձրաբուն կաղնին զբաղեցնում է 3333,0հա տարածք (25,6%) 358442մ³ պաշարով (35,0%) (Աղյուսակ 32):

Աղյուսակ 32. Անտառածածկ տարածքի և պաշարի բաշխվածությունը ըստ գերակշռող ծառատեսակների

| № | Ծառատեսակի անվանումը | Տարին | Մակերեսը, հա | Պաշարը, մ ³ |
|----|----------------------|-------|--------------|------------------------|
| 1 | Սոճի | 2015 | 517,2 | 61282 |
| | | 2022 | 513,7 | 60818 |
| 2 | Գիհի | 2015 | 23,9 | 240 |
| | | 2022 | 288,9 | 6189 |
| 3 | Կաղնի | 2015 | 2874,4 | 336240 |
| | | 2022 | 3333,0 | 358442 |
| 4 | Կաղնի ցրն | 2015 | 5321,7 | 341290 |
| | | 2022 | 6871,2 | 417724 |
| 5 | Բոխի | 2015 | 149,7 | 10250 |
| | | 2022 | 111,0 | 12657 |
| 6 | Բոխի ցրն | 2015 | 348,6 | 19860 |
| | | 2022 | 744,6 | 47900 |
| 7 | Հացենի | 2015 | 11,2 | 1000 |
| | | 2022 | 9,7 | 695 |
| 8 | Թխկի | 2015 | - | - |
| | | 2022 | 12,3 | 829 |
| 9 | Թեղի | 2015 | 39,8 | 1990 |
| | | 2022 | 26,2 | 1622 |
| 10 | Կեչի | 2015 | 705,7 | 41500 |
| | | 2022 | 643,8 | 46132 |

| № | Ծառատեսակի անվանումը | Տարին | Մակերեսը, հա | Պաշարը, մ ³ |
|----------|----------------------|-------|--------------|------------------------|
| 11 | Կաղամախի | 2015 | 38,9 | 6140 |
| | | 2022 | 67,7 | 9917 |
| 12 | Լորենի | 2015 | 442,4 | 98630 |
| | | 2022 | 323,8 | 60706 |
| 13 | Ուռենի | 2015 | 9,3 | 480 |
| | | 2022 | 15,5 | 741 |
| 14 | Տանձենի | 2015 | 0,8 | 30 |
| | | 2022 | 1,5 | 40 |
| 15 | Արոսենի | 2015 | 26,8 | 700 |
| | | 2022 | 36,3 | 806 |
| 16 | Խնձորենի | 2015 | - | - |
| | | 2022 | 19,7 | 216 |
| 17 | Թփատեսակներ | 2015 | 0,7 | 10 |
| | | 2022 | 0,3 | 1 |
| Ընդամենը | | 2015 | 10274,0 | 887610 |
| | | 2022 | 13019,2 | 1025435 |

Անտառաձածկ մակերեսի 23,6% ցածր լրիվության ծառուտներ են, 42,1%-ը միջին (0,5-06) լրիվության և 0,7 և բարձր լրիվության ծառուտները՝ 34,3% (Աղյուսակ 33):

Աղյուսակ 33. Արգելավայրի անտառաձածկ մակերեսի և պաշարի բաշխվածությունն ըստ ծառուտի լրիվության

| Գերակշռող ծառատեսակը | Լրիվությունը | | | | | | | | |
|----------------------|--------------|--------|--------|--------|--------|-------|------|--------|-------|
| | 0,3 | 0,4 | 0,5 | 0,6 | 0,7 | 0,8 | 0,9 | Ընդ. | Միջին |
| Սոճի | 33,7 | 100,2 | 120 | 192,4 | 54,4 | 13 | | 513,7 | 0,53 |
| | 2274 | 8400 | 12280 | 26315 | 9068 | 2481 | | 60818 | |
| Կաղնի | 314,1 | 446,3 | 501,2 | 1054,2 | 888 | 129,2 | | 3333 | 0,56 |
| | 22083 | 40573 | 44488 | 116905 | 115520 | 18873 | | 358442 | |
| Կաղնի ցածրաբուն | 745,9 | 1028,7 | 1292,5 | 1438,7 | 1531,2 | 797,1 | 37,1 | 6871,2 | 0,57 |
| | 19750 | 41623 | 69345 | 93400 | 122343 | 68154 | 3109 | 417724 | |
| Բոխի | 3 | 13,3 | 3,6 | 20,4 | 62,8 | 7,3 | 0,6 | 111 | 0,64 |
| | 249 | 1312 | 387 | 2587 | 7195 | 883 | 44 | 12657 | |
| Բոխի ցածրաբուն | 3,8 | 4,3 | 134,2 | 50 | 182,3 | 275,8 | 94,2 | 744,6 | 0,72 |
| | 155 | 123 | 5630 | 3497 | 11215 | 20184 | 7096 | 47900 | |
| Հացենի | | 1,2 | 3,8 | 4,7 | | | | 9,7 | 0,54 |
| | | 21 | 177 | 497 | | | | 695 | |
| Թխկի | 3,7 | 7,3 | | 1,3 | | | | 12,3 | 0,39 |
| | 11 | 749 | | 69 | | | | 829 | |
| Թեղի | | 0,2 | | 26 | | | | 26,2 | 0,6 |
| | | 10 | | 1612 | | | | 1622 | |
| Կեչի | 19,3 | 81,3 | 157,9 | 228,2 | 111 | 46,1 | | 643,8 | 0,57 |
| | 348 | 3457 | 10083 | 15870 | 11218 | 5156 | | 46132 | |
| Կաղամախի | | 1 | 4,2 | 32,9 | 8,2 | 21,4 | | 67,7 | 0,67 |
| | | 77 | 461 | 4409 | 1562 | 3408 | | 9917 | |
| Լորենի | 13,3 | 22,8 | 3,7 | 72,3 | 162,8 | 48,9 | | 323,8 | 0,65 |
| | 1397 | 4228 | 491 | 12154 | 32829 | 9607 | | 60706 | |
| Ուռենի ծառ | | 7,4 | | 8,1 | | | | 15,5 | 0,5 |
| | | 219 | | 522 | | | | 741 | |
| Տանձենի | | | 1,5 | | | | | 1,5 | 0,5 |

| Գերակշռող ծառատեսակը | Լրիվությունը | | | | | | | | |
|----------------------|--------------|--------|--------|--------|--------|--------|-------|---------|-------------|
| | 0,3 | 0,4 | 0,5 | 0,6 | 0,7 | 0,8 | 0,9 | Ընդ. | Միջին |
| | | | 40 | | | | | 40 | |
| Արոսենի | 11,5 | 2,3 | 22,5 | | | | | 36,3 | 0,43 |
| | 161 | 55 | 590 | | | | | 806 | |
| Խնձորենի | | 3,7 | 11,8 | 4,2 | | | | 19,7 | 0,5 |
| | | 33 | 121 | 62 | | | | 216 | |
| Գիհի | 65,3 | 137 | 79,5 | 7,1 | | | | 288,9 | 0,41 |
| | 778 | 2834 | 2371 | 206 | | | | 6189 | |
| Ակացիա դեղին | 0,3 | | | | | | | 0,3 | 0,3 |
| | 1 | | | | | | | 1 | |
| Արգելավայր | 1213,9 | 1857 | 2336,4 | 3140,5 | 3000,7 | 1338,8 | 131,9 | 13019,2 | 0,57 |
| | 47207 | 103714 | 146464 | 278105 | 310950 | 128746 | 10249 | 1025435 | |

Բարձր բնիտետային (I և II) դասերի ծառուտները կազմում են ընդհանուր անտառածածկի 1,0%-ը, ցածրը՝ (V- V-ա) 60,0%-ը, իսկ միջին բնիտետային դասերի ծառուտները՝ 39,0% (Աղյուսակ 34):

Աղյուսակ 34. Արգելավայրի անտառածածկ մակերեսի բաշխվածությունն ըստ բնիտետային դասերի

| № | Գերակշռող ծառատեսակը | Բնիտետային դասեր | | | | | | | | |
|----------------|----------------------|------------------|-------------|--------------|---------------|---------------|---------------|-------|------------|----------------|
| | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 5ա | Միջին | Ընդ, հա | |
| 1 | Սոճի | 30,4 | 89,1 | 321,8 | 72,4 | | | | 2,8 | 513,7 |
| 2 | Կաղնի | | 3,6 | 297,9 | 2556,1 | 405,9 | 69,5 | | 4,1 | 3333,0 |
| 3 | Կաղնի ցածրաբուն | | | | 553,2 | 4037,2 | 2280,8 | | 5,3 | 6871,2 |
| 4 | Բոխի | | | 39,0 | 67,8 | 4,2 | | | 3,7 | 111,0 |
| 5 | Բոխի ցածրաբուն | | | | 250,7 | 406,2 | 87,7 | | 4,8 | 744,6 |
| 6 | Հացենի | | | | 9,7 | | | | 4,0 | 9,7 |
| 7 | Թխկի | | | 0,2 | 2,1 | 10 | | | 4,8 | 12,3 |
| 8 | Թեղի | | | 0,2 | 26 | | | | 4,0 | 26,2 |
| 9 | Կեչի | | | 10,3 | 470,4 | 141 | 22,1 | | 4,3 | 643,8 |
| 10 | Կաղամախի | | 4,6 | 55,8 | 7,3 | | | | 3,0 | 67,7 |
| 11 | Լորենի | | | 269,8 | 54 | | | | 3,2 | 323,8 |
| 12 | Ուտենի ծառ | | | | 14,1 | 1,4 | | | 4,1 | 15,5 |
| 13 | Տանձենի | | | | 0,8 | 0,7 | | | 4,5 | 1,5 |
| 14 | Արոսենի | | | | | 22,5 | 13,8 | | 5,4 | 36,3 |
| 15 | Խնձորենի | | | | 1 | 18,7 | | | 4,9 | 19,7 |
| 16 | Գիհի | | | | | | 288,9 | | 6,8 | 288,9 |
| 17 | Ակացիա դեղին | | | | | | 0,3 | | 6,0 | 0,3 |
| Ամբողջը | | 30,4 | 97,3 | 995,0 | 4085,6 | 5047,8 | 2763,1 | | 4,7 | 13019,2 |

Երիտասարդ տարիքային խմբի ծառուտները զբաղեցնում են ընդհանուր 207,3հա, 12911մ³ ընդհանուր պաշարով, միջին տարիքային խումբը համապատասխանաբար՝ 12158,1հա, 963254մ³, հասունացող տարիքային խումբը՝ 583,7հա, 44895մ³ և հասուն և գերհասուն տարիքային խմբի ծառուտները՝ ընդամենը 70,1հա, 4375մ³ ընդհանուր պաշարով (Աղյուսակ 35):

Ծառուտների միջին տարբը 64 է, միջին բռնիտետը՝ 4,7, միջին լրիվությունը 0,57, 1 հեկտարի անտառածածկի միջին պաշարը՝ 79մ³ և 1 հեկտարի տարեկան միջին աճը՝ 1,33մ³: Ծառուտի միջին կազմը հետևյալն է՝ 3,2Կg 2,6Կ 0,7Բg 0,5Հg 0,5Թխ 0,5Բ 0,6Կչ 0,5Լ 0,1Կղ 0,1Ուոճ 0,6Ս 0,1Ար 0,1Գ +Թղ, Տձ, Խձ, ՈՒռ, Բա, Ակդ, Փշ, Սլ, Կոս, Շլ, Սզ (Աղյուսակ 36):

Արգելավայրի տարածքում նախատեսվել են խնամքի հատումներ ընդհանուր 830,2 հեկտարի վրա, հատման նախատեսված անտառանյութի ընդհանուր պաշարը՝ 13349խտմ³: Ըստ անտառապետությունների՝ Մեղրաձորի անտառապետությունում 370,7հա, 6149խտմ³, Ծաղկաձորի անտառապետությունում՝ 251,5հա, 4192խտմ³ և Արզականի անտառապետությունում՝ 208,0հա, 3008խտմ³ պաշարով:

Արգելավայրի ընդհանուր տարածքի 3066,7հա ցածր լրիվության ծառուտերում և ոչ անտառածածկ ընդհանուր 3118,8 հեկտարից 554,8 հեկտարի վրա նախատեսված է անտառապատման և անտառվերականգնման միջոցառումներ, նույն թվում Մեղրաձորի անտառապետությունում՝ 259,3հա, Ծաղկաձորի անտառապետությունում՝ 175,4հա, և Արզականի անտառապետությունում՝ 120,1հա:

Բացատ և պարապուտ տարածքներում ընդհանուր 102,5հա, նոսրուտներում՝ 329,9հա և ցածր լրիվության ծառուտներում՝ 122,4 հեկտարի վրա:

Աղյուսակ 35. Արգելավայրի գերակշռող ծառատեսակների մակերեսի և պաշարի բաշխվածությունը ըստ տարիքային խմբերի

| № | Գերակշռող ծառատեսակը | Մակերեսը, հա | | | | | | | Պաշարը, մ ³ | | | | | | | Միջին տարիքը |
|-----------------|----------------------|-------------------------|--------------------------------|-------|--------------|------------|--------------------|---------------------|----------------------------------|--------------------------------|-------|--------------|------------|--------------------|---------------------|--------------|
| | | Անտառածածկ մակերեսը, հա | այդ թվում ըստ տարիքային խմբերի | | | | | | Ընդհանուր պաշարը, մ ³ | այդ թվում ըստ տարիքային խմբերի | | | | | | |
| | | | երիտասարդ | | միջին տարիքի | հասունացող | հասուն և գերհասուն | | | երիտասարդ | | միջին տարիքի | հասունացող | հասուն և գերհասուն | | |
| | | | 1 | 2 | | | ընդամենը | այդ թվում գերհասուն | | 1 | 2 | | | ընդամենը | այդ թվում գերհասուն | |
| 1 | Սոճի | 513,7 | 4,7 | 84,3 | 424,7 | | | | 60818 | 96 | 6855 | 53867 | | | | 53 |
| 2 | Կաղնի | 3333 | | 51 | 3282 | | | | 358442 | | 2989 | 355453 | | | | 78 |
| 3 | Կաղնի ցրն | 6871,2 | | | 6294,7 | 560,9 | 15,6 | | 417724 | | | 374339 | 42577 | 808 | | 57 |
| 4 | Բոխի | 111 | | 34 | 77 | | | | 12657 | | 2604 | 10053 | | | | 59 |
| 5 | Բոխի ցրն | 744,6 | | | 744,6 | | | | 47900 | | | 47900 | | | | 38 |
| 6 | Հացենի | 9,7 | | 2,6 | 7,1 | | | | 695 | | 48 | 647 | | | | 80 |
| 7 | Թխկի | 12,3 | 3,7 | | 8,6 | | | | 829 | 11 | | 818 | | | | 87 |
| 8 | Թեղի | 26,2 | | 0,2 | 26 | | | | 1622 | | 10 | 1612 | | | | 50 |
| 9 | Կեչի | 643,8 | | 0,4 | 623,4 | 20 | | | 46132 | | 6 | 44051 | 2075 | | | 59 |
| 10 | Կաղամախի | 67,7 | | | 47 | 2,8 | 17,9 | | 9917 | | | 6914 | 243 | 2760 | | 51 |
| 11 | Լորենի | 323,8 | | | 323,8 | | | | 60706 | | | 60706 | | | | 74 |
| 12 | Ուռենի ծառ | 15,5 | | | 15,5 | | | | 741 | | | 741 | | | | 33 |
| 13 | Տանձենի | 1,5 | | 1,5 | | | | | 40 | | 40 | | | | | 37 |
| 14 | Արոսենի | 36,3 | | | | | 36,3 | 3,9 | 806 | | | | | 806 | 78 | 37 |
| 15 | Խնձորենի | 19,7 | | 19,7 | | | | | 216 | | 216 | | | | | 34 |
| 16 | Գիհի | 288,9 | | 5,2 | 283,7 | | | | 6189 | | 36 | 6153 | | | | 66 |
| 17 | Ակացիա դեղին | 0,3 | | | | | 0,3 | | 1 | | | | | 1 | | 35 |
| Ընդամենը | | 13019,2 | 8,4 | 198,9 | 12158,1 | 583,7 | 70,1 | 3,9 | 1025435 | 107 | 12804 | 963254 | 44895 | 4375 | 78 | 64 |

Աղյուսակ 36. Տեղեկագիր արգելավայրի անտառզնահատման միջին ցուցանիշների՝ ըստ գերակշռող ծառատեսակների

| № | Գերակշռող ծառատեսակը | Գնահատման միջին ցուցանիշներ | | | | | Ծառուտի միջին կազմը |
|----------|----------------------|-----------------------------|---------------|--------------|---|-----------------------------------|---|
| | | Տարիքը | Բնիտների դասը | Լրիվությունը | 1 հա անտառածածկ մակերեսի միջին պաշարը, մ ³ | Պաշարի 1 հա անտառածածկի միջին անը | |
| 1. | Սոճի | 53 | 2,8 | 0,53 | 118 | 2,32 | 9.1Ս 0.5Կ 0.3Կg +Հգ,Լ,Թխ,Կչ,Ուոձ,Բգ,Բ,Կդ,Ակդ,Խձ,Թդ,Ար,Տձ |
| 2. | Կաղնի | 78 | 4,1 | 0,56 | 108 | 1,42 | 7.0Կ 0.9Բ 0.7Թխ 0.7Հգ 0.3Կչ 0.2Լ 0.1Ուոձ +Ս,Թդ,Կդ,Ար,Կգ,Տձ,Բա,Բգ,Կոս,Խձ,Սլ,Շլ,Սգ,Փշ |
| 3. | Կաղնի ցածրաբուն | 57 | 5,3 | 0,57 | 61 | 1,14 | 7.3Կg 0.9Բg 0.5Թխ 0.4Հգ 0.1Բ 0.5Կչ 0.1Ուոձ 0.1Լ +Ար,Կդ,Թդ,Գ,Ս,Տձ,Փշ,Կոս,Խձ,ՈՒո,Շլ,Սլ |
| 4. | Բոխի | 59 | 3,7 | 0,64 | 114 | 2,05 | 6.3Բ 1.6Կ 0.9Թխ 0.9Հգ 0.1Թդ 0.1Լ 0.1Ուոձ +Ս,Կչ,Ար,Տձ |
| 5. | Բոխի ցածրաբուն | 38 | 4,8 | 0,72 | 64 | 1,78 | 6.6Բg 2.3Կg 0.5Հգ 0.2Թխ 0.1Կ 0.2Լ 0.2Կչ +Ուոձ,Ս,Ար,Տձ,Կոս,Շլ |
| 6. | Հացենի | 80 | 4,0 | 0,54 | 72 | 0,98 | 4.5Հգ 1.7Թխ 0.6Կ 0.2Բ 0.1Թդ 2.1Կչ 0.1Լ 0.7ՈՒո +Սլ,Ս |
| 7. | Թխկի | 87 | 4,8 | 0,39 | 67 | 0,82 | 5.2Թխ 2.9Կ 1.1Հգ 0.3Կg 0.1Թդ 0.4Ուոձ +Կչ |
| 8. | Թեղի | 50 | 4,0 | 0,60 | 62 | 1,24 | 5.0Թդ 2.0Կ 3.0Կչ +Հգ,Ուոձ |
| 9. | Կեչի | 59 | 4,3 | 0,57 | 72 | 1,24 | 6.2Կչ 0.2Ուոձ 1.2Կg 1.1Կ 0.4Թխ 0.4Թդ 0.5Ար +Բգ,Հգ,Կդ,Ս,Լ,Բ,Կոս |
| 10. | Կաղամախի | 51 | 3,0 | 0,67 | 146 | 2,96 | 9.7Կդ 0.1Կչ 0.1Կ 0.1Կg +Ուոձ,Ս |
| 11. | Լորենի | 74 | 3,2 | 0,65 | 187 | 2,57 | 6.6Լ 0.1Կչ 2.3Կ 0.3Հգ 0.3Թխ 0.2Բ 0.2Կg +Թդ,Ուոձ,Ար,Տձ,Ս |
| 12. | Ուռնի ծառ | 33 | 4,1 | 0,50 | 48 | 1,44 | 5.8Ուոձ 2.1Հգ 0.1Կg 0.1Բ 1.3Ար 0.5Ս +Կ,Թխ,Ակդ,Կչ |
| 13. | Տանձենի | 37 | 4,5 | 0,50 | 27 | 0,73 | 8.5Տձ 1.5Խձ +Թդ |
| 14. | Արոսենի | 37 | 5,4 | 0,43 | 22 | 0,60 | 6.7Ար 1.3Կչ 1.0Ուոձ 0.4Հգ 0.2Կ 0.2Կg 0.1Բ 0.1Թխ |
| 15. | Խնձորենի | 34 | 4,9 | 0,50 | 11 | 0,33 | 6.3Խձ 3.6Տձ 0.1Կ +Կg,Շլ |
| 16. | Գրիի | 66 | 6,8 | 0,41 | 21 | 0,33 | 9.1Գ 0.9Կg +Կ,Թխ |
| 17. | Ակացիա դեղին | 35 | 6,0 | 0,30 | 3 | 0,09 | 7.0Ակդ 3.0Սլ |
- Անտառապահպանական և անտառապաշտպանական աշխատանքների բարելավում,
- Ընտրովի սանիտարական հատումներ:

Սելեկցիոն հիմքի վրա անտառսերմնային բազաների հիմնումը նախատեսվում է բարձր ցանքսային հատկություններով և արժեքավոր ժառանգական հատկանիշներով օժտված սերմերի ստացման համար:

Բարձրարժեք և բարձր արտադրողական անտառային տեսակներով հիմնման միջոցով ընդլայնվում է անտառածածկ մակերեսը, վերականգնվում են հատված և քայքայված անտառները, ծառուտները ձևավորվում են ցանկալի ուղղությամբ, նպաստվում է կենսաբազմազանության հաստատմանը:

Խնամքի հատումները օժանդակում են ծառուտների նպատակային ձևավորմանը, մասնավորապես տեսակային կազմի բարելավմանը, որակական և տարածքային տեղաբաշխմանը, անտառի հողապաշտպան, ջրապաշտպան, սանիտարա-հիգիենիկ, էսթետիկական հատկությունների բարելավմանը և անտառների արդյունավետության բարձրացմանը:

Ընտրողական սանիտարական հատումները հնարավորություն են ընձեռում բարելավելու անտառի սանիտարական վիճակը, պահպանելու անտառածածկ մակերեսը ստուգիչ շրջանում, բարելավելու տեսակային կազմը և ստանալու ծառուտների լրացուցիչ աճ:

Համաձայն կառավարման պլանի նախագծի, նախատեսվում է 2023-32թթ շրջանում միջոցառումներ իրականացնել հետևյալ ծավալներով (Աղյուսակ 60):

Աղյուսակ 60. 2023-32թթ շրջանում նախատեսված միջոցառումներ

| № | Միջոցառման անվանումը | Մակերեսը, հա |
|-----------------|---|---------------|
| 1 | Անտառային մշակույթների հիմնում ոչ անտառածածկ տարածքներում | 967,8 |
| 1.1 | Բացատներում և պարապուտ տարածքներում | 562,9 |
| 1.2 | Հատված տարածքներում և նոսրուտներում | 404,9 |
| 2 | Ցածր լրիվության ծառուտներում | 172,1 |
| 3 | Այգիներում | 3,7 |
| 3 | Չմիակցված սաղարթով անտառմշակույթներում | 2,0 |
| 3 | Ցանկապատման միջոցով(նոր հիմնադրվող անտառմշակույթների և հիմնականում սերմնային վերականգնման տարածքներում) 30000 գծմ | 1000 |
| Ընդամենը | | 1145,6 |

2023-32թթ. ժամանակաշրջանի անտառային մշակույթների արտադրողականության որոշման համար մշակույթները պայմանականորեն հավասարեցված են ծառուտների I հասակային դասին, ընդ որում ասեղնատերևավոր ծառատեսակների միջին աճը հաշվարկված է II հասակային դասի ծառուտների միջին աճի 40%-ի չափով, իսկ տերևավոր ծառատեսակներինը՝ II հասակային աճի 60%-ի չափով:

Անտառի գույքագրման և գնահատման արդյունքներով I հասակային դասի 1հա-ի միջին աճը ասեղնատերևավոր ծառատեսակների համար 1,1մ³ է, իսկ տերևավոր տեսակների մոտ 0,9մ³ (Աղյուսակ 61):

Աղյուսակ 61. 2023-32թթ. ժամանակաշրջանում հիմնման նախատեսված անտառմշակույթների աճի ցուցանիշները

| № | Միջոցառման անվանումը | Մակերեսը, հա | 1հա-ի լրացուցիչ միջին աճը, մ ³ | Սպասվելիք լրացուցիչ աճը նախագծվող տարածքում, մ ³ |
|-----------------|--|--------------|---|---|
| 1 | 2023-32թթ. հիմնման նախատեսված մշակույթներ ոչ անտառածածկ տարածքներում | 967,8 | | |
| 1.1 | Ասեղնատերևավոր | 377,0 | 1,1 | 414,70 |
| 1.2 | Տերևավոր | 590,8 | 0,9 | 531,72 |
| Ընդամենը | | | | 946,42 |

Բնական վերաճին օժանդակող միջոցառումների արդյունքում լրացուցիչ աճը կկազմի 1172,1x0,2մ³հա (պայմանականորեն) = 234,42մ³:

Այսպիսով, նախատեսվող միջոցառումների արդյունքում սպասվելիք լրացուցիչ տարեկան աճը կկազմի 1190,74մ³:

Կառավարման պլանի նախագծում նախատեսվող համալիր միջոցառումների արդյունքում, անտառտնտեսության անտառային հողերում տեղի կունենա անտառածածկ տարածքի տեսակարար կշռի ավելացում և ծառուտի կազմի բարելավում:

Անտառածածկ մակերեսի ավելացումը նախատեսվում է անտառային բացատներում և նսրուտներում անտառմշակույթների հիմնման, ինչպես նաև բնական վերածին օժանդակող միջոցառումների հաշվին:

Ինչպես երևում է աղյուսակ 62-ից, 2022թ. համեմատությամբ անտառածածկ մակերեսը ստուգիչ ժամանակաշրջանի վերջում (2032թ.) կանխատեսվում է ավելացում 370,34հա-ով, իսկ 2037թ. ևս 717,46հա-ով, ընդ որում հիմնականում ոչ անտառածածկ տարածքներում հիմնադրվող անտառմշակույթների իրականացման հաշվին, իսկ բնական վերականգնմամբ 2032թ. 80հա, 2037թ. ևս 40հա հեկտարով՝ նսրուտներում և մասամբ փոքր մակերեսով բացատներում, ինչպես նաև պարապուտ տարածքներում սոճու և բոխու բնական վերականգնմամբ:

Աղյուսակ 62. Տեղեկագիր անտառտնտեսության հողատեսքերում նախատեսվող փոփոխությունների

| № | Հողատեսքի անվանումը | Չափմիավորը, հա | 01.01.2023թ. | 01.01.2032թ. | Փոփոխությունը | 01.01.2037թ. | Փոփոխությունը, 01.01.2022թ., համեմատությամբ |
|--------|---|----------------|--------------|--------------|---------------|--------------|---|
| 1 | Անտառային հողեր, ընդամենը | հա | 22575,7 | 22575,7 | | 22575,7 | |
| 1.1. | Անտառածածկ, ընդամենը | հա | 16662,9 | 17033,24 | +370,34 | 17750,7 | +1087,8 |
| 1.1.1. | Բնական ծագման անտառներ | հա | 15037,6 | 15117,6 | +80,0 | 15157,6 | +120,0 |
| 1.1.2. | Անտառմշակույթներ | հա | 1625,3 | 1915,64 | +290,34 | 2593,1 | +967,8 |
| 1.2. | Անտառային տնկարան | հա | 18,5 | 18,7 | +0,2 | 18,7 | +0,2 |
| 1.3. | Չմիակցված սաղարթով անտառմշակույթներ | հա | 19,4 | 677,46 | +658,06 | | |
| 1.4. | Ոչ անտառածածկ, ընդամենը | հա | 5874,7 | 4826,9 | -1047,8 | 4786,9 | -1087,8 |
| 1.4.1. | Հատված և չվերականգնված տարածքներ, նսրուտներ | հա | 2598,3 | 2143,4 | -454,9 | 2113,4 | -484,9 |
| 1.4.2. | Բացատ և պարապուտ | հա | 3276,4 | 2683,5 | -592,9 | 2673,5 | -602,9 |
| 2. | Ոչ անտառային հողեր, ընդամենը | հա | 2049,5 | 2049,5 | | 2049,5 | |
| 3. | Անտառտնտեսության ընդհանուր մակերեսը | հա | 24625 | 24625 | | 24625,0 | |

Հաշվարկը կատարվել է ընդունելով, որ անտառվերականգնման ծավալները իրականացվելու են 10 տարվա մոտավոր հավասար բաշխվածությամբ, որի դեպքում առաջին երեք տարիների հիմնված չմիակցված սաղարթով անտառմշակույթների մոտ 30%-ը բավարար խնամքի և պահպանության պայմաններում կփոխադրվեն անտառածածկ մակերես, իսկ մնացածը՝ հաջորդող 5 տարիներին:

Ոչ անտառածածկ մակերեսի նվազումը 2032թ. -1047,8 հա-ով, իսկ 2037թ. ևս 40 հա-ով բացատրվում է պարապուտ տարածքներում անտառապատման, նոսրուտներում վերականգնման միջոցառումներով, ինչպես նաև վերը նշված բնական վերականգնմամբ:

Նախատեսվող միջոցառումների արդյունքում էական փոփոխություն է ակնկալվում նաև ծառուտների տեսակային կազմում: Հիմնական անտառկազմող ծառատեսակների որակական կազմը զգալիորեն փոխվել է ի հաշիվ ոչ անտառածածկ տարածքների և ցածր արտադրողականության ու լրիվության (0,3-0,4) ծառուտների անտառապատման և անտառվերականգնման միջոցառումների:

Բարձրարուն կաղնու գերակշռությամբ ծառուտների մակերեսների ավելացումը 2022թ. համեմատությամբ 2032թ. 75,61հա, իսկ 2037թ. ևս 328,19 հեկտարով, բացատրվում է անտառային բացատներում, հատված տարածքներում և նոսրուտներում կաղնու սերմերով այլ տեսակների հետ խառը անտառմշակույթների հիմնման և բնական վերականգնման օժանդակման միջոցառումների իրականացմամբ:

Նույն հիմնավորմամբ բացատրվում է սոճուտների տարածքների ավելացումը 2032թ. 80,09 հեկտարով, իսկ 2037 թ. ևս 166,01 հեկտարով, նույն թվում նաև առանձին ոչ մեծ տարածքներում սերմնային բնական վերականգնմամբ:

Անտառի կայուն կառավարման իրականացման դեպքում, ի հաշիվ բնական վերականգնված խառը կազմով բոխու գերակշռությամբ երիտասարդ տարիքային խմբի ծառուտներում իրականացվող մատղաշի խնամքի միջոցառումների, տեղի է ունենում ծառուտի կազմի բարելավում, ինչն էլ բնականաբար հանգեցնում է Կովկասյան բոխու գերակշռությամբ ծառուտների մակերեսի նվազեցմանը: Մյուս կողմից հատված տարածքների և նոսրուտների, միջոցառումներ չնախատեսած՝ հատկապես բարձր թեքությունների տարածքներում կանխատեսվում է բնական վերականգնմամբ բոխու գերակշռությամբ ծառուտների մակերեսի ավելացում համապատասխանաբար 20 և 10 հեկտարով:

Հացի, թխկի, թեղի, կեչի և լորենու գերակշռությամբ ծառուտների մակերեսների ավելացումները հիմնականում բացատրվում է անտառային բացատներում գլխավոր տեսակներ՝ կաղնու և սոճու հետ որպես ուղեկցող տեսակներ նշված ծառատեսակների հիմնման և առանձին տարածքներում կազմավորվող երիտասարդ ծառուտների կազմերի հնարավոր փոփոխություններով՝ 2032թ. ընդհանուր 98,9 հեկտար, իսկ 2037թ. ևս 150 հեկտարով:

Ոչ անտառածածկ տարածքներում, համապատասխան տնկիների տնկմամբ, կանխատեսվում է անտառային տանձենու, խնձորենու և ծիրանենու ծառուտների մակերեսների ավելացումը 2032թ ընդհանուր 65,4հա, իսկ 2036թ. ևս 44,6 հեկտարով (Աղյուսակ 63):

Աղյուսակ 63. Անտառածածկ մակերեսի տեսակային կազմի փոփոխությունն ըստ գերակշռող ծառատեսակների

| № | Գերակշռող ծառատեսակը | Չափման միավորը | 2022թ. փաստացի | Կանխատեսվում է | | | |
|----------------|----------------------|----------------|----------------|-----------------|-------------------------------|----------------|-------------------------------|
| | | | | 2032թ. | Փոփոխությունը 2022թ. նկատմամբ | 2037թ. | Փոփոխությունը 2022թ. նկատմամբ |
| 1 | Սոճի | հա | 720,6 | 800,69 | +80,09 | 966,7 | +246,1 |
| 2 | Կաղնի | հա | 3535,2 | 3610,81 | +75,61 | 3939,0 | +403,8 |
| 3 | Կաղնի ցբն | հա | 9052,6 | 9052,6 | | 9052,6 | |
| 4 | Բոխի | հա | 114,1 | 144,1 | +30 | 164,1 | +50,0 |
| 5 | Բոխի ցածրաբուն | հա | 872 | 872,0 | | 872,0 | |
| 6 | Հացենի | հա | 124,8 | 144,2 | +19,4 | 174,2 | +49,4 |
| 7 | Թխկի | հա | 25,9 | 45,9 | +20 | 75,9 | +50,0 |
| 8 | Թեղի | հա | 111,8 | 131,3 | +19,5 | 161,3 | +49,5 |
| 9 | Ակացիա սպիտակ | հա | 30,2 | 30,2 | | 30,2 | |
| 10 | Կեչի | հա | 651,3 | 671,3 | +20 | 701,3 | +50,0 |
| 11 | Կաղամախի | հա | 68,0 | 68,0 | | 68,0 | |
| 12 | Լորենի | հա | 323,8 | 343,8 | +20 | 373,8 | +50,0 |
| 13 | Բարդի | հա | 91,0 | 91,0 | | 91,0 | |
| 14 | Ուռենի ծառ | հա | 36 | 36,0 | | 36,0 | |
| 15 | Ծիրանենի | հա | 2,7 | 22,7 | +20 | 32,7 | +30 |
| 16 | Գլեղիջիա | հա | 0,1 | 0,1 | | 0,1 | |
| 17 | Տանձենի | հա | 15,6 | 46,0 | +30,4 | 80,6 | +65,0 |
| 18 | Փռչնի | հա | 4,4 | 4,4 | | 4,4 | |
| 19 | Լշենի | հա | 431,3 | 431,3 | | 431,3 | |
| 20 | Հունական ընկուզենի | հա | 1,0 | 1,0 | | 1,0 | |
| 21 | Արոսենի | հա | 36,3 | 36,3 | | 36,3 | |
| 22 | Խնձորենի | հա | 51,2 | 86,2 | +35,0 | 96,2 | +45,0 |
| 23 | Բալենի | հա | 9,4 | 9,4 | | 9,4 | - |
| 24 | Սալորենի | հա | 0,1 | 0,1 | | 0,1 | - |
| 25 | Տուլյա | հա | 0,4 | 0,4 | | 0,4 | - |
| 26 | Ազնի | հա | 3,5 | 3,5 | | 3,5 | - |
| 27 | Փշատենի | հա | 0,5 | 0,5 | | 0,5 | - |
| 28 | Գիհի | հա | 288,9 | 288,9 | | 288,9 | - |
| 29 | Ակացիա դեղին | հա | 4,7 | 4,7 | | 4,7 | - |
| 30 | Դրախտածառ | հա | 52,7 | 52,7 | | 52,7 | - |
| 31 | Հուդայածառ | հա | 0,4 | 0,4 | | 0,4 | - |
| 32 | Այլանթ | հա | 2,1 | 2,1 | | 2,1 | - |
| 33 | Սոսի | հա | 0,3 | 0,3 | | 0,3 | - |
| Ամբողջը | | հա | 16662,9 | 17033,24 | +370,34 | 17750,7 | +1087,8 |

Բաժին 10. ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

10.1. Անտառպահպանության խնդիրներն ու պահաբաժինների առանձնացումը

Պահպանության հիմնական խնդիրն է նվազագույնի հասցնել անտառային և այլ էկոհամակարգերի ու պաշարների չհամակարգված օգտագործումը, նվազեցնել հրդեհների ռիսկերը, ինչպես նաև բնական վերականգնման օժանդակման միջոցառումներով վերականգնել դեգրադացված անտառային տարածքները: Պահպանության գործողություններում ներառվում են՝

- Դեգրադացված անտառային էկոհամակարգերի վերականգնում, ինչը անհրաժեշտ է վտանգված տեսակների վիճակի բարելավման, ինչպես նաև անտառային հատվածների միասնականության և ամբողջականության ապահովման (ֆրագմենտացիայի նվազեցման) համար՝ ներկայացված է թիվ 9 անտառվերականգնման միջոցառումներ բաժնում:
- Բարձր բնապահպանական արժեք ունեցող անտառների (ԲԲԱԱ) առանձնացում և համապատասխան կառավարում: ԲԲԱԱ-ների կառավարման գործողությունները պետք է ուղղված լինեն հայտնաբերված արժեքների պահպանմանը և վերականգնմանը:
- Ինքնակամ հատումների ծավալների կրճատման նպատակով համալիր ծրագրի մշակում և իրականացում:
- Համայնքների կողմից օգտագործվող արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարման սխեմաների մշակում՝ բացառելով անտառվերականգնման ենթակա անտառներում անասունների մուտքը, ընդ որում պետք է գտնվեն այդ անտառներից դուրս, իսկ խոտհարքերում (որոնք շատ դեպքերում անտառային բացատներն են) կատարվող գործողությունները չպետք է բացասաբար անդրադառնան սերմնային ինքնավերականգնման վրա, իսկ համեմատաբար բարձր թեությունների վրա գտնվող արոտավայրերի օգտագործումը չհանգեցնի էրոզիոն պրոցեսների ակտիվացմանը: Բնակավայրերից շատ մոտ գտնվող վերականգնման ենթակա տարածքների ցանկապատում՝ ընտանի կենդանիների մուտքն արգելելու նպատակով:

Անտառների պահպանության ուժեղացման, բնականոն վիճակի պահպանման, վիճակի բարելավման և կայուն կառավարման իրականացման նպատակով ամբողջ տարածքը բաժանվել է 38 պահաբաժինների (Աղյուսակ 63, քարտեզ 22):

Ամենամեծ պահաբաժնի մակերեսը 1491հա է (Արզնիի անտառապետություն, 2-րդ պահաբաժին), ամենափոքրինը՝ 103հա (Երևանի անտառապետություն, 2-րդ պահաբաժին), պահաբաժինների միջին մակերեսը՝ 649,9հա: Պահաբաժինների չափը սահմանվել է հաշվի առնելով բնական պայմանները, բնակավայրերից հեռավորությունը և նորմալ հսկողության իրականացման հնարավորությունները: Հսկողության տեսանկյունից առավել վտանգավոր՝ բանուկ ճանապարհներին նախատեսվում է տեղադրել մշտական և շարժական ուղեփակոցներ:

Աղյուսակ 64. Հրազդանի անտառտնտեսության պահաբաժինները

| № | Անտառպետության անվանումը | Պահաբաժնի համարը | Քառակուսու համարը | Մակերեսը, հա |
|---|--------------------------|------------------|--|--------------|
| 1 | Մեղրաձորի | 1 | 1,2,3,4,5-ի 1-5,7-10 հատվածները,15-ի 1-23,45,46 հատվածները | 1472 |
| | | 2 | 5-ի 6,11-15 հատվածները,6,7,8,15-ի 24-44 հատվածները,16 | 924 |
| | | 3 | 9,10-ի 4,8-12,18,19 հատվածները,17 | 1054,8 |
| | | 4 | 10-ի 1-3,5-7,13-17,20-62 հատվածները,11 | 1121,2 |
| | | 5 | 12 | 708 |
| | | 6 | 13,14-ի 1-27,41,42 հատվածները | 474,4 |
| | | 7 | 14-ի 28-40 հատվածները | 144,6 |
| | | 8 | 18 | 737 |
| | 9 | 19 | 551 | |
| | <i>Ընդամենը</i> | 9 | | 7187 |
| 2 | Ծաղկաձորի | 1 | 1,2 | 745 |
| | | 2 | 3,4-ի 1-55,57-59,61-63,66,67 հատվածները | 518,8 |
| | | 3 | 4-ի 56,60,64,65,68-89 հատվածները,5-8,11 | 803,2 |
| | | 4 | 12,14-ի 1-26,33-37,46,49,57,58 հատվածները | 258,3 |
| | | 5 | 13,14-ի 27-32,38-45,47,48,50-56 հատվածները,15 | 439,7 |
| | | 6 | 16,17,18-ի 11-14,16,20-25,30,31 հատվածները,20-ի 1-36 հատվածները | 381 |
| | | 7 | 18-ի 1-10,17-19,26-29,32-35 հատվածները,19, 20-ի 37-58 հատվածները | 319 |
| | | 8 | 9, 10 | 369 |
| | 9 | 21,22,23 | 169 | |
| | <i>Ընդամենը</i> | 9 | | 4003 |
| 3 | Արզականի | 1 | 54-ի 1-9 հատվածները, 55-ի 1-13 հատվածները, 56-ի 1-10,12 հատվածները, 57-ի 1-16,18 հատվածները, 58-ի 1-25 հատվածները | 330,1 |
| | | 2 | 54-ի 10-21 հատվածները,55-ի 14-21 հատվածները, 56-ի 11,13-25 հատվածները, 57-ի 17,19-23 հատվածները, 58-ի 26-53 հատվածները | 246,9 |
| | | 3 | 31,32,35,48,49 | 809 |
| | | 4 | 1-4,9,11,20,25-27 | 1366 |
| | | 5 | 5-8,10,12-15,21,22 | 1377 |
| | | 6 | 16-19,23,24,28-30,33,34 | 1373 |
| | | 7 | 36,37,50,52,53 | 924 |
| | | 8 | 38,39,51 | 452 |
| | | 9 | 40-47 | 1005 |
| | | 10 | 61 | 166 |
| | 11 | 59, 60 | 138 | |
| | <i>Ընդամենը</i> | 11 | | 8187 |
| 4 | Բուժականի | 1 | 1,3,8,10,11 | 570 |
| | | 2 | 2,4,5-7,9 | 784 |
| | 3 | 12-16 | 614 | |
| | <i>Ընդամենը</i> | 3 | | 1968 |
| 5 | Արզնիի | 1 | 1-4 | 936 |
| | | 2 | 5-9 | 1491 |

| № | Անտառպետության անվանումը | Պահաբաժնի համարը | Քառակուսու համարը | Մակերեսը, հա |
|------------------|--------------------------|------------------|-------------------|--------------|
| | Ընդամենը | 2 | | 2427 |
| 6 | Երևանի | 1 | 1,5 | 282 |
| | | 2 | 2,3,4 | 103 |
| | Ընդամենը | 2 | | 385 |
| 7 | Էրեբունու | 1 | 1 | 330 |
| | | 2 | 2 | 138 |
| | Ընդամենը | 2 | | 468 |
| Ընդհանուր | | 38 | | 24625 |

10.2. Կենդանական աշխարհի պահպանություն

10.2.1. Ձկներ

Որսագողության եւ անթույլատրելի ձկնորսության արդյունքում տեղաբնակ ձկնատեսակներից ոմանք, հատկապես կարմրախայտն, այսօր համարյա թե վերացել է, ընդ որում այդ տեսակը նախկինում մեծ նշանակություն է ունեցել բնակչության սննդակարգում: Ներկայումս այդ ձկնատեսակի գլխաքանակը գտնվում է ոչնչացման եզրին՝ տարբեր անթույլատրելի միջոցներ օգտագործելով (էլեկտրականություն, թունավոր նյութեր, այլն) գիշատչական գերորսի, ինչպես նաև գետի կենցաղային թափոններով աղտոտման և գյուղատնտեսական նպատակներով ջրառի արդյունքում:

Հրազդանի ստորին հոսանքում բնակվող ձկնատեսակների մեծ մասը չի հանդիպում Հրազդանի միջին եւ վերին հոսանքներում: Դրա հիմնական պատճառը Հրազդան գետի հունի վրա կառուցված հիդրոէլեկտրակայաններն ու զանազան պատվարներն, որոնց վրա հիմնականում նախատեսված չեն ձկնուղիներ եւ ձկնապաշտպան այլ կառուցվածքներ, հիմնական արգելք են հանդիսանում Արաքսից Հրազդան մտնող շատ ձկնատեսակների Հրազդանի հոսանքն ի վեր բնականոն գաղթի ճանապարհին:

Ձկնաշխարհի բնականոն կենսագործունեությունը ապահովելի տեսանկյունից, բացի վերը նշվածից, կարևորվում է ձկնաշխարհին սպառնացող հիմնական վտանգների՝ չկանոնակարգված ձկնորսության, ինչպես նաև գետերի աղտոտումը կենցաղային ջրերով բացառումը, ինչպես նաև որպես պոտենցիալ վտանգ կարող է հանդիսանալ անտառտնտեսության տարածքում և դրա անմիջական մոտակայքում ՀԷԿ-երի հնարավոր կառուցումը:

10.2.2. Թռչուններ

Հրազդանի անտառտնտեսության տարածքը առանձնանում է թռչնաշխարհի բազմազանությամբ, ընդ որում թռչունների 36 տեսակը գրանցված են Հայաստանի կենդանիների Կարմիր գրքում, որոնցից 11-ը ընդգրկված են նաև Բնության Պահպանության Միջազգային Միության Կարմիր ցուցակում: Այս տեսանկյունից առաջնահերթ պետք իրականացվեն այդ տեսակների պահպանությանը միտված համապատասխան միջոցառումներ, ինչպես օրինակ սապսանի, մարգահավի, փոքր

ենթարծիվի, կովկասյան մարեհավի, հայկական որորի: Որպես հիմնական վտանգ հանդիսանում է բնադրավայրերի ոչնչացում, ինչը արդյունք է ինտենսիվ ծառահատումների իրականացման, ընդ որում հասուն ծառերի հատումը խոչընդոտում է մեծ գիշատիչ թռչունների բնադրմանը: Նմանապես, մահացած փչակավոր ծառերի հատումը բացասաբար է ազդում անտառաբլերի և փչակներում բազմացող այլ հազվագյուտ տեսակների վրա: Գարնանային ու ամառային անտառահատումը խոչընդոտում է գիշատիչ և այլ մեծ տեսակի թռչունների բազմացմանը, որոնք առավել զգայուն են անհանգստության հանդեպ: Լրջագույն վտանգ է ներկայացնում նաև որսագողությունը: Պահպանության միջոցառումները ներառում են Հայաստանի կենդանիների Կարմիր գրքում, նաև Բնության Պահպանության Միջազգային Միության Կարմիր ցուցակում ընդգրկված թռչնատեսակների որսի դեպքերի բացառումը, ինչպես նաև պահպանել ՀՀ կառավարության կողմից հաստատված առանձին թռչնատեսակների որսի թույլատրության ժամկետներն ու քանակները: Պլանային հատումների իրականացման ժամանակ հատատեղերում պարտադիր պետք է թողնվեն 1 հեկտարում 2-5մ³ պաշարով հիմնականում հասուն տարիքի փչակավոր ծառեր:

Դեգրադացված անտառների վերականգնումը թռչնաֆաունայի վիճակի բարելավման կարևոր միջոցառումներից է:

10.2.3. Կաթնասուններ

Բնականոն կենսագործունեության ապահովման, տեսակների ապրելավայրերի քայքայման և դրանց վիճակի վատացման հիմնական պատճառներն են չհամակարգված ինտենսիվ հատումները և ապօրինի որսը:

Առաջնահերթ պահպանության կարիք ունեն Կարմիր գրքում գրանցված տեսակները: Վտանգված տեսակներից պետք է հատուկ ուշադրություն դարձնել ջրասամույրի (*Lutra lutra*) պահպանությանը: Այդ նպատակով անհրաժեշտ է իրականացնել տեսակի ապրելավայրերի դաշտային ուսունասիրություն և մոնիթորինգ:

Անհրաժեշտ է իրականացնել լրացուցիչ դաշտային ուսունասիրություններ ազնվացեղ եղջերուի ապրելավայրերում վերաբնակեցման հնարավորությունները:

Դեգրադացված անտառների վերականգնումը տեսակների վիճակի բարելավման կարևոր միջոցառումներից է:

10.3. Ճանապարհային ցանց

Կոտայքի մարզը, որտեղ հիմնականում տեղաբաշխված են Հրազդանի անտառտնտեսության անտառները, հանրապետության գլխավոր կոմունիկացիոն ուղիներին միացված է Երևան-Սևան ճանապարհով:

Անտառտնտեսական ճանապարհները բնութագրող հիմնական տարրերն են.

- Օգտագործման գոտի - հողաշերտի այն հատվածը, որի վրա կառուցված է ճանապարհը: Հողային շերտի լայնությունը կախված է ճանապարհի կարգից.

1-ին կարգ - 6,5մ և ավելի

2-րդ կարգ - 4,5-6,4 մ

3-րդ կարգ - 4,4մ և պակաս:

- Անցումային գոտի, որտեղով կատարվում է երթևեկությունը,

1-ին կարգ - 5,5մ և ավելի լայնություն

2-րդ կարգ - 3,5-5,4մ լայնություն

3-րդ կարգ - անցումային մասի լայնությունը հաշվի չի առնվում:

- Ջրատար առվակներ (կյուվետներ) - ջրհեռացման խողովակներ կառուցվում և տեղադրվում են ճանապարհի երկու կողմից և լայնությամբ մակերեսային և գրունտային ջրերի հեռացման համար, որոնց բացակայությունը ճանապարհների փչացման հիմնական պատճառն է:

- Հողային պաստառ - կողային առուների միջև ընկած հողաշերտն է, որի վրա կառուցվում է ճանապարհի երթևեկելի մասը: Խճով, բետոնով, ասֆալտ-բետոնով կամ որևէ այլ ամուր շինությունով կառուցվածներն ամուր պատվածքով ճանապարհ են: Շատ հաճախ անտառմիջյան ճանապարհները լինում են բնահողային:

Անտառտնտեսությունում անտառային ճանապարհները ծառայում են ինչպես անտառտնտեսական, այնպես էլ հակահրդեհային նպատակների համար և դժվար է դրանք տարանջատել:

Ճանապարհները հիմնականում փափուկ (բնահողային) գրունտով են, սեզոնային օգտագործման, թեև մի մասում պարբերաբար կատարվում է մասնակի վերանորոգում ամբողջ տարի օգտագործման նպատակով, սակայն ջրհեռացման կյուվետների, խողովակների և խճածածկի բացակայության հետևանքով ճանապարհների վիճակն անմխիթար է:

Ճանապարհային ցանցի ընդհանուր երկարությունը, որը կարելի է օգտագործել անտառտնտեսության տարբեր կարիքների համար, գնահատվել է 910կմ է, նույն թվում՝ հանրապետական նշանակության 78կմ, համայնքային նշանակության 552կմ և գրունտային անտառային ճանապարհներ՝ 280կմ: Ճանապարհների ձգվածությունը 1000հա-ի հաշվով կազմում 27կմ (Աղյուսակ 65, քարտեզ 23): Անտառկառավարման 10 տարիների համար նախատեսվում է անտառտնտեսական և հակահրդեհային նշանակության ճանապարհների վերանորոգում ընդհանուր 90կմ և կառուցում՝ 20կմ:

Աղյուսակ 65. Ճանապարհային ուղիների բնութագիրը

| № | Ճանապարհների տեսակները | Ճանապարհների երկարությունը, կմ |
|---|---|--------------------------------|
| 1 | Հանրապետական նշանակության | 78 |
| 2 | Համայնքային նշանակության | 552 |
| 3 | Անտառտնտեսական և հակահրդեհային նշանակության | 280 |
| 4 | Անտառտնտեսությունում | 910 |

10.4. Պահպանություն անտառային հրդեհներից

Անտառային հրդեհները լինում են գետնատարած, երբ այրվում է թափուկը, խաշամը, մամռային և խոտային ծածկույթը, շատ հաճախ նաև ենթանտառը, մատղաշը, իսկ սովորաբար ծառերը քիչ են վնասվում:

Շատ վտանգավոր է սաղարթային հրդեհը, երբ խաշամի, թափուկի հետ միասին այրվում է ծառերի սաղարթը, որի դեպքում այն ընթանում է թոփչքաձև:

Ելնելով եղանակային պայմաններից տարբերակվում են.

- Արտակարգ հրդեհավտանգ - երբ դիտվում է երկարատև տաք, չոր եղանակ և օդի միջին ջերմաստիճանը 20°-ից բարձր է, իսկ հարաբերական խոնավությունը 40%-ից ցածր:
- Ուժեղ հրդեհավտանգ - այն վայրերը, որտեղ երկար ժամանակ դիտվում է չոր եղանակ, երբեմն թույլ տեղումներով, իսկ հարաբերական խոնավությունը 40-60% է:
- Թույլ հրդեհավտանգ - երբ հաճախակի անձրևներ են տեղում և անտառային թաղիքը խոնավ է:
- Ոչ հրդեհավտանգ, երբ երկարատև անձրևներ են և հարաբերական խոնավությունը 80%-ից բարձր:

Անտառների հրդեհավտանգությունը բնորոշվում է անտառի տիպով, ծառատեսակների կենսաբանական առանձնահատկություններով:

Անտառի գույքագրման ընթացքում յուրաքանչյուր քառակուսու համար որոշվել է հրդեհավտանգության դասը և տվյալները մշակվել են համակարգչային ծրագրով, նույնիսկ ըստ հատվածների և քարտեզագրվել:

Անտառտնտեսության տարածքներում հրդեհավտանգության միջին դասը 2,7 է:

Անտառտնտեսությունում 1-ին հրդեհավտանգության տարածքները կազմում են ամբողջ տարածքի 7,8%-ը (1894հա), 4-րդ և 5-րդ դասերը 10,0% (2475հա), իսկ 2-րդ և 3-րդ հրդեհավտանգության դասերը համապատասխանաբար 32,2% (7943հա) և 50,0% (12323հա) (Աղյուսակ 66, քարտեզ 24):

Աղյուսակ 66. Տեղեկագիր անտառային հողերի տեղաբաշխման ըստ հրդեհավտանգության դասերի

| Անտառատեսակ | Հրդեհավտանգության դասը, հա | | | | | Ընդամենը | Միջին դասը |
|-------------|----------------------------|------|-------|-----|------|----------|------------|
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | | |
| Մեղրածոր | 774 | 1894 | 4294 | 169 | 56 | 7187 | 2,6 |
| Ծաղկածոր | 150 | 1087 | 2631 | 47 | 88 | 4003 | 2,7 |
| Արգական | 778 | 3508 | 3056 | 270 | 575 | 8187 | 2,5 |
| Բուժական | 32 | 634 | 1260 | 42 | | 1968 | 2,7 |
| Արգնի | 73 | 632 | 1010 | 53 | 659 | 2427 | 3,2 |
| Երևան | 67 | 128 | 25 | 54 | 111 | 385 | 3,3 |
| Էրեբունի | 20 | 60 | 37 | 125 | 226 | 468 | 4,0 |
| Ընդամենը | 1894 | 7943 | 12323 | 760 | 1715 | 24625 | 2,7 |
| %% | 7,7 | 32,2 | 50,0 | 3,1 | 7,0 | | |

Անտառտնտեսության կառավարման պլանի տասնամյա գործողությունների պլանում նախատեսվել են նախագույնացնող ցուցատախտակների տեղադրում, հանգստի և ծխելու տեղերի առանձնացում, ջրավազանների կառուցում, կրակմարիչների ձեռք բերում, հակահրդեհային ճանապարհների վերանորոգում, հանդիպումներ հարակից համայնքներում՝ հակահրդեհային իրազեկության բարձրացման և հակահրդեհային միջոցառումների իրականացման թեմաներով և այլն: Անհրաժեշտ է զարգացնել անտառային հրդեհներին արագ արձագանքման կարողությունները (Աղյուսակ 67):

Աղյուսակ 67. Տեղեկագիր հակահրդեհային միջոցառումների

| № | Միջոցառումներ | Չափի միավորը | Նախատեսվում է |
|------|---|--------------|---------------|
| 1. | Նախագույնական միջոցառումներ | | |
| 1.1. | Խորհրդակցություններ խոշորացված համայնքներում և բնակավայրերում | հանդիպում | 15 |
| 1.2. | Մշտական ցուցատախտակներ | հատ | 20 |
| 1.3. | Հանգստի և ծխելու տեղերի առանձնացում | հատ | 30 |
| 2. | Հակահրդեհային կառուցումներ | | |
| 2.1. | Հակահրդեհային ճեղքվածքների կառուցում | կմ | 2 |
| 2.2. | Հանքայնացված շերտերի կառուցում | կմ | 2 |
| 2.3. | Ջրավազանների կառուցում | հատ | 3 |
| 2.4. | Հակահրդեհային նշանակության ճանապարհների վերանորոգում | կմ | 20 |
| 3. | Հակահրդեհային սարքավորումների ձեռքբերում | | |
| 3.1. | Ավտոմեքենա | հատ | 1 |
| 3.2. | Մոտոցիկլետ | հատ | 3 |
| 3.3. | Կրակմարիչներ | հատ | 20 |
| 3.4. | Օժանդակ սարքավորումներ | լրակազմ | 4 |
| 4. | Կրակմարող կամավոր խմբերի կազմավորում | խումբ | 3 |

Բաժին 11 ԱՆՏԱՌՏԵՍԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Անտառտնտեսության կառավարման նպատակն է ապահովել համապատասխան մարդկային ռեսուրսներ և ստեղծել տեխնիկական հզորություններ կառավարման համար, ինչպես նաև հայթայթել ֆինանսավորման նոր աղբյուրներ՝ անտառտնտեսության կանոնադրական նպատակների իրականացման համար լրացուցիչ ֆինանսավորում ստանալու նպատակով:

«Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղի տնօրենի ենթակայությամբ առաջարկվում է ստեղծել մոնիթորինգի և գիտության միավոր (1 աշխատակից) և էկոլոգոսաշրջության միավոր (1 աշխատակից): Նրանք պետք է անցնեն հատուկ մասնագիտական վերապատրաստում և իրականացնեն արգելավայրի և ընդհանուր անտառտնտեսության համապատասխան գործառույթները:

Տնօրենի ենթակայությամբ հասարակայնության հետ կապերի պատասխանատուն պետք է համակարգի արգելավայրի և անտառտնտեսության իրազեկության և էկոլոգիայի աշխատանքները:

Տնօրենի ենթակայությամբ միջոցների համալրման պատասխանատուն պետք է իրականացնի ֆինանսավորման նոր աղբյուրների հայթայթման գործառույթը:

Անտառտնտեսության տնօրենը և հիմնական գործառույթներն իրականացնող պատասխանատուները պետք է սերտորեն համագործակցեն Անտառային կոմիտեի և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի համապատասխան բաժինների հետ և ստանան անհրաժեշտ աջակցությունը:

Անտառտնտեսության գործառույթների կազմակերպման և պատշաճ իրականացման համար անհրաժեշտ են համապատասխան մարդկային և տեխնիկական հզորություններ: Մասնավորապես անհրաժեշտ է անձնակազմի կարճաժամկետ և երկարաժամկետ վերապատրաստման ծրագրերի մշակում և իրականացում՝ անտառների և կենսաբազմազանության պահպանության և մոնիթորինգի, անտառի պաշտպանության, էկոլոգոսաշրջության զարգացման, ֆինանսական միջոցների համալրման և այլ ուղղություններով:

11.1. Անտառի և կենսաբազմազանության պահպանություն

Անտառների և կենսաբազմազանության պահպանությունն ուղղված է լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության բնականոն զարգացման ապահովմանը, լեռնային անտառային էկոհամակարգերի և դրանց բնորոշ հազվագյուտ և արժեքավոր բույսերի ու կենդանիների պահպանությանն ու վերարտադրությանը:

11.2 Մոնիթորինգ և գիտական ուսումնասիրություններ

Անտառտնտեսության տարածքում մոնիթորինգը և գիտական ուսումնասիրությունները կիրականացվեն «Հրազդանի անտառտնտեսություն»

մասնաճյուղի տնօրենի ենթակայությամբ ստեղծված մոնիթորինգի և գիտության միավորը Անտառային կոմիտեի և «Հայաստան» ՊՈԱԿ-ի գլխամասի համապատասխան պատասխանատուների հետ համատեղ և պետք է սերտորեն համագործակցի գիտական և ուսումնական հաստատությունների (ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա, համալսարաններ) և ՀԿ-ների հետ: Անհրաժեշտ է գտնել և ներգրավել այն հաստատությունները և հետազոտողներին, որոնք հետաքրքրված են հատկապես արգելավայրի տարածքում որոշակի տեսակների/էկոհամակարգերի վերաբերյալ թիրախային ուսումնասիրություններ իրականացնելու հարցում: Մոնիթորինգի դաշտային աշխատանքների իրականացմանն անհրաժեշտ է ներգրավել կամավորների՝ ՀԿ-ներ, դպրոցներ, համալսարանների ուսանողներ և այլն:

Անտառտնտեսության անձնակազմը պետք է աջակցի գիտնականներին, հետազոտողներին, կամավորներին՝ մոնիթորինգի և գիտական ուսումնասիրությունների դաշտային աշխատանքների իրականացման ընթացքում:

11.2.1 Մոնիթորինգի ծրագիր

Կենսաբազմազանության մոնիթորինգի համակարգի ներդրման հիմնական նպակակն է կանխատեսել բնական և մարդածին ազդեցությունների հետևանքով առաջ եկած գործընթացների զարգացումը և կատարել կանխատեսումներ դրանց հետագա ընթացքի վերաբերյալ: Ստացված մոնիթորինգային տվյալները պետք է օգտագործվեն անտառտնտեսության տարածքում իրականացվող կառավարման գործողություններում համապատասխան փոփոխություններ և շտկումներ կատարելու համար՝ ուղղված էկոհամակարգերի, բնական միջավայրերի և տեսակների պահպանությանը և բնականոն զարգացմանը:

Կենսաբազմազանության մոնիթորինգի խնդիրներն են.

- Բացահայտել կենսաբանական բազմազանության տեսակային կազմի, տարածվածության, քանակական ցուցանիշների, բնակության վայրերի, կենդանիների միգրացիոն ուղիների առկա վիճակը և միտումները:
- Բացահայտել յուրաքանչյուր էկոհամակարգի և դրա բաղադրիչների վրա մարդածին գործոնների ազդեցությունը:
- Գնահատել և կանխատեսել էկոհամակարգերի բաղադրիչների՝ կենսաբազմազանության և բնական ռեսուրսների քանակական և որակական փոփոխությունների ընթացքը:

Անհրաժեշտ է մշակել մոնիթորինգի ծրագիր: Այն կներառի ինդիկատորային տեսակների ընտրություն՝ էկոհամակարգերի վիճակի միտումները բացահայտելու համար, մոնիթորինգային արձանագրությունների մշակում, դիտակետերի և փորձահրապարակների որոշում և այլն: Անհրաժեշտ է ներդնել և վարել մոնիթորինգի տվյալների բազա և համակարգչային ծրագիր:

Մոնիթորինգի ենթակա կենդանատեսակներ կարող են հանդիսանալ կաթնասուններից՝ գորշ արջը (*Ursus arctos*), այծյամը (*Capreolus capreolus*) և վայրի

խոզը (*Sus scrofa*), թռչուններից՝ կովկասյան մարեհավը, իսկ սողուններից՝ լեռնատափաստանային և հայկական իժերը:

Զբոսաշրջության մոնիթորինգը պետք է ներառի արգելավայրի տարածքների զբոսաշրջիկների այցելության արդյունքում բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատում և ճիշտ կառավարում, ինչպես նաև մատուցվող ծառայության որակի գնահատում: Մասնավորապես, մոնիթորինգը պետք է անդրադառնա զբոսաշրջության ծրագրի շրջանակներում իրականացվող գործողություններին, որոնք հնարավոր վնաս կարող են հասցնել էկոհամակարգերի ամբողջականությանը: Անհրաժեշտ է ստեղծել զբոսաշրջության տեղեկատվական բազա GIS համակարգով:

Անհրաժեշտ է ստեղծել մոնիթորինգ իրականացնող անձնակազմի և տեխնիկական հզորություններ: Անհրաժեշտ է կազմակերպել գործնական դասընթացներ անտառտնտեսության համապատասխան մասնագետների և անտառապահների համար:

11.2.2 Գիտական ուսումնասիրություններ

Գիտական ուսումնասիրությունները նպատակաուղղված են հիմնական գործառույթների՝ կենսաբանական և լանդշաֆտային բազմազանության ու պատմամշակութային և բնության ժառանգության պահպանության արդյունավետ իրականացմանը:

Գիտահետազոտական աշխատանքների արդյունքում ստացված տեղեկատվությունը կիրառվում է բնապահպանական միջոցառումների պլանավորման, այդ թվում էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների պահպանության ու վերականգնման, և դրանց արդյունավետության գնահատման համար, պահպանվող համակարգերի և օբյեկտների վիճակի գնահատման և կանխատեսման, մոնիթորինգի իրականացման, էկոլոգիական հարցերի լուսաբանման, տուրիզմի և ռեկրեացիայի, ինչպես նաև իրականացվող տնտեսական գործունեության ազդեցության գնահատման համար:

Գիտական ուսումնասիրությունները իրականացվելու են կազմակերպության համապատասխան մասնագետների միջոցով: Նրանք պետք է համագործակցեն գիտնականների և հետազոտողների հետ՝ աջակցելով նրանց ու տրամադրելով տեխնիկական օգնություն դաշտային աշխատանքներում: Գիտական և հետազոտական աշխատանքները պետք է իրականացվեն անտառների կառավարման համար կարևոր ոլորտների բացահայտմամբ և առաջնայնությունների սահմանմամբ՝ համագործակցելով համապատասխան մասնագետների հետ:

Ելնելով վերոհիշյալից, 2023-2032թթ-ի գիտական ուսումնասիրությունների ծրագրում առաջարկվում է ներառել.

- Հայաստանի բույսերի և կենդանիների Կարմիր գրքում ընդգրկված բուսական ու կենդանական աշխարհի ներկայացուցիչների դաշտային ուսումնասիրություններ

(գույքագրման իրականացում, թվաքանակի հաշվառման և պոպուլյացիաների գնահատման աշխատանքներ)՝ հատուկ ուշադրություն դարձնելով առավել վտանգված տեսակների հայտնաբերմանը,

- կենսաբազմազանության տվյալների բազայի ստեղծում/վարում և պահպանման ու հարստացման նպատակով արժեքավոր և հազվագյուտ տեսակների հավաքածուների կազմում,
- հազվագյուտ և վտանգված տեսակներից կազմված էկոհամակարգերի (ծառուտների) և դրանց ինքնավերականգնման ու ինքնակարգավորման հնարավորությունների բարձրացման ուսումնասիրություններ և դրանց վիճակի բարելավման լրացուցիչ միջոցառումների նախատեսում,
- կլիմայի փոփոխության նկատմամբ անտառների խոցելիության և հարմարողականության բարձրացման ուսումնասիրություններ և կոնկրետ միջոցառումների նախատեսում,
- ինվազիվ և էքսպանսիվ բուսատեսակների ուսումնասիրություններ և բնական էկոհամակարգերի վրա դրանց ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունների նախատեսում,
- անտառային էկոհամակարգերի կողմից տրամադրվող էկոհամակարգային ծառայությունների ուսումնասիրություններ, ներառյալ օգտակար բուսատեսակների պաշարների, ածխածնի կուտակման և այլ ուսումնասիրությունները:

Աղյուսակ 68. Պահպանության և մոնիթորինգի իրականացման համար անհրաժեշտ միջոցներ

| № | Սարքավորում, գույք | Քանակը |
|----|---|--------|
| 1 | Ամենագնաց մեքենա | 1 |
| 2 | Ձիեր և հավելյալ միջոցներ (3-ական յուրաքանչյուր անտառպետության համար) | 12 |
| 3 | Մշտական ուղեփակոցներ | 8 |
| 4 | Շարժական ուղեփակոցներ | 10 |
| 5 | GPS սարքեր | 8 |
| 7 | Ֆոտո/վիդեո նկարահանման սարք | 1 |
| 8 | Հեռադիտակ | 14 |
| 9 | Գիշերային հսկման հեռադիտակ | 7 |
| 10 | Տեսահսկման համակարգեր՝ տեսախցիկներ | 6 |
| 11 | Ամառային համազգեստ | 46 |
| 12 | Ձմեռային համազգեստ | 46 |
| 13 | Անտառապահների սարքավորումների հավաքածու (բահ, դանակ, լապտեր, ուսապարկ, առաջին օգնության պարագաներ և այլն) | 40 |
| 14 | Գրասենյակային սարքավորումներ (համակարգիչ, տպիչ, սկաներ և այլն) | 1 |

Բաժին 12. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հրազդանի անտառտնտեսությունում 2018-2021 թվականներին պաշտոնական հաշվետվությամբ բնափայտային արտադրանքի ընդհանուր ծավալը կազմել է 2273,23խտմ³, գումարային արտահայտությամբ՝ 7294,91 հազ. դրամ, նույն թվում հատումներից՝ վառելափայտը 2008,56խտմ³, 5740,613 հազ. դրամ, շինափայտը 264,67խտմ³, 1554,3 հազ. դրամ, թափուկ բնափայտը՝ ընդհանուր 11239խտմ³ (Աղյուսակ 69):

Աղյուսակ 69. Ամփոփագիր Հրազդանի անտառտնտեսության բնափայտային արտադրանքների ծավալների (2018-2021թթ)

| № | Արտադրանքի տեսականին | Տարեթիվը | | | | | | | | Ընդամենը | |
|-----|--------------------------|-------------------------|---------------|-------------------------|---------------|-------------------------|---------------|-------------------------|---------------|-------------------------|---------------|
| | | 2018 | | 2019 | | 2020 | | 2021 | | | |
| | | ծավալը խտմ ³ | արժեքը հազ.դր | ծավալը խտմ ³ | արժեքը հազ.դր | ծավալը խտմ ³ | արժեքը հազ.դր | ծավալը խտմ ³ | արժեքը հազ.դր | ծավալը խտմ ³ | արժեքը հազ.դր |
| 1 | Վառելափայտ, նույն թվում, | 190,28 | 183,143 | 678,81 | 2408,2 | 521,21 | 1980,7 | 313,3 | 1168,57 | 2008,56 | 5740,61 |
| 1.1 | Հատումներից | 190,28 | 183,143 | 678,81 | 2408,2 | 521,21 | 1980,7 | 313,3 | 1168,57 | 2008,56 | 5740,61 |
| 1.2 | Թափուկից | - | - | 4057 | - | 4101 | - | 3081 | - | - | - |
| 2 | Շինափայտ | 6,5 | 19,26 | 101,79 | 784,0 | 86,3 | 587,04 | 24,1 | 164,0 | 264,67 | 1554,3 |
| 2.1 | Հատումներից | 6,5 | 19,26 | 101,79 | 784,0 | 86,3 | 587,04 | 24,1 | 164,0 | 264,67 | 1554,3 |
| 2.2 | Թափուկից | | | | | | | | | | |
| 3 | Ամբողջը | 196,78 | 202,403 | 780,6 | 3192,2 | 1108,25 | 2567,74 | 337,4 | 1332,57 | 2273,23 | 7294,91 |

Կառավարման պլանի պատրաստմանը նախորդող երկու տարիներին անտառտնտեսական աշխատանքները դրամական արտահայտությամբ կազմել են համապատասխանաբար 2020թ.՝ 606,90հազ. դրամ և 2021թ.՝ 960,96 հազ. դրամ:

Ընդհանուր արտադրական ծախսերը չեն արվել:

Անտառային եկամուտ, ընդամենը՝ 40202,853 հազ. դրամ, որից

- բնափայտի արտադրությունից 6244,72 հազ. դրամ,
 - անտառի կողմնարդյունքից (խոտհարք և վարձավճար) 36953,593 հազ. դրամ
- Պետբյուջեից ֆինանսավորում՝ 2020թ.՝ 75452,33 հազ. դրամ, 2021թ.,-ին՝

56226,43 հազ. դրամ (Աղյուսակ 70):

Աղյուսակ 70. Տեղեկագիր նախորդող երկու տարիներին իրականացված հիմնական աշխատանքների և ծախսերի ծավալների

| Գործունեության և ծախսերի անվանումը | Ծախսերը, հազարդրամ | |
|--|--------------------|---------|
| | 2020թ. | 2021 թ. |
| Անտառտնտեսական գործունեություն փայտանյութի պատրաստմ Ա/Ձ կամ բանվ | - | - |
| Անտառտնտեսական աշխատանքներ (Ճանապարհի կառուց) | - | - |
| Անտառմշակության աշխատանքներ | 606,9 | 960,96 |
| Անտառպաշտպանական և անտառպահպանական աշխատանքներ | - | - |
| Ընդհանուր արտադրական ծախսեր | - | - |
| • Արտադրական ծախսեր | - | - |
| • Փայտանյութի արտահանում, մ ³ | - | - |
| նույնթվում շինափայտ, մ ³ | - | - |
| վառելափայտ, մ ³ | - | - |
| • Շինափայտի վերամշակում, մ ³ | - | - |

| Գործունեության և ծախսերի անվանումը | Ծախսերը, հազար դրամ | |
|---|---------------------|-----------|
| | 2020թ. | 2021 թ. |
| • Անտառի կողմնարդյունք, հազ. դրամ | - | - |
| Անտառային եկամուտ, ընդամենը ըհազ. դրամ, որից | 22409,415 | 17793,438 |
| • Բնափայտի արտադրությունից | 3086,34 | 3158,38 |
| • Սղոզանյութի արտադրությունից | - | - |
| • Անտառի կողմնարդյունքից (խոտհարք+վարձավճարներ) | 19323,075 | 17630,518 |
| Պետբյուջեից ֆինանսավորում, հազ. դրամ | 75452,33 | 56226,43 |

Աղյուսակ 71. Հրազդանի անտառտնտեսության հաստիքային ցուցակ՝ առ 15.10.2021թ

| № | Պաշտոնի անվանումը | Հաստիքային միավորի քանակը | Պաշտոնային դրույքի չափը | Աշխատավարձի ֆոնդը ամսական, դրամ |
|-----------------|-----------------------------------|---------------------------|-------------------------|---------------------------------|
| 1 | Տնօրեն | 1 | 360000 | 360000 |
| 2 | Անվագ անտառապետ | 1 | 250000 | 250000 |
| 3 | Տնօրենի տեղակալ պահպանության գծով | 1 | 190000 | 190000 |
| 4 | Տնտեսագետ | 1 | 180000 | 180000 |
| 5 | Գործավար, կադրերի տեսուչ | 1 | 115000 | 115000 |
| 6 | Անտառային կուլտուրաների ինժեներ | 1 | 140000 | 140000 |
| 7 | Անտառպահպանության ինժեներ | 1 | 130000 | 130000 |
| 8 | Տնկարանի վարիչ | 1 | 190000 | 190000 |
| 9 | Տնկարանի տեխնիկ | 1 | 135000 | 135000 |
| 10 | Անտառային տեխնիկ | 1 | 115000 | 115000 |
| 11 | Պահեստապետ | 1 | 115000 | 115000 |
| 12 | Անտառապետ, ընդամենը | 7 | | 1140000 |
| 13 | Անտառապահ, ընդամենը | 38 | | 4965000 |
| 14 | Արգականի անտառապետ | 1 | 170000 | 170000 |
| 15 | Անտառապահ, 1,2,3,5,10 | 5 | 135000 | 675000 |
| 16 | Անտառապահ, 4,6,7,8,9,11 | 6 | 130000 | 780000 |
| 17 | Ծաղկաձորի անտառապետ | 1 | 160000 | 160000 |
| 18 | Անտառապահ, 1,2,3,6,9 | 5 | 135000 | 675000 |
| 19 | Անտառապահ, 4,5,7,8 | 4 | 130000 | 520000 |
| 20 | Մեղրաձորի անտառապետ | 1 | 160000 | 160000 |
| 21 | Անտառապահ, 2,4,5,6,8 | 5 | 135000 | 675000 |
| 22 | Անտառապահ, 1,3,7,9 | 4 | 130000 | 520000 |
| 23 | Արզնիի անտառապետ | 1 | 140000 | 140000 |
| 24 | Անտառապահ, | 2 | 125000 | 250000 |
| 25 | Բուժականի անտառապետ | 1 | 150000 | 150000 |
| 26 | Անտառապահ | 3 | 130000 | 390000 |
| 27 | Երևանի անտառապետ | 1 | 180000 | 180000 |
| 28 | Անտառապահ | 2 | 120000 | 240000 |
| 29 | Էրեբունու անտառապետ | 1 | 180000 | 180000 |
| 30 | Անտառապահ | 2 | 120000 | 240000 |
| 31 | Պոմպակայանի մեքենավար-պահակ | 2 | 105000 | 210000 |
| 32 | Փականագործ | 1 | 105000 | 105000 |
| 33 | Հավաքարար | 1 | 105000 | 105000 |
| 34 | Պահակ | 3 | 105000 | 315000 |
| 35 | Վարորդ, մեքենավար | 1 | 140000 | 140000 |
| Ընդամենը | | 64 | | 8 900 000 |

Բաժին 13. ԱՆՏԱՌՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽՈՐԴ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

13.1 Եզրակացություն նախորդ անտառտնտեսվարման վերաբերյալ

Անտառտնտեսության ընդհանուր մակերեսը 1990թ-ի համեմատությամբ 2022թ. ավելացել է 5260 հեկտարով, անտառածածկի մակերեսը 3965,9 հեկտարով, ինչը բացատրվում է նախկին սովխոզ-կոլխոզային անտառների՝ անտառտնտեսությանը միացմամբ, շրջակա բնակավայրերի կադաստրային և անտառտնտեսության ընթացիկ գույքագրմամբ անտառային հողատեսքերի ու սահմանների ճշտմամբ: Նշված ժամանակաշրջանում անտառածածկ մակերեսն ավելացել է ընդհանուր 3965,9 հեկտարով, իսկ ընդհանուր պաշարը՝ 159923 խտմ³-ով:

Անտառտնտեսության 1990թ. կառավարման պլանի անտառի գույքագրման և գնահատման տվյալներով անտառի միջին տարիքը եղել է 58, իսկ 2022թ-ին այն մնացել է նույնը, ինչը բացատրվում է հիմնականում անտառտնտեսությանը միացված տարածքներում երիտասարդ տարիքային խմբի ծառատների առկայությամբ, ինչպես նաև նախկին տասնամյակներում իրականացված չհամակարգված հատումներով: Վերջինս ապացուցվում է նաև անտառածածկ մակերեսի 1 հեկտարի միջին պաշարի նվազումով՝ 1990թ. 84խտմ³-ից 2022թ. նվազել է մինչև 73խտմ³:

Էական փոփոխությունների է ենթարկվել ծառատի միջին կազմը՝ 1990թ՝ 7,6կաղնի, 1,0սոճի, 0,5լորենի, 0,5կեչի, 0,2բոխի, 0,1հացի, 0,1թեղի: 2022թ. ծառատի կազմը՝ 6,0կաղնի, 1,1բոխի, 0,6սոճի, 0,5հացի, 0,5կեչի, 0,4լորենի, 0,4թխկի, 0,1թեղի, 0,1կաղամախի, 0,1ուռի ծառանման, 0,1գիհի, 0,1նշենի:

Խիստ կրճատվել է 1-3 հասակային դասերի մակերեսը՝ 4588հա-ից 2562,0հա, ինչից կարելի է հետևություն անել, որ նախորդ տարիներին բավարար ծավալներով անտառհիմնման աշխատանքներ չեն իրականացվել:

Չհամակարգված հատումների արդյունք է ցածրաբուն բոխու գերակշռությամբ ծառատների մակերեսի ավելացումը 872 հեկտարով, բարձրաժեք լորենու գերակշռությամբ ծառատների մակերեսի գրեթե կրկնակի կրճատումը՝ 313,2 հեկտարով:

Գիհու գերակշռությամբ ծառատների մակերեսի 228,9 հեկտարով ավելացումը բացատրվում է նախկինում անտառտնտեսության կազմում չընդգրկված գիհուների ընդգրկմամբ:

Անտառտնտեսությունում հասուն և գերհասուն ծառատները զբաղեցնում են ընդամենը 1367,9հա մակերես, ընդ որում ցածրաբուն կաղնին 804,9հա, նշենին 428,1հա:

Թեև տարածաշրջանի անտառներում զգալի է անտառային պտղատու և հատապտղային տեսակների տարածվածությունը և ակնկալվող բերքը, սակայն անտառի կողմնարդյունքը անտառտնտեսության կողմից չի մթերվում:

Անտառտնտեսության կառավարման տարածքներում, նաև արգելավայրային և Երևանի քաղաքամերձ գոտիներում առկա են քարհանքեր, որոնց գործունեությունը էական վտանգ է ներկայացնում էկոլոգիական հավասարակշռության պահպանմանը:


ՀՍՀՄ մինիստրների սովետի 1971թ. ապրիլի 9-ի N212 կարգադրությամբ ստեղծված «Արզական-Մեղրածորի» պետական արգելավայրը չունի հաստատված կանոնադրություն, ինչն էլ էականորեն խոչընդոտում է արգելավայրային ռեժիմի պահպանմանն ու կայուն կառավարման իրականացմանը:

13.2 Առաջարկություններ


1. Քայքայված անտառների վերականգնման նպատակով նախատեսած տարածքներում անտառվերականգնման համալիր միջոցառումների իրականացում:
2. Անտառային տարածքների գոյքագրման և գնահատման արդյունքներով համայնքների կադաստրային քարտեզագրման հետ բացահայտված անհամապատասխանությունները և ճշտված քարտեզները սահմանված կարգով ներկայացնել՝ համապատասխան գերատեսչություններում ամրագրելու նպատակով:
3. Առանձնակի ուշադրություն դարձնել հակահրդեհային միջոցառումների իրականացմանը, հատկապես նախազգուշական, հրդեհաշիջման համապատասխան գործիք-սարքավորումների ձեռք բերմանը:
4. Անտառմշակույթների հիմնում իրականացնել.
 - I-IV բոնիտետների 1 հա մակերեսից ավելի բացատներում, 1հա-ից պակասը հիմնականում վերագրել լանդշաֆտային փոքր բացատներին և թողնել ինքնավերականգնման,
 - հատված տարածքներում և նոսրուտներում 1հա-ից պակասը թողնել ինքնավերականգնման,
 - հանքայնացման եղանակով բնական վերածին օժանդակող միջոցառումներ (հարթակների պատրաստում և սերմերի ցանք) իրականացնել նաև ոչ մեծ թեքության նոսրուտներում և ցածր լրիվության ծառուտներում:
 - Անտառվերականգնման միջոցառումներ նախատեսվող հատկապես համայնքամերձ տարածքները հնարավորության դեպքում մեկուսացնել՝ անասունների արածացումը բացառելու նպատակով: Ցանկապատումը կատարել մետաղյա փշալարով:
7. Առաջիկա անտառկառավարման ժամանակաշրջանում բավարար ուշադրություն դարձնել անտառի կողմնարդյունքի օգտագործմանը:
8. Անտառտնտեսության տարածքում համաձայն «Հայաստանի բարձր բնապահպանական արժեք ունեցող անտառների ընտրության և առանձնացման գործնական ուղեցույցի 2016թ» սահմանազատված անտառներում իրականացնել համապատասխան միջոցառումներ:

9. Անտառային հողերում տեղակայված բնական էկոհամակարգերի կայունության և էկոլոգիական հավասարակշռության պահպանմանը խանգարող հանքավայրերում իրականացնել ռեկուլտիվացիա և անտառմշակույթների հիմնում:
10. Պատրաստել և հաստատման ներկայացնել «Արզական-Մեղրաձորի» պետական արգելավայրի կանոնադրությունը և իրականացնել ճշտված սահմաններով պետական արգելավայրի տարածքում արգելավայրային ռեժիմի պահպանման ու կայուն կառավարման համապատասխան գործընթացը:


Քարտեզ 1. Անտառտնտեսության տեղադրությունը




Քարտեզ 2. Անտառտնտեսության անտառապետությունները




Քարտեզ 3. Անտառտնտեսության քառակուսային ցանցը




Քարտեզ 4. Անտառտնտեսության տարածքն ըստ հիմնական նպատակային նշանակության




Քարտեզ 5. Անտառտնտեսության տարածքն՝ ըստ գլխավոր ծառատեսակների




Քարտեզ 6. Անտառտնտեսության ռելիեֆը




Քարտեզ 7. Անտառտնտեսության տարածքն՝ ըստ լանջի կողմնադրության




Քարտեզ 8. Անտառտնտեսության տարածքն՝ ըստ լանջերի թեքության




Քարտեզ 9. Անտառտնտեսության տարածքն՝ ըստ տարիքային խմբերի




Քարտեզ 10. Անտառոտնտեսության տարածքն՝ ըստ բնիտետային դասերի




Քարտեզ 11. Անտառոտնտեսության տարածքն՝ ըստ ծառուտի լրիվության




Քարտեզ 12. Անտառոտնտեսության տարածքն՝ ըստ հասակային դասերի




Քարտեզ 13. Անտառտնտեսության հարակից համայնքները




Քարտեզ 14. Անտառտնտեսության տարածքում հանդիպող կարմիրգրքային բույսերի




Քարտեզ 15. Անտառտնտեսության տարածքում հանդիպող կարմիր գրքային կենդանիների




Քարտեզ 17. «Արզական-Մեղրաձորի» արգելավայրի հողերի գործառնական նշանակությունը




Քարտեզ 18. Անտառտնտեսության ԲԲԱ անտառները




Քարտեզ 19. Անտառոտնտեսության տարածքում հանդիպող պտուղ-հատապտուղները



Քարտեզ 21. Անտառնտեսության էկոերթուղիները



Քարտեզ 22. Անտառտնտեսության պահպարժինները



Քարտեզ 24. Անտառոտնտեսության տարածքն՝ ըստ հրդեհավտանգության դասերի

